Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Հայ գրականություն, Թատերգություն
13+

Շիրվանզադե
Ավերակների վրա

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱԹԱՆԵՍ ՖՈՒԱՆԳՈՒԼՅԱՆ, հայտնի վաճառական — 60 տարեկան:

ՆԱՐԳԻԶ, նրա ամուսինը — 50 տարեկան:

ԼԵՎՈՆ, նրանց մեծ որդին — 27 տարեկան:

ՍԱՄՎԵԼ, նրանց երկրորդ որդին — 22 տարեկան:

ՕՎՍԱՆՆԱ, նրանց աղջիկը — 23 տարեկան:

ԱՐԱՄԱԶԴ ԱՂԱՎԵԼՅԱՆ, Աթանեսի նախկին գործակատարը, հետո խոշոր ձեռնարկող — 33 տարեկան:

ՆՈՅԻՄԶԱՐ, Արամազդի քույրը, անզավակ այրի — 32 տարեկան:

ԼԵՅԼԻ, Արամազդի երկրորդ քույրը, օրիորդ — 21 տարեկան:

ԳԵՎՈՐԳ ԱԴԻԼԲԵԿՅԱՆ, որին հասարակորեն կոչում են Ժորժ, Լևոնի գիմնազիական ընկերը և Օվսաննայի նշանածը — 28 տարեկան:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ ՄԵԼԻՔ-ԱՂԱՋԱՆՅԱՆ, Արամազդի գործընկերը — 38 տարեկան:

ՆՈՒՆՈՒՖԱՐ, Ֆռանգուլյանների աղախինը:

ՋԱՎԱԴ, նախ Ֆռանգուլյանների, հետո Արամազդի ծառան-37 տարեկան:

Թութակ, թռչուն վանդակի մեջ Աղավելյանների տանը:

Գործողությունը կատարվում է 189... թվականներին: I և III արարվածները ու IV արարվածի երկրորդ պատկերը կատարվում են Ֆռանգուլյանների տանը, II արարվածը և IV-ի առաջին պատկերը՝ Աղավելյանների տանը:

ԱՐԱՐՎԱԾԱՌԱՋԻՆ

Տեսարանը ներկայացնում է Ֆռանգուլյանների բնակարանը: Մեծ սենյակ, կահավորված հարուստ, բայց հնաձև կահ-կարասիով:

Աջ պատի մեջ երկու դռներ, որոնցից առաջինը տանում է Աթանեսի սենյակը, երկրորդը, որ գրեթե անկյունումն է գտնվում, դեպի նախասենյակը: Խորքի պատի մեջ դռներ, որ տանում են սեղանատուն և այնտեղից բնակարանի խորքը: Ձախ պատը ներկայացնում է երկու հնաձև լուսամուտներ, մեջտեղ ապակյա դռներ, դեպի պատշգամբ՝ փողոցի վրա;

Բեմի մեջտեղում հին ձևի թանկագին դրվագյալ (iucruste, врезной) սեղան, առանց ծածկոցի, վրեն մի մեծ, սևացած արծաթյա ափսե, մեջն այցետոմսեր: Սեղանի քով ընկուզենյա ծանր աթոռներ: Աջ պատի առջև, երկու դռների միջև գահավորակ, առջևը փոքրիկ սեղան սփռոցով ծածկված, քովը երկու բազկաթոռ: Խորքի պատի առջև, դռների ձախ կողմում վառարան, վրեն հնաձև ժամացույց, աջ կողմում թախտ, ծածկված Խորասանի թանկագին գորգերով, որի մի ծայրը հատակն է ծածկում, մյուսը՝ պատը մինչև առաստաղ: Թախտի վրա ոսկեթել հյուսվածքով ծածկված բարձեր: Ամենուրեք թանկագին և զանազան երկրների գորգեր, որոնք սենյակի գլխավոր զարդն են կազմում: Պատերի վրա վերջին կաթողիկոսների պատկերներն ու կոնդակները:

Դաշնամուրը դրած է ձախ պատի առջև, դեպի ավանսցեն: Դրսում, պատշգամբի վրա ծաղկամաններ և բույսեր, որոնք, բավական խտատերև լինելով, կանաչեղենի մի թուփ են կազմում:

ՏԵՍԻԼ 1

ՁԱՎԱԴ ԵՎ ՆՈՒՆՈՒՖԱՐ

Վաղ գարուն է, առավոտ: Լուսամուտները բաց են, վարագույրները ետ քաշած: Արեգակի հարուստ ճառագայթները տարածվել են ներս և հետզհետե առաջ գալով, հասնում են մինչև բեմի կեսը և ապա, տեսարանի ընթացքում կրճատվելով, կամաց-կամաց չքանում են:

Բեմի ետևից լսվում է ջութակի մեղմիկ և դանդաղ ձայնը: Սամվելն է յուր սենյակամ նվագում:

ՁԱՎԱԴ. (Վարագույրը բարձրանալիս պատշգամբի վրա ցնցուղով ջրում է ծաղիկներն ու բույսերը):

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Գալիս է աջ կողմի երկրորդ դռներից մի մեծ սպիտակ լաթ ձեռին և սկսում է արագ-արագ սրբել կահ-կարասին: Նիհար թուխ-թուխ կին է, ժամանակից առաջ թառամած: Հագած է մաքուր շրջազգեստ օրվա տոնի առիթով, կրծքին կապած է սպիտակ գոգնոց): Մի քանի վայրկյան լուռ գործողություն:

ՁԱՎԱԴ. (Հանկարծ ներս է ցատկում պատշգամբից կոմիկական թռիչքով, ջրի ցնցուղը ձեռքին: Ժպտուն, անհոգ դեմքով, վառվռուն աչքերով և սև, հաստլիկ բեղերով: Հագած է կապտագույն արխալուղ, վրեն կինեմոնագույն պիջակ, մեջքին արծաթյա գոտի: Վզով գցած է ժամացույցի մի երկայն արծաթյա շղթա: Խոսելիս ձեռներով, գլխով և մանավանդ ուսերով

համապատասխան շարժումներ անում: Դիմախաղը վերին աստիճանի հարուստ է): Վա՛յ բաջի, տունս քանդվեց:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Միանգամայն անվրդով, առանց գործն ընդհատելու): Հըմ, էլի ին՞չ օձ կծեց:

ՋԱՎԱԴ. Թուրքի գլխին ջուր թափեցի:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Ծիծաղում է): Այ անշնո՛րհք:

ՋԱՎԱԴ. Յավաշ տեսնեմ ինչ է անում, (Գլուխը դուրս է բերում պատշգամբի դռներից, չհամարձակվելով ամբողջ մարմնով դուրս գալ): Գե՛ղ, գե՛ղ: (Բռունցք է ցույց տալիս):

ՆՈՒՆՈՒՖԱՐ. Ուշունց է տալիս,

ՋԱՎԱԴ. Շատ թունդ: Գե՛դ: Շիշ փափաղը թրջվել է: Արախչինը բաց է արել, կանդազն երևում է: Գե՛դ: Ահը, հեռանում է, գնաց: Լավ պրծանք: Ախար, ո՞վ է տեսել, որ ծառերը բերեն, հավաքեն տանը: Դա էլ ռուսից սովորեցինք: (Նորից ուզում է պատշգամբ դուրս գալ, բայց հանկարծ, եղանակով, հափշտակված, կանգ է առնում և հիացմամբ նայում է դեպի պատշգամբ: Կարճ լռություն): Նունուֆար:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. Ասա :

ՋԱՎԱԴ. Ախր, մի տե՛ս է:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. Էլի գժությունդ բռնեց:

ՋԱՎԱԴ. Գարունն եկավ նախշուն թևերով: Աղբաթս խառնեց պես-պես ձիերով: Մին մտիկ արա է, այս պայծառ արևին, կապույտ երկնքին: Հրե՛ն է, նավը թևերը բաց արած լողում է կանաչ ծովի վրա նորահարսի պես: Ա՛խ, այդ Սամվել աղան էլ որ ջութակ չի ածում, սիրտս մղկտ-մղկտ է անում: Բայց ինչ էլ որ լինի, մեր գարունքի տեղը չի բռնիլ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. Հը՛ը, էլի սկսեցիր Շամախին գովել:

ՋԱՎԱԴ. (Ցնցուղը դնելով հատակի վրա:) Տես, Նունուֆար, աշխարհում տեղ չի մնացել ոտքիս տակովն արած չլինեմ: Ծովի այս կողմից չեմ խոսում, աա, այն կողմից: Տես, դա Կրասնոսկի, դա Չարջիվ, դա Խիվա: Էմիրը չէ, էմիրի չալման եմ տեսել, մինչև Սամարղանդ հասել եմ, Շամախիի պե՛ս քաղաք... աստաֆուռուլլա՛: (Ցնցուղը ծուլորեն վերցնում է): Երեկ էլի մին մուխամազ գրեցի: Քնար Հայկականը կարդացել ես:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. Չէ:

ՋԱՎԱԴ. Սայաթ Նովա՞ :

ՆՈՒՆՈՒՖԱՐ. Չէ:

ՋԱՎԱԴ. Զարգյա՞րն ինչպես:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. Նրան էլ չեմ կարդացել:

ՋԱՎԱԴ. Է՛հ, դե դա է պատճառը, որ պատիվ չես անում ինձ էլի:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. Ինչո՛ւ, դու ո՞վ ես որ:

ՋԱՎԱԴ. Ե՛ս, հը, ես շահիր-Ջավադն եմ: Այ, այս մեծությամբ դավթարներ ունիմ շարադրած, դես մտիկ արա, Շամախին մինչև օրս երկու մարդ է տվել, մինը Զարգյարն է, մինն էլ ես, ուրիշը չկա, լավ իմացիր: (Ուզում է գնալ պատշգամբ, բայց լսելով Նարգիզի ձայնը, նորից կանգ է առնում):

ՏԵՍԻԼ 2

ՆՈՒՅՆՔ և ՆԱՐԳԻԶ, հետո ՕՎՍԱՆՆԱ

ՆԱՐԳԻԶ. (Բեմի ետեից): Ջավա՛դ, Ջավա՛դ:

ՋԱՎԱԴ. Այստեղ եմ, խանում: (Տեղից չի շարժվում):

ՆԱՐԳԻԶ. (Երևում է խորքի դռների մեջ: Լիք-լիք, բայց դեղնած թշերով կին է, հպարտ քայլվածքով և հրամայողական, գոռոզ ձևերով: Հագած է տոնային շրջազգեստ, ուսերին գցած է քիրմանի շատ ընտիր շալ: Ալեխառն մազերը սանրած են հարթ): Շուտ արա, բազար գնա, աղաղ դռների մոտ քեզ է սպասում:

ՋԱՎԱԴ. Ծիծեռնակի պես թռա: (Դանդաղորեն քայլերն ուղղում է դեպի երկրորդ դռները):

ՆԱՐԳԻԶ. Եթե թազա ձուկ բերել են, թող մի հատ առնի:

ՋԱՎԱԴ. Լավ: (Գնում է աջ կողմի երկրորդ դռներով, ցնցուղը տանելով):

ՆԱՐԳԻԶ. (Նունուֆարին): Դու էլ գնա, սամովարը հավաքիր:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. Այս րոպեիս, (Գնում է խորքի դռներով, ճանապարհին պատահում է Օվսաննային):

ՕՎՍԱՆՆԱ. Նունուֆար, այս նամակը գցիր փոստարկղ, (Գալիս է խորքի դռներով ձեռքին մի փոքրիկ ծրար: Նուրբ կազմվածքով, բավական սիրուն, բայց շատ նիհար օրիորդ է: Ձևերը կիրթ են և նուրբ: Հագած է նույնպես տոնային ուրախ հագուստ: Բացի մի խոշոր ադամանդյա քորոցից, ոչինչ ակնեղեն չկա վրեն: Հանդարտ մոտենամ է, դաշնամուրին է, ոտքի վրա կանգնած, սկսում է անփույթ ինչ-որ ուրախ եղանակի ակորդներ տալ):

ՆՈՒՆՈՒՖԱՐ, (նամակն առնելով, գնում է աջ կողմի երկրորդ դռներով):

ԲԵՄԻ ԵՏԵՎՈՒՄ. (Սամվելը դադարում է ջութակ նվագել: Մի քանի րոպե անցած նորեն նվագում է մի ուրիշ եղանակ և հետո բոլորովին ընդհատում):

ՏԵՍԻԼ 3

ՆԱՐԳԻԶ և ՕՎՍԱՆՆԱ

ՆԱՐԳԻԶ. (Թախտի վրայի բարձերն ուղղում է և գալիս նստում է հանդարտ գահավորակի վրա): Քսանուերեք տարիդ էլ լրացավ, տեսնենք այժմ ինչ ես մտածում:

ՕՎՍԱՆՆԱ. (Անփույթ): Ինչի՞ մասին, մայրիկ:

ՆԱՐԳԻԶ. Դու գիտես ինչի մասին եմ ասում, Եթե պսակվելու եք, ասացեք, որ պատրաստություն տեսնենք, թե չէ...

ՕՎՍԱՆՆԱ. (Երեսը դարձնելով դեպի Նարգիզը, նույն անփութությամբ): Թե չէ, ի՞նչ, մայրիկ...

ՆԱՐԳԻԶ. Օվսաննա, մեր քաղաքում շատ քիչ բան է հարկավոր մի աղջկա բամբասելու համար:

ՕՎՍԱՆՆԱ. Հետո՞:

ՆԱՐԳԻԶ. Հետո այն է, որ դու այսօր պետք է նրանից մի հաստատ խոսք վերցնես:

ՕՎՍԱՆՆԱ. Լավ, բավական է, մայրիկ, այսօր իմ ծննդյան օրն է, հյուրեր պիտի գան, չվիճենք: (Մոտենում է լուսամուտներից մեկին ու նայում է դեպի դուրս):

ՆԱՐԳԻԶ. (Խորին հանդիմանությամբ): Օվսաննա, մայրական համբերությունն էլ չափ ու սահման ունի:

ՕՎՍԱՆՆԱ. (Գրգռվելով): Ի՞նչ ես կամենում, մայրիկ, ի՜նչ, ես խոմ չեմ կարող նրան ստիպել ինձ հետ ամուսնանալ:

ՆԱՐԳԻԶ. Ստիպե՞լ... Ո՞վ է այդ ասում: Քեզ համար նշանածներ են պակաս մեր քաղաքում: Ես միայն ուզում եմ, որ դու մեր տան պատիվը պահպանես, ուրիշ ոչինչ, Գալիս է, գնում, ոչ հարսնացու ես, ոչ ազատ: Ես այդ չեմ կարող թույլ տալ այսուհետև: Ես ինքս կխոսեմ նրա հետ, (վեր է կենում):

ՕՎՍԱՆՆԱ. (Դրական և խիստ): Դու այդ չես անիլ:

ՆԱՐԳԻԶ. (Նույնպես դրական): Կանեմ և հենց այսօր:

ՕՎՍԱՆՆԱ. Մայրիկ, տեսնո՞ւմ ես այս լուսամուտը:

ՆԱՐԳԻԶ. Ի՞նչ ես ուզում ասել:

ՕՎՍԱՆՆԱ, Նա բավական բարձր է փողոցից: Եթե դու Ժորժին մի խոսք, մի բառ կասես կամ որևէ ակնարկ կանես իմ մասին, այն ժամանակ.., մեղքը քեզ վրա...

ՆԱՐԳԻԶ. (Ազդված): Գժեր եք դուք, կապելու գժեր, ամեն բան կարելի է ձեզանից սպասել (Քայլերն ուղղում է դեպի խորքի դռները, բայց, զանգակի ձայն լսելով, կանգ է առնում նախասենյակում):

ՆԱՐԳԻԶ. (վերադառնալով բեմի կենտրոնը): Տես ո՛վ է:

ՕՎՍԱՆՆԱ. (Մոտենում է աջ կողմի երկրորդ դռներին, բաց է անում, նայում է դեպի նախասենյակ և ետ է գալիս): Արմազդի քույրերն են: Գալիս են ինձ շնորհավորելու:

ՆԱՐԳԻԶ. (Արհամարհանքով): Օհ, կարոտել էի նրանց, որ լույսը նոր բացված վազում են գլխիս:

ՏԵՍԻԼ 4

ՆՈՒՅՆՔ, ՆՈՅԻՄԶԱՐ և ԼԵՅԼԻ

ՆՈՅԻՄԶԱՐ. (Գալիս է աջ կողմի երկրորդ դռներով, կարմիր այտերով, առողջ կին է անտաշ ձևերով, հագած է եվրոպական շրջազգեստ, իսկ գլուխը կրում է վրաց թասակրավ): Բարով ձեզ: (Սեփական արժանավորության գիտակցությամբ ձեռ է տալիս Նարգիզին և Օվսաննային): Շնորհավոր ծնունդդ, բախտավոր լինիք:

ԼԵՅԼԱ. (Կայտառ, գեղեցկադեմ, ամոթխած, համեստ օրիորդ է: Հագնված է լիովին եվրոպական տարազով շատ համեստ, բայց ոչ անճաշակ: Աչքի են ընկում հարուստ գանգուր մազերը պարզ գլխարկի տակից: Լուռ հետևում է քրոջը և խոնարհ բարևում):

ՕՎՍԱՆՆԱ. (Ընդունում է հյուրերին սիրալիր, բայց հպարտ: Լեյլիի հետ համբուրվում է): Շնորհակալ եմ: Շատ ուրախ եմ ձեր գալուն: (հրավիրում է գահավորակի կողմ):

ՆԱՐԳԻԶ. (Հյուրերին ընդունել է գլխի թեթև շարժումով, դեմքին մի հեգնական ժպիտ): Ներեցե՛ք, եթե պատրաստ չենք: Մենք ուշ ենք զարթնում:

ՆՈՅԻՄԶԱՐ. Դե պարտք համարեցինք ամենից առաջ գալ: (Դուրս է բերում սև, մետաքսյա պելըրինի տակից մի տուփ քաղցրավենիք և դնում է աննկատելի անկյունի կլորիկ սեղանի վրա):

ՆԱՐԳԻԶ. Կարող եք նստել (Ինքը չի նստում): Ձեր եղբայրն ինչո՞ւ է մեր մոտից դուրս գալիս:

ՆՈՅԻՄԶԱՐ. Չգիտեմ (Նստում է բազկաթոռի վրա, ձեռները հենում հովանոցի կոթին):

ՕՎՍԱՆՆԱ. Մի՞թե Արամազդը թողնում է ծառայությունը հայրիկի մոտ: Ես այդ չգիտեի: Օրիորդ Լեյլի, նստեցեք այստեղ, մոտս: (Նստում է և սկսում է Լեյլիի հետ խոսել առանձին):

ՆԱՐԳԻԶ. Երևի հարստացել է, ժամանակները փոխվել են, հիմա գործակատարները շատ շուտ են հարստանում:

ՆՈՅԻՄԶԱՐ. Երանի թե այդպես լիներ:

ՆԱՐԳԻԶ. Իհարկե, ո՛վ չի ուզում, միայն թե ազնիվ ճանապարհով հարստանան: Մենք քանիքանի գործակատարներ ենք ունեցել, որոնք այսօր օրինավոր վաճառականներ են: Տրեխներով գալիս են մեզ մոտ, կոշիկներով գնում:

ՆՈՅԻՄԶԱՐ. Իմ եղբայրն իսկի տրեխներ չի հագել:

ՆԱՐԳԻԶ. Ես օրինակի համար եմ ասում... Նա էլ գյուղական տղա է, չէ՞: Դե ամենքին մարդ դարձնողը մենք ենք:

ՕՎՍԱՆՆԱ. (Հանդիմանական եղանակով): Մայրիկ, մարդիկ մարդ են դառնում իրանց խելքով և ոչ մեզնով:

ՆԱՐԳԻԶ. Ի՞նչ կկամենաք պատրաստել տամ, սո՞ւրճ, թե շոկոլադ:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Արժանապատվությամբ): Ոչ մեկը, շնորհակալ ենք...

ՆԱՐԳԻԶ. Երևի, քաղցած չեք: Դե, իհարկե, լույսը նոր է բացվել: Մեզ մոտ հյուր գալիս են տասներկու ժամից սկսած:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Արդեն վիրավորված): Դե մենք չգիտենք, գյուղական աղջկերք ենք:

ՆԱՐԳԻԶ. Մեր ժամանակում էլ ազնվականություն մնաց: Այնքան սրա ու նրա հետ նստեցինք, վերկացանք, որ կարգ ու կանոն մոռացանք: (Նստում է և սուր հայացքով նայում Լեյլիին: Մեկուսի) Ի՞նչ առողջ է անիծվածը...

ԼԵՅԼԻ. Այո, օրիորդ, կարդում եմ, ինչ որ ձեռքս է ընկնում:

ՕՎՍԱՆՆԱ. Միայն հայերեն, թե՞ ռուսերեն էլ:

ԼԵՅԼԻ. Ռուսերեն մի քիչ դժվարությամբ եմ հասկանում:

ՕՎՍԱՆՆԱ. Փույթ չէ, շուտով կսովորեք: Եկեք շուտ-շուտ ինձ մոտ, ես ձեզ շատ հետաքրքրական գրքեր կտամ:

ՆՈՅԻՄԶԱՐ. Շնորհակալ ենք:

ՆԱՐԳԻԶ. (Շարունակ նայել է Լեյլիին): Օվսաննա, նայում եմ այդ աղջկան... (Լեյլիին) Անունդ մոռացել եմ:

ԼԵՅԼԻ. (Շփոթվելով): Լեյլի:

ՆԱՐԳԻԶ. Նայում եմ Լեյլիին և մտածում եմ ինչ լավ կգար քո հագուստը նրա վրա (դառնում է Նոյիմզարին): Չորս-հինգ հագուստ ունի աղջիկս, բոլորն էլ համարյա նոր, չի հագնում, մոդայից դուրս են եկել:

ՆՈՅԻՄԶԱՐ. Տվեք ձեր աղախնին:

ՆԱՐԳԻԶ. Ափսոսում եմ: Հը՛ը, Օվսաննա, ինչ կասես, բախշենք Լեյլիին:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Կատաղության նշաններ է անում մեկուսի):

ՕՎՍԱՆՆԱ. (Մոր փոխարեն ամաչել է): Մայրիկ, դրա ժամանակը չէ: (Աշխատում է Լեյլիին զբաղեցնել):

ՆՈՅԻՄԶԱՐ. (Այլևս չկարողանալով իրան զսպել): Իմ քույրը ձեր աղջկանից համ հասակով բարձր է, համ էլ նրա պես լղար չէ... (Մեկուսի): Կերար...

ԼԵՅԼԻ (Քրոջ փոխարեն ամաչել է, շփոթվել, նայում է նրան հանդիմանությամբ):

ՆԱՐԳԻԶ. (Սաստիկ խայթվել է): Հա, իհարկե, անտաշ է,

ՆՈՅԻՄԶԱՐ. (Վեր է կենում): Լեյլի, ժամանակն է գնալու, (Նարգիզին): Մնաք բարով:

ՕՎՍԱՆՆԱ. (վեր կենալով): Ինչո՞ւ եք շտապում:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Կծված): Շատ որ նստենք, շիլ կնայինք: Լեյլի, ես գնացի:

ՕՎՍԱՆՆԱ, Ճաշին խնդրեմ շնորհ բերեք:

ՆԱՐԳԻԶ. (Թաքուն նշան է անում Օվսաննային, որ չհրավիրե):

ՆՈՅԻՄԶԱՐ. Շնորհակալ ենք... Չենք կարող: Լեյլի, ես գնացի: (Գնում է աջ կողմի երկրորդ դռներով):

ԼԵՅԼԻ. Մնաք բարով: (Շփոթված, ամոթխած գլուխ է տալիս Նարգիզին, իսկ Օվսաննայի ձեռը սեղմում է):

ՕՎՍԱՆՆԱ. Ցտեսություն, Լեյլի: Ես ճաշին ձեզ անպատճառ կսպասեմ:

ԼԵՅԼԻ. (Ավելի շփոթված): Ոչ, ոչ, չսպասեք: Ցտեսություն, (Գնում է Նոյիմզարի ետևից):

ՕՎՍԱՆՆԱ. (Սիրալիր ուղեկցում է Լեյլիին մինչև դռները):

ՆԱՐԳԻԶ. (Նկատել է քաղցրավենիքի տուփը, վերցնում է, նայում և արհամարհանքով տեղը դնում): Դես նայիր, կանֆետ էլ են բերել...

ՏԵՍԻԼ 5

ՕՎՍԱՆՆԱ և ՆԱՐԳԻԶ, հետո ՆՈՒՆՈՒՖԱՐ

ՕՎՍԱՆՆԱ. (Վերադառնում է արագ քայլերով բեմի կենտրոնը, վիրավորված է մոր դեմ): Մամա, պետք է ասած, որ շատ սիրալիր ընդունեցիր իմ հյուրերին, շա՛տ, Դու նրանց ուղղակի վռնդեցիր մեր տնից:

ՆԱՐԳԻԶ. Շատ լավ արի: Թող գնան իրանց եղբորը պատմեն, որ մյուս անգամ չհամարձակվի իր գլխից մեծ բաներ բռնել: Անպատկառ, չի ամաչում մի որպե մտածել, որ կարող է Ֆռանգուլյանների փեսան լինել:

ՕՎՍԱՆՆԱ. Բայց քույրերն ի՞նչ մեղք ունեն, որ իրանց եղբայրն ինձ առաջարկություն է արել:

ՆԱՐԳԻԶ. Այդ գյուղականները շատ երախտամոռ են առհասարակ: Աղքատ ու հպարտ, ես սրանց ուզում եմ բարություն անել, նրանք վիրավորում են ինձ ու քեզ:

ՕՎՍԱՆՆԱ. Նախ դու սկսեցիր, մայրիկ, քո ամեն մի խոսքը ուղղակի վիրավորանք էր նրանց համար:

ՆԱՐԳԻԶ. Թող լինի: Այդպիսիներին, որ մի քիչ երես տանք, վզներովս կփաթաթվին: Ամեն մարդ պիտի իր տեղը լավ ճանաչի: Տե՛ս, կանֆետ են բերել քեզ համար: Ով գիտե որ բաղկալից են առել... Վերցրու, դեն գցիր, որ հյուրերս չտեսնեն այդ կեղտոտ տուփը...

ՕՎՍԱՆՆԱ. (Վերցնում է քաղցրավենիքի տուփը): Ոչ թե դեն կգցեմ, այլ կդնեմ ամենալավ տեղ, որ քո ազգականները տեսնեն: (Տուփը դնում է դաշնամուրի վրա): Ամեն մի նվեր հարգանքի է արժանի: Մեծ քրոջ մասին ասա, ինչ որ ուզում ես, բայց Լեյլին շատ համակրելի աղջիկ է: Ես խնդրեցի նրան, որ շուտ-շուտ գա մեր տուն: Արժե նրա հետ բարեկամանալ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Գալիս է խորքի դռներից): Խանում, Լևոն աղան զարթնեց: (Սպասում է հրամանների):

ՆԱՐԳԻԶ. Ահ, վերջապես: Գնամ, տեսնեմ գիշերն ինչպես է անցկացրել: (Ուզում է գնալ խորքի դռներով):

ՕՎՍԱՆՆԱ. Մայրիկ, սպասիր մի որպե, (Մոտենում է, կիսաձայն): Ես քեզ խորհուրդ եմ տալիս Լևոնին շատ էլ չձանձրացնել մայրական խնամքով:

ՆԱՐԳԻԶ. Ինչո՞ւ:

ՕՎՍԱՆՆԱ. Որովհետև նա հիվանդ է:

ՆԱՐԳԻԶ. Գիտեմ, ուրեմն ես իմ հիվանդ որդուն պիտի առանց խնամքի թողնեմ:

ՕՎՍԱՆՆԱ. Հենց այդ է, որ չգիտես այդ ինչ հիվանդություն է: Քո ծայրահեղ հոգատարությունը, քո ախուվախն ու հառաչանքները ավելի բորբոքում են նրա վերքերը, քան թեթևացնում (Հեռանում է մորից):

ՆԱՐԳԻԶ. Չեմ հասկանում, (Գնում է խորքի դռներով):

ՕՎՍԱՆՆԱ. Մի օր կհասկանաս, բայց ուշ կլինի: (Պատրաստվում է դաշնամուր նվագելու և սկսում է):

ՆԱԽԱՍԵՆՅԱԿՈՒՄ ԶԱՆԳԱԿ

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Գնում է աջ կողմի երկրորդ դռներով նախասենյակի դռները բանալու):

ՏԵՍԻԼ 6

ՕՎՍԱՆՆԱ և ԺՈՐԺ

ՕՎՍԱՆՆԱ. (նվագում է մի թեթե բան կես որպեի չափ):

ԺՈՐԺ. (Գալիս է աջ կողմի երկրորդ դռներից: Գեղեցիկ դեմքով, նորաձև հագնված երիտասարդ է, ձևերը հավակնական կիրթ: Երեսը սափրած է, ցածի շուրթի վրա թողած է մի մատնաչափ մորուք բեղերը խնամքով սանրած են: Հանդարտ քայլերով մոտենում է Օվսաննային և ձեռը մեղմիկ դնում է նրա ուսի վրա): Բարև, շնորհավորում եմ:

ՕՎՍԱՆՆԱ. (Ուրախ ցնցվելով, խաղն ընդհատում է և ոտքի ելնում): Դո՛ւ ես:

ԺՈՐԺ. Չէի՛ր սպասում այդպես վաղ, (Սեղմում է Օվսաննայի ձեռը ամուր): Ծաղիկների փունջը բերեցին:

ՕՎՍԱՆՆ. Ոչինչ չեմ ստացել:

ԺՈՐԺ. (Ձեռնոցները հանդարտ հանելով): Անպիտաններ, միշտ այդպես անճիշտ են: Բայց ես քեզ համար ավելի թանկագին նվեր եմ բերել: (Ձեռնոցները գցում է ամուր գլխարկի մեջ, գլխարկը գնում է մեջտեղի սեղանի վրա է):

ՕՎՍԱՆՆԱ. Երևի, մի ուրախալի լուր, (Անհամբեր): Հապա, հապա: Նստի՛ ր:

ԺՈՐԺ. (Հառաչելով): Այն բարդ խնդիրը, որ ինձ արգելում էր մեր ամուսնության օրը նշանակելու, վերջապես լուծվեց: (Հանդարտ նստում է):

ՕՎՍԱՆՆԱ. Հուսով եմ բարեհաջող: (նստում է Ժորժի մոտ):

ԺՈՐԺ. Այո: Գոնե այնքան, որ ես այժմ կարող եմ քեզ համարել իմը: (Առնում է Օվսաննայի երկու ձեռները): Ուրա՞խ ես, ասա՞ է:

ՕՎՍԱՆՆԱ (Ուրախությունից շփոթված): Այո, իհարկե: Եվ ավելի քեզ, քան թե ինձ համար: Դու շատ էիր մտածում, շատ էիր ճնշված:

ԺՈՐԺ. (Տակավին Օվսաննայի ձեռքը բռնած) : Ախ, Օվսաննա, եթե իմանայիր, թե ինչ բարոյական տանջանքներ եմ քաշել, շատ կցավեիր իմ մասին: (Ձեռները բաց թողնելով): Բայց ոչինչ, կոշմարն անցավ, այժմ պետք է աշխատել ամեն ինչ մոռանալ:

ՕՎՍԱՆՆԱ, Կոշմարն անցա՞վ: Կնշանակե, այժմ կարող ես պատմել, թե այդ ինչ խնդիր էր, որ ինձանից թաքցնում էիր:

ԺՈՐԺ. Օհ, իհարկե, կպատմեմ: Բայց ոչ այսօր կամ վաղը, ոչ շուտով: Միայն այն ժամանակ, երբ մենք կլինենք ամուսիններ: Իսկ առայժմ գնա հայտնի ծնողներիդ, որ ես քո նշանածն եմ: Միայն ոչ իմ ներկայությամբ, ոչ, ոչ, ես չեմ սիրում այդպիսի տեսարաններ, հետո...:

ՕՎՍԱՆՆԱ. Մի փոքր առաջ մայրս նախատում էր ինձ, որ ես ոչ հարսնացու եմ, ոչ ազատ...

ԺՈՐԺ. Գիտեմ, սիրելիս, գիտեմ: Բայց ի՞նչ արած, հանգամանքները շատ բարդ էին: Էհ, վերջապես, մի օր բոլորը կիմանաս և, հուսով եմ, կներես...

ՕՎՍԱՆՆԱ. (զարմանալով): Կներե՞մ... ի՞նչը...

ԺՈՐԺ. (Վեր է կենամ շփոթությունը թաքցնելու համար): Լավ, թողնենք, քո հարցասիրությունն ինձ համար ախորժելի չէ...

ՕՎՍԱՆՆԱ. (Վեր է կենում): Շատ լավ, չեմ ձանձրացնի, Ուրեմն հայտնեմ մորս:

ԺՈՐԺ. Անպատճառ. Բայց, գիտե՛ս, երևի ծնողներդ կամենան հանդիսավոր նշանախոսություն սարքել: Այդ բանն ես չէի ուզենալ: Ի՞նչ հարկավոր է այդ չինական ձևականությունը: Աա, ի՞նչ կասես:

ՕՎՍԱՆՆԱ. Ես համաձայն եմ: Ես էլ չեմ սիրում այդ ավելորդ բաները: Ինձ համար կարևորն ուրիշ բան է (նայում է Ժորժին սիրալիր):

ԺՈՐԺ. Գիտեմ: Մեր փոխադարձ սերն ու հարգանքը, այնպես չէ՞ :

ՕՎՍԱՆՆԱ. (Գլխով համաձայնության նշան է անում, սիրալիր ժպտալով):

ԺՈՐԺ. Բայց, այնուամենայնիվ, ահա քեզ մի փոքրիկ գրավական ծնողներիդ հանգստացնելու համար: (Հանում է ձախ մատից մի մատանի և հագցնում է մատին): Թանկ բան չէ, բայց մորս նվերն է, ուրեմն անգին: Ինչու հառաչեցիր, կարծես դու ուրախ չես:

ՕՎՍԱՆՆԱ. (Թույլ է տվել Ժորժին մատանին հագցնելու, հառաչել է). Ոչինչ, մի վատ նախազգացում... տարօրինակ է թվում: Չնայելով որ վաղուց երազում էի այս օրվա մասին, բայց մի տեսակ երկյուղ պաշարեց ինձ: Այս մատանին այնպես հեշտ դուրս եկավ քո մատից: Ոչինչ, ոչինչ, ասում են ուրախությունը տարօրինակ զգացումներ է զարթեցնում մարդու սրտում: Նայիր, (Համբուրում մատանին):

ԺՈՐԺ. Երեխա: (ժպտում է, հետո լուրջ): Բայց թողնենք մեր զգացումները մոտիկ ապագայի համար: Լսիր, Օվսաննա: (Բռնում է Օվսաննայի ձեռքը): Ես սկսել եմ անկեղծությամբ, ուզում եմ մինչև վերջ լինել անկեղծ: Մի մոռանար, որ ես ոչինչ չունիմ, գիտես, ոչինչ, բացի իմ գիտությունից և արհեստից:

ՕՎՍԱՆՆԱ. (Ձեռը խլում է Ժորժից անուշ վշտացած): Միայն այդքա՞նը, ուրիշ ոչի՞նչ: (Նայում է աչքերի մեջ խորը հայացքով):

ԺՈՐԺ. Եվ սիրուց դեպի քեզ: Ա՞յս էիր ուզում: (Ուզում է նորից ձեռը բռնել):

ՕՎՍԱՆՆԱ. (Ձեռը դարձյալ խլում է): Զարմանալի է, որ այդ բանը միշտ պետք է քեզ հիշեցնել:

ԺՈՐԺ. Օվսաննա, մենք դեռահասներ չենք, սերը խոսքերով չի ապացուցվում:

ՕՎՍԱՆՆԱ. Լավ, լավ, ես ոչինչ չեմ պահանջում քեզնից: Ի՞նչ էիր ուզում ասել: Որ աղքատ ես: Այդ ես վաղուց գիտեմ: Ծնողներս էլ գիտեն: Բայց չէ որ ես հարուստ եմ և ինչ որ ունիմ քեզ է պատկանելու:

ԺՈՐԺ. (Շինծու հպարտությամբ): Օհ, ոչ, ես այդ չեմ կամենում: Քո օժիտը քեզ է միայն պատկանելու: Ես միայն ժամանակավոր պիտի օգտվիմ նրանից, շատ-շատ մի տարի, մինչև որ...

ՕՎՍԱՆՆԱ. (Ձեռքով փակում է Ժորժի բերանը): Սո՛ւս, բավական է, այդ մասին այլևս ոչ մի խոսք, ես արգելում եմ:

ԺՈՐԺ. (Օվսաննայի ձեռը սեղմում է իր շրթունքներին): Հպատակվում եմ... Դե՛հ, թույլ տուր ինձ հեռանալու, ապա թե ոչ կարող են հյուրեր գալ և կսկսեն շնորհավորություններ, օրհնանք և այլն, և այլն:

ՕՎՍԱՆՆԱ. Ճաշին, իհարկե, կգաս:

ԺՈՐԺ. Կաշխատեմ: Բայց ոչ, ես կգամ իրիկնադեմին, երբ հյուրերը ցրված կլինեն:

ՕՎՍԱՆՆԱ. Դո՛ւ գիտես,

ԺՈՐԺ. Ուրեմն, ցտեսություն: (Գրկում է Օվսաննային): Կարելի՞ է,

ՕՎՍԱՆՆԱ. Այժմ, այո՛:

ԺՈՐԺ. (Արագ համբուրում է Օվսաննային մի անգամ):

ՕՎՍԱՆՆԱ. (Զգացված ու սաստիկ շփոթված, մեղմ հրում է Ժորժին): Բավական է:

ԺՈՐԺ. (Գլխարկը սեղանի վրայից վերցնելով): Ուրեմն, իրիկնադեմին: Ցտեսություն, Դու կտեսնես, թե ինչպես կերջանկացնեմ քեզ: Ցը՛ (Գնում է աջ կողմի երկրորդ դռներու):

ՕՎՍԱՆՆԱ. (Նայում է Ժորժի ետևից սիրալիր հայացքով, երջանիկ ժպտում: Հանկարծ տխրում է, մտածում): Զարմանալի է: (Ձեռը սեղմում սրտին: Նայում է մատանուն, համբուրում է հանկարծակի և ուրախ-արախ վազում խորքի դռներով):

ՏԵՍԻԼ 7
ԱԹԱՆԵՍ և ԱՐԱՄԱԶԴ

ԱԹԱՆԵՍ. (Գալիս է աջ կողմի երկրորդ դռներով: Միջահասակ, կարճ խուզած ալեխառն մազերով, թանձր, կեռ ունքերով, ճերմակ, կարճ, հաստ բեղերով, սափրած երեսով մարդ է: Հայացքը խիստ է, քայլվածքը ծանր, հպարտ, ձայնը խրոխտ: Հագած է լայն սյուրտուկ, լայն վարտիք, օսլայած շապիկ ծալած օձիքով: Արամազդին): Գնում ես Էլի: (Հեգնական տոնով, որի մեջ լսվում է բարկություն): Լավ, լավ, գնա, ո՛վ է քեզ զոռով պահում: Բայց ասա տեսնեմ, շնորհակալ ես հեռանում ինձանից, թե անշնորհակալ:

ԱՐԱՄԱԶԴ.(Առողջ և ամուր կազմվածքով տղամարդ է, խելոք, առնական, համարձակ դեմքով: Սև բարակ բեղեր, կարճ խուզած մորուք, ամուր սեղմված շրթունքներ: Հագնված է շատ պարզ, բայց մաքուր: Ձևերն ազատ են ու զերծ հահոյանալու ձգտումից): Անշնորհակալ լինելու իրավունք չունիմ: Ես ձեզանից վատություն չեմ տեսել:

ԱԹԱՆԵՍ. (Նստելով գահավորակի վրա ծանր ու բարակ, հանում է գրպանից «տերողորմյան», ցույց տալով Արամազդին դիմացի բազկաթոռը): Ասա, տեսնենք, ո՞ւմ մոտ ես մտել:

ԱՐԱՄԱԶԴ. (Նստում է գդակը ձեռքին): Ոչ ոքի:

ԱԹԱՆԱՍ. (Ունքերը վեր բարձրացնելով): Չես ծառայելու, հե՛:

ԱՐԱՄԱԶԴ. Ո՛չ:

ԱԹԱՆԵՍ. Հապա: Հույսդ ինչի՞ վրա ես դրել:

ԱՐԱՄԱԶԴ. Իմ աշխատասիրության և եռանդի:

ԱԹԱՆԵՍ. Դրանցով փոր չի՛ կշտանալ: Փող, բա՞ն:

ԱՐԱՄԱԶԴ. Էհ, մի քիչ ունիմ:

ԱԹԱՆԵՍ. Լավ, լավ, դե որ ունիս, կարող ես մի լավ խանութ բաց անել: Կոշիկների խանութ բաց արա, կոշիկների:

ԱՐԱՄԱԶԴ. Արդյունաբերական-գործարանական քաղաքում միայն ծույլերն ու անդամալույծներն են խանութում նստում:

ԱԹԱՆԵՍ. Հապա ի՞նչ ես ուզում անել:

ԱՐԱՄԱԶԴ. Ես մի ընկերություն եմ կազմել:

ԱԹԱՆԵՍ. (Զարմացած): Ի՞նչ, ընկերությո՛ւն:

ԱՐԱՄԱԶԴ. Այո:

ԱԹԱՆԱՍ. Անո՛ւնը:

ԱՐԱՄԱԶԴ. (Դուրս է բերում գրպանից մի թուղթ և տալիս է Աթանեսին): Համեցեք, կարդացեք:

ԱԹԱՆԵՍ. Տեսնենք, տեսնենք: (Թուղթն բանում է, ակնոց է դնում և, հեգնական ժպիտը երեսին, կարդում է): «Торгово-промышленное Товарищество Арамазда Аслановича Агавеляна и других»... (Թուղթը ձգում է սեղանի վրա ծաղրաբար): Օհո, հո, հո, շատ թունդ ես վազում, տես ոտդ քարին չդիպչի:

ԱՐԱՄԱԶԴ. (Թուղթը վերցնում է ու դնում գրպանը): Ես հավատում եմ իմ աստղին:

ԱԹԱՆԵՍ. Ո՛ր սարի գլխից ես տեսել աստղդ, հե՞:

ԱՐԱՄԱԶԴ. Տասնուհինգ տարվա մեջ աչքիս առջև այս քաղաք եկ՛ել են փոքրիկ դրամագլխով մի շարք մարդիկ առանց վարկի, առանց ծանոթների և ահագին գործեր ձեռնարկել:

ԱԹԱՆԵՍ. (Մի ոտքը ծալելով ու տակը դնելով): Օրինակ, ովքե՞ր:

ԱՐԱՄԱԶԴ. Ձիբերտը, Առնշտեյնը, Պետերսոնը, Մյուլմանը, ո՞ր մեկն ասեմ:

ԱԹԱՆԵՍ. Նրանք կամ հրեաներ են, կամ եվրոպացիներ:

ԱՐԱՄԱԶԴ. Ես մի գրքում կարդացել եմ, որ հայերը շատ հին ժամանակ մրցել են աշխարհի ամենաճարպիկ վաճառականների — փյունիկեցիների հետ: Եթե մեր նախահայրերը այնպես համարձակ են եղել, ինչո՛ւ մենք չենք կարող լինել:

ԱԹԱՆԵՍ. Իհարկե, իհարկե, հե հե՛...

ԱՐԱՄԱԶԴ. Ի՜նչ արած ինը տարի շարունակ ես աշխատեցի ձեզ համոզել, որ ձեր գործելու եղանակը հնացել է, պետք է փոխել, դուք արհամարհեցիք իմ ասածները: Դուք ասեցիք իմ խորհուրդները:

ԱԹԱՆԵՍ. (Գրգռված, ոտը հանում է տակից): Աղա, շինականի տղա, դու ո վ ես, որ ես քո խորհուրդները լսեի, հե՛: Վաճառականությունը ես իմ մորս կաթի հետ եմ ծծել: Իմ հայրն էլ է եղել վաճառական, պապն էլ, մեծ պապն էլ: Տեսնո՛ւմ ես այդ խալիները: Որր Խորասանից էր բերված, որը Թուրքեստանից, որը Բելուջիստանից, յոթանասունուհինգ տարի մենք Մոսկվայից սկսած մինչև Թեհրան, Սամարղանդից սկսած մինչև Մանչեստր առուտուր ենք ունեցել, հիմա դո՛ւ պիտի խելք սովորեցնես Ֆռանգուլյաններին:

ԱՐԱՄԱԶԴ. Պարոն Աթանես, անցան այդ ժամանակները, հիմա մրցումը դժվարացել է, վաճառականից այժմ շատ բաներ են պահանջվում: Վերջապես, այլ է վաճառականություն, այլ է արդյունաբերություն:

ԱԹԱՆԵՍ. (Ոտքի է կանգնում վրդովված): Շատ ես խելքիդ զոռ տալիս, լակո՛տ:

ԱՐԱՄԱԶԴ. (Ոտքի է կանգնել Աթանեսի հետ միաժամանակ: Ցնցվում է «լակոտ» բառը լսելիս: բայց զսպում է իրան): Կարն լռության:

ԱՐԱՄԱԶԴ. (Դուրս է բերում գրպանից մի մեծ քառածալ թերթ և. տալիս է Աթանեսին): Թույլ տվեք ներկայացնել ձեզ իմ վերջին հաշիվը:

ԱԹԱՆԵՍ. (Զղջացել է, որ վիրավորեց Արամազդին: Վերցնում է թուղթը: Մեղմ): Գործ սկսե՞լ ես:

ԱՐԱՄԱԶԴ. Այո:

ԱԹԱՆԵՍ. Ե՞րբ:

ԱՐԱՄԱԶԴ. Վեց ամիս է:

ԱԹԱՆԵՍ. Վեց ամիս է և ինձ ոչինչ չե՞ս ասել, (Թուղթը շպրտում է սեղանի վրա):

ԱՐԱՄԱԶԴ. Գաղտնիք պահելը ձեզանից եմ սովորել:

ԱԹԱՆԵՍ. Ի՜նչ գործ է սա:

ԱԹԱՆԵՍ. (Զարմացած և բարկացած): Ի՞նչ:

ԱՐԱՄԱԶԴ. Ես գնեցի Հաջի Ղասումից այն հողերը. Հիշում ե՞ք, մի ամբողջ ամիս ես հորդորում էի ձեզ գնել և չգնեցիք:

ԱԹԱՆԵՍ. (Ավելի գրգռված): Դու համարձակվեցիր իմ պատառը խլել իմ ձեռքի ց, Ես ուզում էի, որ թո լրքը նեղն ընկնի և հողը կես գնով տա:

ԱՐԱՄԱԶԴ. Ոչ, պարոն Աթանես, միայն այդ չէր պատճառը, որ հողը ձեր ձեռքից դուրս եկավ:

ԱԹԱՆԵՍ. Բաս ի՜նչ էր էլի:

ԱՐԱՄԱԶԴ. Թուրքը փողը նաղդ էր ուզում:

ԱԹԱՆԵՍ. Նաղդ կտայի:

ԱՐԱՄԱԶԴ. (Նայում է Աթանեսին և տխուր ժպտում): Դժբախտաբար չէիք կտրող տալ:

ԱԹԱՆԵՍ. (Կատաղելով): Ո՞վ ասաց չէի կարող տալ:

ԱՐԱՄԱԶԴ. Ո՞վ ավելի լավ գիտե ձեր գործերը, քան ես:

ԱԹԱՆԵՍ. (Ձայնը բարձրացնելով): Սուս... (Շփոթվել է, հուզվել, մտածում է: Լռություն):

ԱՐԱՄԱԶԴ. (Նայում է Աթանեսին կարեկցությամբ):

ԱԹԱՆԵՍ. (Մի վճռական շարժումն անելով, մոտենում է Արամազդին, աջ ու ձախ նայելով, բռնում է նրա ձեռքը, կիսաձայն): Լսիր, եթե բերանիցդ մի բառ բաց թողնես մերոնց մոտ, մանավանդ դրսում, ես քեղ կոշկիս ծայրով ծովը կշպրտեմ: Բաց է թողնում Արամազդի ձեռն ու հեռանում):

ԱՐԱՄԱԶԴ. (Արժանապատվությամբ ե համարձակ); Պարոն Ֆռանգուլյան, առաջինը, այժմ դուք ոչինչ չեք կարող անել ինձ, երկրորդը, թույլ տվեք վերջին խորհուրդը տալ ձեզ. հենց այժմ իսկ հայտնեցեք ձեր ընտանիքին ձեր գործերի դրությունը, որպեսզի նրանք իրանց շռայլ ծախսերը կրճատեն:

ԱԹԱՆԵՍ. (Կատաղած, թուղթը վերցնում է սեղանի վրայից): Գնանք իմ սենյակը հաշիվդ տեսնեմ: Ես չկարողացա քո լեզուդ կրճատել: (Դնում է դեպի աջ կողմի դռները):

ԱՐԱՄԱԶԴ. (հետևում է նրան):

ԱԹԱՆԵՍ. (Մի պահ կանգ է առնում դռների մոտ): Ես միայն Փողի պակասություն ունիմ, կրիզիս է, ուրիշ ոչինչ: Լսո՞ւմ ես: Բայց ինչքան էլ վատ լինեն Աթանես Ֆռանգուլյանի գործերը, նա ո չ մի մարդու ձեռք չի մեկնիր Լսո՞ւմ ես, ոչ մի մարդու: (Գնում է աջ կողմի առաջին դռներից):

ԱՐԱՄԱԶԴ. Տա աստված (Հետևում է Աթանեսին):

ՏԵՍԻԼ 8

ՕՎՍԱՆՆԱ, ՍԱՄՎԵԼ, ՆԱՐԳԻԶ, մի վայրկյան ԱՐԱՄԱԶԴ, հետո ՆՈՒՆՈՒՖԱՐ ՈՒ ԼԵՎՈՆ

ՍԱՄՎԵԼ. (Գալիս է խորքի դռներից, Օվսաննայի ձեռը բռնած, ուժով ներս բերելով; Մյուս ձեռում բռնած է ջութակը կնտնտոցի հետ: Քրոջ պես դժգույն, նրբակազմ, համակրելի դեմքով երիտասարդ է, հաշակով հագնված): Օվսաննա, Օվսաննա, եթե քո Ժորժին սիրում ես, հինգ րոպե, միայն հինգ րոպե, փոխարենը հարսանիքիդ երեկո մինչև լույս կնվագեմ:

ՕՎՍԱՆՆԱ. Օհ, քեզանից ազատվել չի կարելի: (Նստում է դաշնամուրի մոտ):

ՆԱՐԳԻԶ. (Եկել է Սամվելի ու Օվսաննայի ետևից): Մի ուրախ բան ածեցեք, որ սիրտս բացվի: Այսօր երկու տոն ունենք, համ ծնունդ, համ նշանդրություն: Օհ, վերջապես: (Նստում է ու պատրաստվում ականջ դնելու):

ՍԱՄՎԵԼ. Ի՞նչ անեմ, առանց ակոմպանեմենտի չեմ կարողանում ըմբռնել: Ահա՛: (Դնում է պյուպիտրի վրա մի նոտատետր և պատրաստվում ջութակ նվագել):

ՕՎՍԱՆՆԱ. (Սկսում է դաշնամուր նվաղել): Այս ինձ ծանոթ մի եղանակ է:

ՍԱՄՎԵԼ. (Ջութակ նվազելով): Հրաշալի բան է: Արամազդի ամենասիրելի նոկտյուրնը: Այդպես, այդպես, միայն մի փոքր հանդարտ: Հիանալի է:

Նվագում են երեք քառորդ րոպե: Նախասենյակում զանգակ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. Գալիս է խորքի դռներով, դնում է աջ կողմի երկրորդ դռներով նվաղելու միջոցին և իսկույն ետ էգալիս մի մեծ փունջ ծաղիկներ բերելով: Մոտենում է Նարգիզին և տալիս է մի այցետոմս):

ՆԱՐԳԻԶ. Օվսաննա, տես Ժորժն ինչ լավ ծաղիկներ է ուղարկել քեզ համար:

ՕՎՍԱՆՆԱ. (Խաղը չի ընդհատում): Դիր դաշնամուրի վրա:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Փունջը դնում է դաշնամուրի վրա և դնում խորքի դռներով):

ԱՐԱՄԱԶԴ. (Գալիս է աջ կողմի առաջին դռներով մի գրիչ ձեռում, գլխաբաց): Ներեցեք, օրիորդ, հայրիկը խնդրում է այստեղ չնվագել, (Գնում է նույն դռներով ետ):

ՕՎՍԱՆՆԱ. (Սամվելին) Տեսա՞ր: (Մի քանի ակորդներ ևս տալով, խաղն ընդհատում է, վեր է կենում, վերցնում վերցնում փունջը և հրճվանքով նայում, հոտ առնում):

ՍԱՄՎԵԼ. (Դադարում է նվագել, գրգռված): Այդ անտանելի է, ուղղակի պատիժ: Այս տանը ոչինչ չի կարելի սովորել:

ՆԱՐԳԻԶ. Մի նեղանա՛ր, որդի՛, հայր է, պետք է հարգել (վեր է կենում):

ՍԱՄՎԵԼ. Ահ, հարգե՛լ, հարգե՛լ, իսկ իմ հոգու պահանջները չպիտի՞ հարգել, Հասկացի՛ր, մայր, ես երաժշտությունը պաշտում եմ:

ՕՎՍԱՆՆԱ. Լավ, մի՛ վրդովվիր, ճաշից հետո կկրկնենք:

ՍԱՄՎԵԼ. Ոչ, ես ասել եմ և ասածս պիտի կատարեմ: Միևնույն է, այս քաղաքում ոչինչ չի կարելի սովորել: Իմ փրկությունը կամ մայրաքաղաքն է, կամ արտասահմանը: Այս մթնոլորտում ես խեղդվում եմ:

ԼԵՎՈՆ. Իսկ ես արդեն խեղդվել եմ: (Գալիս է խորքի դռներից: Հիվանդոտ, թուլակազմ երիտասարդ է, նոսր մազերով, նոսր ունքերով, թերթերունքները թափված: Հագած է շատ լավ կարված մոխրագույն հագուստ: Ձեռները ծածկված են բարակ սև ձեռնոցներով, որոնք երբեք չի հանում: Թույլ-թույլ նստում է բազկաթոռներից մեկի վրա):

ՆԱՐԳԻԶ. (Նայել է Լևոնին կարեկցությամբ և տխուր դեմքով այն վայրկյանից, երբ նա երևացել է): Այսօր գույնդ լավ է:

ԼԵՎՈՆ. (Ներվային): Լավ, մի՛ կրկնիր միևնույն երգը ամեն օր: Ձանձրալի եք ամենքդ: Ի՞նչ ես հառաչում ու թթված դեմքով նայում ինձ: Ո՛ւֆ, ե՞րբ պետք է ազատվեմ այդ հսկողությունից, (դառնում է Սամվելին): Իսկ քո ջութակը: Օ՜օ, ինչ ուրախությամբ ես նրան կփշրեի և վառարան կգցեի: Առավոտից մինչև կես գիշեր ներվերս սղոցում ես: Մարդ կարող է ուղղակի խելագարվել այս տանը:

ՍԱՄՎԵԼ. Տեսնո՞ւմ ես, մայրիկ, ամեն կողմից բողոք և արգելք: Թույլ տուր ինձ գնալ, թույլ տուր:

ՆԱՐԳԻԶ. Լավ, այսօր ժամանակը չէ այդ մասին խոսելու, մի՛ թունավորիր մեր ուրախ օրը:

ՍԱՄՎԵԼ. Ա՛հ, բռնակալներ, (Արագ քայլերով գնում է խորքի դռներով՝ ջութակը տանելով):

ՏԵՍԻԼ 9

ՆՈՒՅՆՔ, առանց ՍԱՄՎԵԼԻ

ԼԵՎՈՆ. Թողե՛ք գնա, ի՞նչ եք արգելում:

ՆԱՐԳԻԶ. Մեկին թողեցի, շատ բախտավորվեցի, որ մյուսին էլ թողնեմ: (Հառաչում է):

ԼԵՎՈՆ. (Գրգռվելով): Ի՞նչ ես ուզում ասել դրանով, աա՞, ի՞նչ, պատասխանի՛ր, մի՛ հառաչիր ու գլուխդ շարժիր խորհրդավոր:

ՆԱՐԳԻԶ. Լավ: Ես մեղա աստծու, որդի, կլռեմ, միայն դու մի՛ չարանար:

ԼԵՎՈՆ. Ուզում ես ասել, որ ես քեզ ձանձրացրե՞լ եմ, այո՞: Սպասի՛ր, սպասի՛ր, շատն անցել է, քիչն է մնում: Կազատվիս ինձանից, քիչ նախատիր ինձ մտքումդ:

ՆԱՐԳԻԶ (Ապշած): Ե՞ս եմ քեզ նախատում: Օվսաննա, ինչե՞ր է ասում եղբայրդ:

ՕՎՍԱՆՆԱ. Լևոն, դու անարդար ես: Մայրիկը ոչ ոքի այս տանն այնքան չի սիրում, որքան քեզ:

ԼԵՎՈՆ. Հենց այդ է, որի դեմ ես բողոքում եմ: Թող կորչի ծնողական սերը, չեմ ուզում: (Վեր է կենում):

ՕՎՍԱՆՆԱ. (Հանդիմանորեն): Լևո՛ն...

ՆԱՐԳԻԶ. (Մեկուսի): Աստված իմ, ինչե՛ր եմ լսում:

ԼԵՎՈՆ. Օվսաննա, դրանք չեն հասկանում, դու պիտի հասկանաս: Լսիր, ինչ որ այդ մարդիկ անվանում են ծնողական սեր, եսամոլություն է: Այո, այո, եսամոլություն, այն էլ ամենավատ, ամենաստոր տեսակի: (Սկսում է անցուդարձ անել):

ՕՎՍԱՆՆԱ. (Առանձին, կիսաձայն): Մայրիկ, մի՛ հակառակիր, ավելի կգրգռվի:

ԼԵՎՈՆ. Գազաններն էլ են սիրում իրանց ձագերին, բայց միայն ապուշները կարող են ասել, թե այդ մի բարձր զգացում է: Օ՛հ, ի նչ անհուն բերկրությամբ ես կփախչեի այդ կնոջ անվերջ խնամքից՝ նրա ծանր հառաչանքները չլսելու, նրա տխուր աչքերը չտեսնելու համար: Երեք տարի է նա ողբում է ինձ իր մտքում: Երեք տարի է ես քո դեմքի վրա ժպիտ չեմ տեսնում, մայր: Եվ դու չես զգում, որ այդ ինձ ավելի է տանջում, քան իմ հիվանդությունը: Քո ուրախությունը դու պահում ես ուրիշների համար: Քանի՛, քանի՛ անգամ այս սենյակից այնտեղ, պատի ետևում լսել եմ քո ուրախ ձայնը և ծիծաղը: Բայց հենց որ ես երևացել եմ, ձայնդ իսկույն կտրվել է: Ծիծաղդ ընդհատվել, և դեմքդ մի վայրկյանում պատել է մռայլությամբ: Եվ գիտե՞ս ինչու, Օվսաննա, գիտե՞ս …

ՕՎՍԱՆՆԱ. Քեզ սիրելուց, քո մասին ցավելուց:

ԼԵՎՈՆ. (Դառը ծիծաղով): Իմ մասի՞ն, հը, հը, ոչ, Օվսաննա, ոչ, չես հասկանում: Ինձ սիրելուց չէ այդ, այլ ինքն իրան սիրելուց: Նա տխրում է, որովհետև իմ ներկայությունը նրան ճնշում է, իմ տեսքը նրան ներշնչում է վիշտ: Ես զրկում եմ նրան ուրախությունից, ես թունավորում եմ նրա հանգստությունը: Նա ողբում է ոչ ինձ, այլ ինքն իրան: Աա, մայրիկ, այնպե՞ս է, թե՞ չէ, ասա՛, խոստովանի՛ր, ասա է՛լի, ինչո՞ւ ես լռում:

ՆԱՐԳԻԶ. Ի՞նչ ասեմ, որդի, դու ինքդ էլ չգիտես խոսածացդ: Ցավը քեզ չարացրել է:

ԼԵՎՈՆ. (Ոտը զարկելով հատակին): Մի՛ խոսիր իմ ցավի մասին, մի՛ խոսիր: Հիվանդությունը քայքայում է միայն մարմինս, իսկ միտքս նրբացնում է: Ահ, չեմ հասկանում որ դահիճն է ծնողական սեր անվանել եսամոլությունը և որ դաժան օրենքն է սրբագործել այդ բռնությունը:

ՆԱՐԳԻԶ. Աստծու և մարդկանց օրենքները:

ԼԵՎՈՆ. Հեռու տարեք ինձնից ձեր աստծուն: Ո՞վ է նա, ես նրան մինչև օրս չկարողացա ճանաչել:

ՆԱՐԳԻԶ. (Սարսափած) Որդի՛...

ԼԵՎՈՆ. Այո, այո, չեմ ճանաչում: Նա ինձ համար օտար է, բոլորովին օտ՛ար... ես ատ՛ում եմ նրան...

ՕՎՍԱՆՆԱ. Լևո՛ն:

ՆԱՐԳԻԶ. Ես չեմ կարող իմ հարազատ որդուց լսել այդպիսի բաներ: Դա սրբապղծություն է: օ՛օ, սրբապաղծություն:

(Ականջները փակելով գնում է խորքի դռներով):

ՏԵՍԻԼ 10

ԼԵՎՈՆ և ՕՎՍԱՆՆԱ

Մի քանի վայրկյան լռություն:

ԼԵՎՈՆ. (Ընկճված, գունատ, մոտեցել է դաշնամուրին, արմունկները դրել է նրա վրա ու երեսը ձեռներով ծածկել):

ՕՎ)ՍԱՆՆԱ. (Կամացուկ մոտենում է Լևոնին և թևը բռնում): Լևոն:

ԼԵՎՈՆ. (Գլուխը բարձրացնում է): Ախ, Օվսաննա, գանգիս մեջ ինչ-որ ցավ եմ զգում:

ՕՎՍԱՆՆԱ. Ոչինչ, կանցնի, կառողջանաս:

ԼԵՎՈՆ. (Գլուխը հուսահատությամբ շարժելով): Ոչ, Օվսաննա, չեմ առողջանա, իմ բանը պրծած է: Խեղճ մայրիկ, ես վիրավորեցի նրան:

ՕՎՍԱՆՆԱ. Գնա, հանգստացիր, Լևոն, դու չպիտի հուզվիս:

ԼԵՎՈՆ. (Ուշքը ժողովելով): Իրավունք ունիս: Ես չպիտի թունավորեմ ձեր կյանքը: Եթե ժորժը գա, ուղարկիր իմ սենյակը, (Թույլ քայլերով գնում է խորքի դռներով):

ՕՎՍԱՆՆԱ. (Տխուր հայացքով նայում է Լևոնի ետևից): Խեղճ եղբայր, նա կմախք է դարձել:

ՏԵՍԻԼ 11

ՕՎՍԱՆՆԱ ՈՒ ԱՐԱՄԱԶԴ

ԱՐԱՄԱԶԴ. (Գալիս է աջ կողմի առաջին դռներից, գլխարկը ձեռքին): Օրիորդ, թույլ տվեք ձեզ մնաք բարև ասելու:

ՕՎՍԱՆՆԱ. (Մտքերից սթափվելով): Ա՜ա, դուք գնում եք:

ԱՐԱՄԱԶԴ. Այո, այսօրվանից ես այլևս ձեր կառավարիչը չեմ:

ՕՎՍԱՆՆԱ, (Անտարբեր); Ինչո՞ւ եք հորս մենակ թողնում:

ԱՐԱՄԱԶԴ. Էհ, օրիորդ, ամեն մարդ ձգտում է անկախ լինելու, բավական է որքան ծառայեցի:

ՕՎՍԱՆՆԱ. (Ձեռքը մեկնում է): Բարի ճանապարհ:

ԱՐԱՄԱԶԴ. (Արագ մոտենում է, զուսպ ջերմությամբ սեղմում է Օվսաննայի ձեռքը և իսկույն բաց թողնում): Ուրեմն... (Շփոթությունից գլխարկը ճմլում է ձեռքերի մեջ):

ՕՎՍԱՆՆԱ. (Փունջը վերցնելով, նայում է, հոտ առնում): Բան ունեք ասելու:

ԱՐԱՄԱԶԴ. (Տատանվելով): Ոչ: Ձեզանից էի սպասում մի խոսք, մի որևէ...

ՕՎՍԱՆՆԱ. (Անտարբեր): Ցանկանում եմ ձեզ կատարյալ հաջողություն ապագայում:

ԱՐԱՄԱԶԴ. Այդքա՞նը միայն:

ՕՎՍԱՆՆԱ. (Փունջը դնում է դաշնամուրի վրա): Բարևեցեք ձեր քույրերին: (Մոտենում է լուսամուտին):

ԱՐԱՄԱԶԴ. (Արագ հաղթելով շփոթությունը՝ համարձակ): Մի խոսք միայն կկամենայի ասել, օրիորդ:

ՕՎՍԱՆՆԱ. (Երեսը դարձնում է դեպի նա, սառը): Լսում եմ:

ԱՐԱՄԱԶԴ. Ես համարձակվեցի ձեզ առաջարկություն անեի մերժեցիք արհամարհանքով: Ունեիք իրավունք, որովհետև... ես ով եմ, որ հանդգնեցի... բայց, ցանկանում եմ, որ մի ուրիշի հետ դուք լինեք երջանիկ...

ՕՎՍԱՆՆԱ. (Ցույց է տալիս Ժորժի տված մատանին): Նայեցեք... Ես արդեն երջանիկ եմ...

ԱՐԱՄԱԶԴ. (Անախորժ ցնցումով): Ա՛հ, ուրեմն արդեն վճռված է:

ՕՎՍԱՆՆԱ. Ինչպես տեսնում եք: Երթաք բարով: (Երեսը դարձյալ Արամազդից դարձնում է):

ԱՐԱՄԱԶԴ. (Չի գնում: Մտածում է): Լռություն:

ՕՎՍԱՆՆԱ. (Ետ է նայում): Ո՞ւմն եք սպասում:

ԱՐԱՄԱԶԴ. Կարելի՞ է ձեզ մի հարց տալ, օրիորդ:

ՕՎՍԱՆՆԱ. (Զանձրացած): Ա՛հ, ի՞նչ համառն եք դուք:

ԱՐԱՄԱԶԴ. Օրիորդ Օվսաննա, եթե խնդիրը միայն ինձ վերաբերվեր, այսքան չէի ձանձրացնի ձեզ: Բայց անվանեցեք ինձ ինչ կամենաք, ես պարտավոր եմ երախտագետ լինել այս ընտանիքի վերաբերմամբ: Այդ մատանին, որով դուք երջանիկ եք, ձեր ապագա տանջանքների առաջին օղակն է:

ՕՎՍԱՆՆԱ. (Նկատելի վախեցած): Իմ ապագա տանջանքների՞: Ի՞նչ եք ուզում ասել այդ խոսքերով:

ԱՐԱՄԱԶԴ. Ժորժ Ադիլբեկյանի մոտիկ անցյալում կա մի փոքրիկ պատմություն, որ ձեզ հայտնի չէ: Չամուսնանաք նրա հետ, մինչև որ նա չի հայտնել ձեզ այդ գաղտնիքը: Ես իմ բարոյական պարտքը կատարեցի, այժմ մնացեք բարով: (Գլուխ է տալիս և եռանդուն քայլերով գնում է աջ կողմի երկրորդ դռներով):

ՕՎՍԱՆՆԱ. (Ցնցվել է): Սպասեցե՛ք, (Մի քայլ է անում դեպի աջ կողմի երկրորդ դռները ու կանգ առնում): Գնա՛ց, (ճակատը շփում է): Գաղտնի՛ք… Նա զուր խոսողներից չէ…

Վարագույր

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Արամազդ Աղավելյանի բնակարանը: Հասարակ կահավորված սենյակ: Երեք դռներ, աջ կողմինը դեպի Նոյիմզարի ու Լեյլիի բնակարանը, խորքինը դեպի նախասենյակ, ձախինը դեպի Արամազդի ննջարանը: Աջ պատի առջև փոքրիկ թախտ, էժանագին գորգով ծածկված, առջևը սեղան: Թախտի գլխին, պատի վրա հասարակ հայելի: Խորքի պատի առջև, դեպի աջ անկյուն, ճաշի սեղան, սպիտակ մաքուր սփռոցով ծածկված, քովը պահարան ամանեղենի համար: Ձախ պատի առջև գրասեղան, վրեն մատյաններ, համարակալ և այլն: Գրասեղանի գլխին, պատի վրա մի մեծ քարտեզ նավթահողերի:

Դռները վարագույրներ չունեն: Հատակի վրա մի հասարակ կապերտ: Մի քանի վիենական դեղնագույն աթոռներ; Ընդհանրապես անշքություն և մաքրություն:

ՏԵՍԻԼ 1

ՆՈՅԻՄԶԱՐ և ԼԵՅԼԻ

ՆՈՅԻՄԶԱՐ. (Վարագույրը բարձրանալիս, թախտի վրա նստած, ձեռով կար է անում: Մի քանի վայրկյան լռությունից հետո հանկարծ զայրանում է): Չեմ կարող մոռանալ, չեմ կարող, ինչ ուզում ես ասա: Ա՛յ հողը ձեր գլուխը, Ֆռանգուլովներ, հողը:

ԼԵՅԼԻ. (Նոյիմզարի դեմ նստած, կարդում է մի գիրք, արմունկը հենած սեղանին ու գլուխը ձեռքերի մեջ բռնած: Հագնված է տնայինի): Էլի սկսեցի՛ր: (Ընթերցանությունը չի ընդհատում):

ՆՈՅԻՄԶԱՐ. Չես իմանում ինչքան է սիրտս դաղվել, Մի հարցնող լինի. լավ ասենք մենք գյուղացու աղջիկներ ենք, դո՛ւ ով ես: Պարծենում ես, որ եղբայրս մարդուդ մոտ է ծառայել, հա՞: Լավ, հիմա էլ չի ծառայում խոմ: Այսօր էգուց ինքն էլ կարող է քո մարդու պես մեծ մարդ դառնալ: (Կարը թափ տալով): Գոռոզ, ամբարտավան: Բայց ես էլ լավ կապեցի բերանը, տեղն էր:

ԼԵՅԼԻ. (Շարունակ կարդալով): Դու իրավունք չունեիր մոր պատճառով աղջկան վիրավորելու: Օվսաննան ինքը շատ բարի և քաղաքավարի օրիորդ է:

ՆՈՅԻՄԶԱՐ. Թող լինի, բայց ինչի՞ է նման, ասես չորացրած տառեխ լինի:

ԼԵՅԼԻ. Օվսաննան շատ սիրուն է ու քնքուշ, մեզ նման կոշտ ու կոպիտ չէ:

ՆՈՅԻՄԶԱՐ. Ես չեմ հասկանում: Չգիտեմ Արամազդն ինչ է տեսել, որ երազումն էլ նրա հետ է խոսում:

ԼԵՅԼԻ. Իսկ ես ուղղակի սիրահարված եմ նրա վրա: Այ, այս վեպի հերոսուհին իսկ և իսկ նրան է նման:

ՆՈՅԻՄԶԱՐ. Վեպն ինքն է տվել քեզ կարդալու, իհարկե, հերոսուհին էլ իր նման կլինի: Չէ: կարծես, իմ քույրը գաղթական է, որ ուզում է իր աղջկա մաշված շորերը տալ նրան: Ըհ, արյունս գլխովս է տալիս, երբ միտս է գալիս: (Արագ-արագ ներվային ուղղում է իր գիսակները): Ախար, մեկ չէ, երկու չէ, դա էլ այն երեկոն է, երբ նրանց տանը խնջույք կար ու մեզ էլ պատիվ էին արել հրավիրելու: Ընթրիքի ժամանակ ծառան սոուսը վրես թափեց:

ԼԵՅԼԻ. Ծառան մեղավոր չէր, դու ինքդ դիպար ամանին և թափեցիր:

ԼԵՅԼԻ. (Գիրքը մի կողմ դնելով, մոտենում է պահարանին): Տեսնեմ, ինչ ունենք:

ՆՈՅԻՄԶԱՐ. Այ թե ֆանտան խփի, օօ, էլ ինձ հետ խոսել չի լինիլ...

ԼԵՅԼԻ. Պանիր, մի կտոր ձուկ, երշիկ, այս էլ ապուխտ, գինի... (Նշած իրերը մեկ-մեկ դնում է սեղանի վրա): Պատրաստ է:

ՆՈՅԻՄԶԱՐ. Այսօր մենք էլ առանց տաք կերակրի ճաշեցինք: Ուրախությունից իմ ախորժակը փակվեց:

ԱՐԱՄԱԶԴ. (Գրիչը ձգել է, մոտեցել ճաշի սեղանին): Նստեցեք: Ուրեմն, ինձ ոչ ոք դեռ չի հարցրել: Լավ, լավ: (Սկսում է ուտել արագ-արագ):

ԼԵՅԼԻ. (Նստելով): Ահ, քիչ էր մնում մոռանայի: Ֆռանգուլյանների ծառան էր եկել:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Նստելով): Այդ ես չեմ իմացել:

ԼԵՅԼԻ. Դու տանը չէիր:

ԱՐԱՄԱԶԴ. (Քույրերի և իր համար գինի ածելով); Լսիր Լեյլի, որպեսզի ոչինչ չմոռացվի, քարշ արա այն պատին, այ այնտեղ, իմ գրասեղանի գլխին, մի քարետախտակ և մի քարեգրիչ և ամեն օր գրիր եկողների անունները: Ինչ էր ուզում Ֆռանգուլյանների ծառան:

ԼԵՅԼԻ. Ասում էր, աղան քեզ կանչում է իր մոտ:

ԱՐԱՄԱԶԴ. Աղան ինձ կանչում է իր մոտ, (Հեգնական ժպիտ): Աղան այժմ ինքը կարծող է շնորհ բերել մեր տուն և... կգա: Ես զբաղված եմ:

ՆՈՅԻՄԶԱՐ. Ֆռանգուլովը մեր տուն գա: Աշխարհի վերջն է, ինչ...

ԱՐԱՄԱԶԴ. Ոչ, Նոյիմզար, աշխարհի սկիզբն է, Մեր աշխարհի... Որովհետև մենք մի հորից նավթ կսկսենք քաշել այս քանի օրերը, իսկ մյուսից սպասում ենք շատ-շատ մի ամսից հետո:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Ուրախ): Այս քանի օրերը և դու ինձ չե՞ս ասում: Այ դու խորամանկ, ուզում էիր ինձ խաբել, հա: Լավ է, որ չծախեցի բաժիններս:

ԱՐԱՄԱԶԴ. (Բաժակը զարկելով Նոյիմզարի բաժակին): Ասա, կեցցե ռիսկը և եռանդը: (Խմում է):

ՆՈՅԻՄԶԱՐ. (Ոգևորված): Կեցցե՛ իմ եղբայր Արամազդը (Խմում է):

ԱՐԱՄԱԶԴ. Ես վարձեցի ձեզ համար նոր բնակարան:

ՆՈՅԻՄԶԱՐ. Մի՞թե: Ահա մի օրվա մեջ այսքան ուրախալի լուրեր: Ո՞րտեղ վարձեցիր:

ԱՐԱՄԱԶԴ. Ալաջալյանի նոր շինած տանը: Վեց սենյակ բոլոր հարմարություններով: Երկու շաբաթից կտեղափոխվենք:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Ուրախությունից կարմրել է): Վեց սենյակ, բոլոր հարմարություններով:

ԱՐԱՄԱԶԴ. (Անտարբեր): Եվ Էլեկտրական լույսով:

ՆՈՅԻՄԶԱՐ. Մինչև անգամ Էլեկտրական լույս: Ուրեմն, նոր կահ-կարասի էլ այո՞, խոմ չի կարելի այս մաշված աթոռները լուսավորել Էլեկտրական լույսով:

ԱՐԱՄԱԶԴ (Նույն անտարբերությամբ): Ես պատվիրեցի գահավորակ, բազկաթոռներ, պահարաններ, բոլորը, ինչ-որ հարկավոր է…

ՆՈՅԻՄԶԱՐ. Իսկ ծառա՞:

ԱՐԱՄԱԶԴ. Ի՞նչ միամիտ կնիկ ես, Նոյիմզար... Էլեկտրական լույս և ծառա չունենալ:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Ուրախությունից վեր թռչելով): Լեյլի, ես ոչինչ չեմ կարող ուտել: Վեց սենյակ, Էլեկտրական լույս, ծառա, բազկաթոռներ: (Արամազդին): Կարմիր գույնով, կարմիր գույնով պիտի պատվիրեիր կահ-կարասին, որ մեր թշնամիների աչքը ծակի: Ահ, ամեն բանից առաջ հյուրասենյակը պիտի սարքել: Մի մեծ գրամաֆոն կառնեմ, կդնենք լուսամուտի մոտ և օրը մինչև երեկո կածենք, թող ամբողջ փողոցը լսի: Օ՜օ, սպասիր, ամբարտավանի աղջիկ, ամբարտավան, մենք էլ մերը կասենք:

ԱՐԱՄԱԶԴ: Ես կշտացա, (Վեր է կենում): Քանի՞ ժամն է: (Նայում է յուր ժամացույցին); Օ՜օ, դեռ ժամանակ շատ կա, կարող եմ Էլի պարապել: : (Նորից նստում է գրասեղանի քով, գրում, հաշվում և այլն);

ԼԵՅԼԻ. (Սեղանը ժողովում է, մի քանի կեղտոտ ամաններ տանում է խոհանոց խորքի դռներով):

ՆՈՅԻՄԶԱՐ. Ահ, հավատալս չի գալիս: Հիմա կարող եմ նոր կոշիկներս հագնել: Թող մաշվեն: Վեց սենյակ, ծառա, էլեկտրական լույս, գրամաֆոն: (Գնում է աջ կողմի դռներով):

ՏԵՍԻԼ 3

ԱՐԱՄԱԶԴ ՈՒ ԼԵՅԼԻ

ԼԵՅԼԻ. (վերադառնալով խորքի դռներով, տեսնում է Նոյիմզարը բացակա է, մոտենում է գրասեղանին); Մի րոպե Արամազդ, եթե չեմ խանգարում:

ԱՐԱՄԱԶԴ. (Առանց գործն ընդհատելու): Ասա՛:

ԼԵՅԼԻ. Այսօր առավոտյան Օվսաննան ինձ կանչել էր իր մոտ:

ԱՐԱՄԱԶԴ. (Գործն ընդհատելով, զարմացած): Օվսաննան քեզ կանչե՞լ էր: Զարմանալի է:

ԼԵՅԼԻ. Վերջերս նա ինձ հետ բարեկամացել է: Խնդրում է, որ ամեն օր գնամ իր մոտ և երբ ուշանում եմ, մարդ է ուղարկում իմ ետևիցս: Արամազդ, դու լավ բան, չես արել:

ԱՐԱՄԱԶԴ. Ի՞նչ եմ արել:

ԼԵՅԼԻ. Չգիտեմ, դուրս գալուդ օրր ինչ ես ասել նրան, սիրտը գցել ես զանազան կասկածներ:

ԱՐԱՄԱԶԴ. Այո՛, կասկածներ իր նշանածի վերաբերմամբ, հետո՞:

ԼԵՅԼԻ. Նա չափազանց վշտացած է: Այն օրից դես, ասում է հանգստություն չունի: Արամազդ, դու մարդկանց մասին զուր տեղը վատ խոսողը չես, այս Օվսաննան էլ է ասում: Երևի, այդ Ադիլբեկյանի մասին մի բան գիտես: Օվսաննան ուզում է իմանալ: Ես քեզ խորհուրդ եմ տալիս գնալ և բոլորը բացատրել: Եթե Օվսաննայի նշանածի կյանքում կա մի բան, որ կարող է դժբախտացնել նրան, դու պարտավոր ես այժմ իսկ զգուշացնել նրան: (Հեռանում է):

ԱՐԱՄԱԶԴ. (Մտածել է: Լեյլի խոսքերից ազդված, գրիչը ձգում է և ոտքի կանգնում): Այո, դու ունիս իրավունք, Լեյլի, դու խելոք աղջիկ ես: Այդ խոսքերը պատիվ են բերում քեզ: Բայց ինչպե՛ս բացատրություն տամ, քանի որ նա համարյա թե ինձ վռնդել է իր տանից:

ԼԵՅԼԻ. Նա քեզ չի վռնդել:

ԱՐԱՄԱԶԴ. Մերժել — կնշանակի վռնդել:

ԼԵՅԼԻ. Ինչ արած, ուրիշին է հավանել, ճաշակի բան է: Բայց նա քեզ հարգում է:

ԱՐԱՄԱԶԴ. Ուրեմն, կընդունի՛ ինձ, եթե գնամ մոտը:

ԼԵՅԷԻ. Այո, միայն պետք է գնալ մի ուրիշ պատրվակով: նա այնքան ինքնասեր է: որ չի կամենալ քեզ հետ խոսել իր նշանածի մասին, մանավանդ վատ բան լսել նրա վերաբերմամբ: Նա ինձ հետ էլ խոսում է շատ զգույշ և ակնարկներով: Հասկանո՛ւմ ես միտքս:

ԱՐԱՄԱԶԴ. Հասկանում եմ:

ԼԵՅԼԻ. Ուրեմն:

ԱՐԱՄԱԶԴ. Ես կգնամ նրա մոտ, միայն ոչ այսօր:

ԼԵՅԼԻ. Ինչո՞ւ:

ԱՐԱՄԱԶԴ. Նախ պետք է Օվսաննայի հայրը ոտ դնի իմ տուն, հետո ես: Ես որպե առ որպե սպասում եմ ծերունուն: Նա պետք է գա, ստիպված է գալ, (Նախասենյակում զանգակի ձայն):

ԼԵՅԼԻ. Զանգակ, երևի, նա է: (Գնում է խորքի դռներով):

ԱՐԱՄԱԶԴ. Գուցե: (Նայելով իր ժամացույցին): Բայց վաղ է դեռ:

ՏԵՍԻԼ 4

ՆՈՒՅՆՔ ԵՎ ՇԱՄԻԼ-ԲԵԳ

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. (Գալիս է Լեյլիի ուղեկցությամբ խորքի դռներով: Ծեր, կարմիր երեսով, հաստափոր մարդ է, հագած լայն, երկայն պիջակ, լայն վարտիք: Աջ ձեռքի ցուցամատի վրա մի ահագին ոսկե մատանի առանց քարի, փորի վրա ժամացույցի հաստ ոսկե շղթա, երեսը մաքուր սափրած է, գլխի կարճ խուզած մազերը կոշտությունից նեղ ճակատի վրա ցցվել են ասեղների պես: Շնչառությունը ծանր է, ստեպ-ստեպ կոկորդը բարձրաձայն քերում է) Ադա, Արամազդ, աստված խելքդ առել է, ինչ է, (Ձեռքը մեկնում է հեռվից):

ԼԵՅԼԻ. (Գալիս է Շամիլբեգի հետ, նորից վերցնում է գիրքը և նստում է ճաշի սեղանի քով):

ԱՐԱՄԱԶԴ. (Անտարբեր սեղմելով Շամիլբեգի ձեռը): Ի՞նչ է պատահել:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Հեր օրհնած, ինչո՞ւ չես ուզում ընկերության տափը ուսաուպիտ արալ Բերնշտամին: Ասում են 40,000 է տալիս, (Նստում է թախտի վրա և մեջքը թեքում է բարձին լայնարձակ: Մորթե փոքրիկ գլխարկը դնում է սեղանի վրա):

ԱՐԱՄԱԶԴ. Քո Բերնշտամը եթե մի զերո էլ ավելացնի այն 40 հազարի վրա, էլի չեմ տալ մեր ոսկե տափը:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. (Կարճլիկ, կամարաձև ունքերը վերև բարձրացնելով): Ըմբո՛...

ԱՐԱՄԱԶԴ.Հապա ի՞նչ էիր կարծում: Ես հիմար չեմ, որ աչքերս բաց մեր հարստությունը տամ օտարներին: (Վերցնում է գրասեղանի վրայից թղթի մեջ փաթաթված նավթահողը և ցույց է տալիս): Տե՛ս:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Այդ ի՞նչ է:

ԱՐԱՄԱԶԴ. Հարուն-Ալ-Ռաշիդի խազնան: Տես, այս դեղին գծերը նավթի երակներն են: Ուզում ես, հոտ արա, քեֆդ բացվի:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. (Հոտ քաշելով): Դեն արա, ես բացի գինու հոտից, ոչինչ չեմ սիրում: Ուրեմն հույս կա էլի ...

ԱՐԱՄԱԶԴ. (Նավթահողը գրասեղանի վրա դնելով): Հավատ էլ կա, ոչ միայն հույս, (Արհամարհանքով): Հեե՛, չարչիներ, հենց որ մի կոպեկ շահ են տալիս, պատրաստ եք չուխաներդ ծախել, Դուք կոմերսանտի հպարտություն չունիք: Գրասենյակի համար տեղ փնտրում ես, թե չէ:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Չէ, Արամազդ, էլ ղալաթ եմ արել:

ԱՐԱՄԱԶԴ. Ինչո՛ւ: Ծուլանո՛ւմ ես:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Չէ, ծուլությունը չէ, ման գալ չեմ կարողանում:

ԱՐԱՄԱԶԴ. Կառք կնստեիր, (Անցուդարձ է անում, հաճախ նայելով ժամացույցին):

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Պարապետի վրա մեկը նստեցի, ձեռաց կոտրվեց:

ԼԵՅԼԻ. (Ծիծաղում է):

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Ծիծաղում ես, հա քույր Լեյլի: Այս ամառ պիտի գնամ Էսենտուկ — մի քիչ լղարելու, (Արամազդին). Սառր գինի ունես:

ԱՐԱՄԶԱԴ. Լեյլի, Շամիլին գինի տուր, իսկ ես գրասենյակ վարձեցի:

ԼԵՅԼԻ. (Պահարանից բերում է գինի ու բաժակ ու դնելով սեղանի վրա, դարձյալ նստում է իր տեղը):

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. (Գինի ածելով): Քանո՞վ վարձեցիր:

ԱՐԱՄԱԶԴ. Տարեկան հազար ու հինգ հարյուր ռուբլով:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. (Գինի ածելով): Փա՛հ, ադա, չլինի թե մեզ ուզում ես չոր տափի վրա թողնել, (Խմում է):

ԱՐԱՄԱԶԴ. (Ձեռքը զարկելով Շամիլ-բեգի ուսին): Այժմ պետք է հոգալ գործարանի մասին:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. (Նորից բաժակը լցնելով): Ձավո՞դ էլ ես ուզում շինել: Հեռու կաց, քեզանից նավթի հոտ է գալիս: (Խմում է):

ԱՐԱՄԱԶԴ. Ամեն բան պետք է ունենանք, մինչև անգամ նավեր, բայց ապագայում:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. (Ունքերը բարձրացնելով); Բո՛, բո՛, բո՛, ադա, տես որ փողերիս գլխին քար չգցես: Գինի ծախելով եմ աշխատել:

ԱՐԱՄԱԶԴ. Ուզո՞ւմ ես, բաժիններդ ծախիր ինձ, հարյուրին ես հիսուն աշխատանք կտամ, հե՛:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Դե լավ, դու գիտես, յա պան, յա կռապան: (Նախասրահում զանգակի ձայն):

ԱՐԱՄԱԶԴ. (Արագ շարժումով): Լեյլի, այս նա է: Այդ շիշը վերցրու, Շամիլ, անցիր իմ սենյակը, Լեյլի, դու էլ հեռացիր: Դռները ես ինքս կբանամ:

ԼԵՅԼԻ. (Գինու շիշն ու բաժակը դնում է պահարան և գրքեր վերցնելով գնում է աջ կողմի դռներով):

ԱՐԱՄԱԶԴ. (Շամիլբեգին): Դու, դեռ այստե՛ղ ես:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Ախար, ի՞նչ է, ո՛վ է:

ԱՐԱՄԱԶԴ. Գնա՛, գնա՛, հետո կիմանաս, (Դարձյալ զանգակ):

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Ո՛ւֆ, (Տնքտնքալով գնում է ձախ կողմի դռներով):

ԱՐԱՄԱԶԴ. Այդպես, մեկ էլ տուր զանգակը, հետո բաց կանեմ: (Դարձյալ զանգակ):

ԱՐԱՄԱԶԴ. Հի, շատ է շտապում (Գնում է խորքի դռներով):

ՏԵՍԻԼ 5

ՆԱՐԳԻԶ և ԱԹԱՆԵՍ

ԱԹԱՆԵՍ. (Գալիս է խորքի դռներով, Արամազդի ուղեկցությամբ: Նկատելի նիհարել է և. գունատվել: Հագնված է այնպես, ինչպես առաջին արարվածում: Գլխարկը ծանրաշարժ վերցնելով, ձեռնափայտը ձեռին): Զարմանում ես, հե՜, որ եկել եմ, (Նայում է աջ ու ձախ):

ԱՐԱՄԱԶԴ. Իհարկ՛ե, ո՞վ կարող է սպասել այս պատվին: Համեցեք, պարոն Աթանաս: (Աթոռ է ցույց տափս թախտի քով): Տվեք ինձ ձեր գլխարկն ու ձեռնափայտը:

ԱԹԱՆԵՍ. (Տալիս է գլխարկն ու ձեռնափայտը): Էհ, եկա ձեր նոր ընկերությունը շնորհավորելու: Էլի, ինչ-որ լին մեր Արամազդն ես, ծառայել ես ինձ: (Ծառայել բառը շեշտում է առանձին): Հը՜ը, ա՞յս է ձեր գրասենյակը: (Նստում է):

ԱՐԱՄԱԶԴ. Ոչ, պարոն Աթանես, այս իմ բնակարանն է, գրասենյակը կբացվի էգուցվանից: (Աթանեսի գլխարկն ու ձեռնափայտը դնում է անկյունում, ետ է գալիս):

ԱԹԱՆԵՍ. Լա՜վ, լա՜վ, շատ լավ, հը՜ը, (Նայում է շուրջը):

ԱՐԱՄԱԶԴ. (Նստելով Աթանեսի դեմ): Ինչ կհրամայեք, պարոն Աթանես:

ԱԹԱՆԵՍ. Ի՜նչ կարող եմ հրամայել (կծու հեգնությամբ) դե, հիմա դու ինքդ էլ հրամայող ես դարձել:

ԱՐԱՄԱԶԴ. ճշմարիտ է: Արդեն հրամանիս տակ ունիմ հինգ գործակատար և շուտով կունենամ քսանուհինգ:

ԱԹԱՆԵՍ. (Ձսպելով իր վրդովմունքը), Լավ, լավ, ունեցիր, ով է ասում: (Նայում է դիմացի պատին քարշ արած քարտեզին): Այն ի՞նչ քարտեզ է, աչքս լավ չի տեսնում:

ԱՐԱՄԱԶԴ. Այդ, պարոն Աթանես, Ապշերոնյան թերակղզու նավթահողերի քարտեզն է:

ԱԹԱՆԵՍ. (Մտածելով): Հը՜ը... ցը՜: (Աչքի տակով նայում է աջ ու ձախ):

Լռություն:

ԱՐԱՄԱԶԴ. Նիհարել եք այս վերջին օրերը, պարոն Աթանես:

ԱԹԱՆԵՍ. (Բարկանալով գլուխը բարձրացնում է): Ո՞վ ասաց:

ԱՐԱՄԱԶԴ. Նկատելի է, Մի քիչ էլ ծերացել եք: Լռություն:

ԱԹԱՆԵՍ. (Հանկարծ վրդովվում է): Ադա, այդ դու ես իմ գործարանի չորս կողմի տափերը վարձով վերցրել:

ԱՐԱՄԱԶԴ. Այո՜:

ԱԹԱՆԵՍ. Ինչի՜դ են հարկավոր:

ԱՐԱՄԱԶԴ. Հենց այնպես:

ԱԹԱՆԵՍ. Լավ, որ չորս կողմը բռնել ես, ինձ ճանապարհ տալու ե՞ս:

ԱՐԱՄԱԶԴ. Իհարկե, ես իրավունք էլ չունիմ ձեր գործարանի ճանապարհը կապելու: Կարող եք գնալ-գալ ինչքան կամենաք: Ուրիշ ի՞նչ կհրամայեք:

ԱԹԱՆԵՍ. Ուրիշ ոչինչ, Հենց այդ էի ուզում իմանալ:

ԱՐԱՄԱԶԴ. (Նայում է իր ժամացույցին): Կարծեմ, բանկը մինչև երկու ժամն է բաց, այնպես չէ՞, պարոն Աթանես:

ԱԹԱՆԵՍ. Չգիտես, ի՞նչ է, Իհարկե մինչև երկուսը, (Ոտքի է կանգնում): Անքաղաքավարի ես, հյուր ընդունել չգիտես:

ԱՐԱՄԱԶԴ. (Ոտքի կանգնելով): Ինչո՞ւ, ես ի՞նչ ասացի ձեզ, պարոն Աթանես:

ԱԹԱՆԵՍ. Տուր ինձ գլխարկս ու փայտս:

ԱՐԱՄԱԶԴ. (Չի կատարում Աթանեսի ասածը: Լուրջ): Պարոն Աթանես: Գոնե այժմ թողեք այդ ձևերը: Մենք երեխաներ չենք, որ աչքակապուկ խաղանք: Դուք շատ լավ գիտեք, որ ամեն բան ինձ հայտնի է, ավելի, քան ումևիցե:

ԱԹԱՆԵՍ. (Շփոթվելով, գրգռված): Ի՞նչ է հայտնի քեզ, հե՞, աղա պարոն, ի նչ է հայտնի:

ԱՐԱՄԱԶԴ. Նախ և առաջ այն, թե ինչու եք դուք շնորհ բերել: Տասնուհինգ տարվա մեջ դուք երբեք իմ համեստ բնակարանն այդ պատվին չեք արժանացրել: Բայց ինչ արած, մարդիկ հանգամանքների ստրուկներն են, շատ անգամ ստիպված են անել այն, ինչ որ վիրավորական է իրանց անձնասիրության համար: Դա սովորական երևույթ է:

ԱԹԱՆԵՍ. Լավ ես խոսում, շատ լավ ես խոսում, ասա:

ԱՐԱՄԱԶԴ. Կասեմ, ինչո՛ւ պիտի թաքցնեմ, վաղը դուք պարտավոր եք բանկին վճարել մի բավական մեծ գումար: Դուք խնդրել եք, որ հետաձգեն, չեն համաձայնվել, որովհետև այլևս ձեր դրությունը պարզ է: Ուրեմն ձեր մուրհակները վաղը ուղարկում են նոտարին: Իսկ այդ յոթանասունուհինգ տարի գոյություն ունեցող Ֆռանգուլյան ֆիրմայի համար... անպատվություն է...

ԱԹԱՆԵՍ. (Կատաղի): Լռի՛ր, լռի՛ր, այդ քո բանը չէ, քո բանը չէ:

ԱՐԱՄԱԶԴ. Ոչ, մասամբ իմ բանն է, որովհետև ինձ մոտ եք եկել: Դուք դիմել եք ձեր ազգականներին ու բարեկամներին, մերժումներ եք ստացել: «Չունենք, կրիզիս է, թե չէ — ուրախությամբ» և այլն, և այլն: Սովորական ստախոսություն, երբ ազնվություն չունին ուղղակի ասելու «չենք տալիս, որովհետև չենք հավատում»: Եվ, այսպես, ձեզ ամեն տեղ մերժել են և ձեր հիվանդոտ ինքնասիրությունը վիրավորել: Իհարկե, դուք պատրաստ էիք կես գնով ծախել ձեր անշարժ կալվածքներից մեկը, կամ մաքսատանը դարսած ապրանքները, բայց նրանք գրավի տակ են և... մեծ գրավի: Մնում է գործարանը: Այն էլ ոչ ոքի հարկավոր չէ: Բայց և այնպես ձեր միակ փրկությունը, այսինքն ժամանակավոր փրկությունը նա է, և ձեր փրկողը միայն ես կարող եմ լինել: Ահա ճշմարտությունը: (Անցուդարձ է անում):

ԱԹԱՆԵՍ. (Լսելով է մերթ կեղծ արհամարհանքով, մերթ կատաղած): Դո՞ւ, հա, հա, հա: (Դառն արհամարհական ծիծաղ):

ԱՐԱՄԱԶԴ. Այո, պարոն Աթանես, ե՛ս, քո նախկին գործակատարը: Չեմ թաքցնիլ, ձեր գործարանը հարկավոր է մեզ, ես նրա շրջապատող հողերը վերցրել եմ տասներկու տարով: Ուստի խնդրեմ պատասխանեք, ուզում եք ծախել ձեր գործարանը, թե՞ կապալով տալ:

ԱԹԱՆԵՍ. (Զսպված կատաղությամբ): Ոչ ծախել եմ ուզում, ոչ կապալով տալ...

ԱՐԱՄԱԶԴ. Ներեցեք, ես ձեզ... չեմ հավատում:

ԱԹԱՆԵՍ. (Ուզում է հարձակվել): Ձայնդ կտրիր, գյադա:

ԱՐԱՄԱԶԴ. (Սառը և խորը հանդիմանական): Պարոն Աթանես: (Լռություն):

ԱԹԱՆԵՍ. (Ինքն իր հետ կռվել է, որ զսպի իրան): Տուր ինձ գլխարկս ու փայտս: Դու պատվել չգիտես այն մարդուն, որի հացով ապրել ես տասնուհինգ տարի, Անպատկառ:

ԱՐԱՄԱԶԴ. (Տակավին սառը, բայց յուրաքանչյուր բառը շեշտելով): Ես ձեր հացով չեմ ապրել...

ԱԹԱՆԵՍ. Սուտ ես ասում, ես եմ քեզ մարդ դարձրել, Ե՛ս...

ԱՐԱՄԱԶԴ. (Դառն ծիծաղ): Դուք եք ինձ մարդ դարձրել... Տասնուհինգ տարի ծառայել եմ շան հավատարմությամբ և պահպանել եմ ձեր շահերն այնպես, ինչպես ձեր հարազատ որդին չէր պահպանիչ: Ձեր պատճառով ինձ նախատել են, անպատվել, հայհոյել: Ձեր կոպեկների համար ես մինչև անգամ ծեծելու ծեծվել եմ, անքուն գիշերներ անցկացրել: Երբեք չեմ մոռանալ այն օրը... Մորս դագաղը այս սենյակում դրած, ես քամու և ցրտի տակ նավից ապրանք էի ընդունում ձեր հրամանով: Արտաքուստ զսպելով, ստիպված էի վիշտս խեղդել և քո հաշիվներն անել: Եվ այսօր, այս բոլորից հետո ես շինական եմ, գյադա, անպատկառ, իսկ դուք աղա եք... Պարոն Աթանես, գութ ունեցեք դեպի ուրիշները գոնե այժմ, երբ ինքներդ կարոտ եք գթության:

ԱԹԱՆԵՍ. (Տակավին գրգռված): Ես ոչ ոքի գթությանը կարոտ չեմ:

ԱՐԱՄԱԶԴ. (Կանգ առնելով): Կեղծում եք, կարոտ եք...

ԱԹԱՆԵՍ. Տուր ինձ գդակս ու փայտս:

ԱՐԱՄՁԴ. (Չի կատարում Աթանեսի ասածը):

ԱԹԱՆԵՍ. (Ձայնը բարձրացնելով): Տուր ինձ գդակս ու փայտս: Ես քեզ հրամայում եմ:

ԱՐԱՄԱԶԴ. (Հանդարտ մոտենում է, վերցնում է գդակն ու փայտը բերում): Համեցեք:

ԱԹԱՆԵՍ. (Ներվային խլում է գդակն ու փայտը): Շատ շուտ ես լեզուդ սրել: Ձգույշ

ԱՐԱՄԱԶԴ. (Հանդարտ գլուխ է տալիս):

ԱԹԱՆԵՍ. (Մի քանի քայլ է անում դեպի խորքի դռները և կանգ է առնում):

ԱՐԱՄԱԶԴ. (Մոտեցել է գրասեղանին և նայում է քարտեզին):

ԱԹԱՆԵՍ. (Վճռական մի շարժում անելով): Լավ, ծախում եմ: Փողերը համրիր սեղանի վրա — հարյուր հազար ռուբլի:

ԱՐԱՄԱԶԴ. (Հեգնաբար ժպտում է):

ԱԹԱՆԵՍ. Համրիր էլի, հարյուր Հազար: Ունիս, հա, էլ ի՞նչ ես մեծ-մեծ բրդում:

ԱՐԱՄԱԶԴ. Միլիոնների գործեր եք կատարել և երբեք ձեր դրամարկղում այդքան զուտ գումար չեք ունեցել, ինչ եք պահանքում շինականների և գրադաների մի ընկերությունից: Ես կգտնեմ այնքան, որքան արժե ձեր զործարանը: Նրա գինն է վաթսուն հազար:

ԱԹԱՆԵՍ. Ղոչաղ ես, շատ ղոչաղ, խոսք չունիմ: Էլ ի՞նչ ես կանգնել, գցիր թոկդ վզովս, խեղդիր էլի:

ԱՐԱՄԱԶԴ. Ոչ, պարոն Աթանես, ես ոչ ոքի չեմ խեղդելու, երբեք: Ձեր գործարանն ավելի չարժե: Նրա կաթսաները մաշվել են, մեքենան քայքայվել է, ահագին մեծ գումար է հարկավոր ծախսել նորոգելու համար: Կամենաք, թող ուրիշները գնահատեն:

ԱԹԱՆԵՍ. Ես շատ ղալաթ արի, որ քո տունը ոտ դրեցի: (Շուռ է գալիս գնալու):

ԱՐԱՄԱԶԴ. Պարոն Ֆռանգուլյան, կարո՞ղ եք վճարել այն փոքրիկ գումարը, որ մնում է ձեզ վրա իմ ռոճիկից: Այսօր ժամանակը լրանում է...

ԱԹԱՆԵՍ. (Շփոթվելով): Գրիր մի մուրհակ, ես կստորագրեմ:

ԱՐԱՄԱԶԴ. Արժե՞ ութ հարյուր ռուբլու համար ձեր պարտատերերի թիվն ավելացնել, Դատարանում կարող են ինձ նախատել:

ԱԹԱՆԵՍ. (Մեկուսի, տանջանքով): Դատարան, ա՜հ: (Ձսպում է իրան): Ինչքա՞ն կարող ես տալ վաղն այդ վաթսուն հազարից:

ԱՐԱՄԱԶԴ. Վաղը քսան տոկոս, մնացյալը մինչև տարվա վերջը:

ԱԹԱՆԵՍ. Իրիկունը յոթ ժամին ես քեզ կսպասեմ մեր տանը:

ԱՐԱՄԱԶԴ. Շատ բարի: Ցտեսություն

ԱԹԱՆԵՍ. Ա՜հ, գազա՜ն: (Գնում է խորքի դռներով):

ԱՐԱՄԱԶԴ. (Ուղեկցում է Աթանեսին մինչև դռները, դեպի նախասենյակը): Հները գնում են, նորերն են գալիս, մի՜ վրդովվիր պարոն Ֆռանգուլյան: (Գալիս է բեմի կենտրոնը):

ՏԵՍԻԼ 6

ԱՐԱՄԱԶԴ, ՇԱՄԻԼ-ԲԵԳ, ՆՈՅԻՄԶԱՐ ՈՒ ԼԵՅԼԻ

ՆՈՅԻՄԶԱՐ. (Գալիս է շտապով աջ կողմի դռներով, ուրախ): Ես բոլորը լսեցի՜, բոլորն իմացա: Լավ զարդարեցիր նրան: Հիանալի էր: Թող Հիմա էլ նրա կինը գոռոզանա…

ԱՐԱՄԱԶԴ. (Դժկամակ): Նոյիմզար, քո բանը չէ, մի՜ խառնվիր:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. (Գալիս է ձախ կողմի դռներով, քրտինքը սրբելով): Ադա, այստեղ ես շոգից խեղդվեցի: Մարդ աստծու, այս սենյակում ինչպես ես ապրում, օրինավոր հավաբուն է: (Նոյիմզարին նկատելով): Բարով, ա քույր: (Ձեռը մեկնում է հեռվից):

ՆՈՅԻՄԶԱՐ. Բարով ձեզ: Իմացա՞ք, ով էր եկել այստեղ:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ (Արամազդին). Ադա, ղորթ, մին ասա տեսնեմ, այդ ի՞նչ նաղլ էր: Ինչու էր եկել այդ Թաջիր-Բաշին:

ԱՐԱՄԱԶԴ. (Արագ վերցրել է գրասեղանից մի քանի թղթեր): Հե՜տո, հետո՜, ես ուշացա:

ԼԵՅԼԻ. (Երևում է աջ կողմի դռների մեջ):

ԱՐԱՄԱԶԴ. Լեյլի, այսօր երեկո ես կլինեմ Ֆռանգուլյանի տանը: (Ձեռը զարկելով Շամիլ-բեգի ուսին, զվարթ): Գնանք, պարոն շոգենավ (Շտապով գնում է խորքի դռներով):

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Բահ, էլի ինձ քաշ է տալու դեսուդեն: Դեհ, քույրեր, ցտեսություն: (Հետևում է Արամազդին): Ադա, կամաց գնա, ես տրաքեցի…

ՏԵՍԻԼ 7

ՆՈՅԻՄԶԱՐ ՈՒ ԼԵՅԼԻ

ՆՈՅԻՄԶԱՐ. (Ուրախ): Հիմա, Լեյլի, կարող ենք ասել, որ մեր աստղն էլ դուրս է դալիս:

ԼԵՅԼԻ. Էհ: (Ձեռքով մի անտարբեր շարժում անելով, գնում է աջ կողմի դռներով):

Վարագույր

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

Առաջին արարվածի տեսարանը: Պատշգամբի վրա ծաղիկներ ու բույսեր չկան: Երեկո է, լուսամուտի վարագույրները իջեցրած են: Երկու կերոսինի լամպեր, մեկը դաշնամուրի վրա, մյուսը գահավորակի առջև, բեմն աղոտ լուսավորում են:

ՏԵՍԻԼ 1

ՆԱՐԳԻԶ և ՍԱՄՎԵԼ հետո ԼԵՎՈՆ: (Վերջինը բեմի ետևից):

ՆԱՐԳԻԶ. (Գալիս է խորքի դռներով: Հագած է տնային, ուսերին չկա քիրմանի շալը): Ուրեմն, դու ուզում ես ինձ հուսահատության հասցնել էլի: Լա՛վ: (բարձրացնում է լամպերի պատրույգները): (Բեմի լուսավորությունն ավելանում է):

ՍԱՄՎԵԼ. (Առաջին արարվածի հագուստով, միայն վրեն ամառային վերարկու հագած; Մի ձեռում բռնած է ջութակը, տուփի մեջ, մյուսում գլխարկը: Պատրաստվել է տնից դուրս գալու): Չեմ կարող, մայրիկ, հավատա, չեմ կարող այստեղ մնալ:

ՆԱՐԳԻԶ. Ախար ինչո՞ւ, ո՛վ է քեզ դուրս անում քո հոր տնից:

ՍԱՄՎԵԼ. Այստեղ հայրիկն է արգելում, այնտեղ Լևոնն է շարունակ տրտնջում: Դու ինձ անվերջ նախատում ես, Օվսաննան չի ուզում ինձ օգնել, լուռ ու տխուր շրջում է սենյակից սենյակ: Այս տուն չէ, այլ դժոխք, երաժշտությունն այստեղ գործ չունի:

ՆԱՐԳԻԶ. Որդիական սեր չկա քո սրտում, սեր, այս ասա:

ՍԱՄՎԵԼ. Մայրիկ, հարյուր անգամ ասել եմ, որ իմ որդիական սերն էլ, եղբայրականն էլ, բոլոր իմ զգացմունքներր այստեղ են, ահա: (Ձեռով զարկում է ջութակի տուփին):

ՆԱՐԳԻԶ. Սա: Դե որ այդպես է, գնա , որդի, գնա՛, ես քեզ պահել չեմ կարող: Խելքը գլխին մարդն այդ խոսքերը չէր ասիլ, (Նստում է վրդովված):

ՍԱՄՎԵԼ. Աստված իմ, ես ինչպես բան հասկացնեմ սրանց, ի՞նչ ասեմ:

ՆԱՐԳԻԶ. Լսել է: Որ ջահել տղերքը սիրահարվում են անառակ աղջիկների վրա ու իրանց ծնողներին թողնում, փախչում, բայց որ փայտի կտորի վրա սիրահարվին — այս չէի լսել:

ՍԱՄՎԵԼ. (Դառնությամբ): Փայտի կտո՛ր: Կարելի է խելագարվել ուղղակի այդ խոսքերից: (Հուսահատ): Մնաս բարով, մայրիկ, (ուզում է գնալ):

ՆԱՐԳԻԶ. Համբերիր, ո՞ւր ես վազում դատարկ գրպանով: Ինչքա՞ն է հարկավոր քեզ ամսական:

ՍԱՄՎԵԼ. Ես ապրելու եմ շատ համեստ: Կաշխատեմ հիսուն ռուբլուց ավել չծախսել:

ՆԱՐԳԻԶ. (Վեր է կենում, գրպանից փողամանը հանելով): Ո՞րտեղ ես սենյակ վարձել:

ՍԱՄՎԵԼ. Առայժմ հյուրանոցում:

ՆԱՐԳԻԶ. (Տալիս է մի հարյուրանոց թղթադրամ): Վերցրու, այս է ունեցած-չունեցածս: Հետո տեսնենք ինչ կլինի: Բայց հորիցդ փող չխնդրես, կբարկանա:

ՍԱՄՎԵԼ. (Փողը վերցնելով): Շնորհակալ եմ: (Համբուրում է մորը):

ՆԱՐԳԻԶ. (Զգացված). Քանդվում է մեր բունը, քանդվում է:

ՍԱՄՎԵԼ. Մայրիկ, մի՛ վշտանար, եթե մի օր ես մարդ պիտի դառնամ, իմացիր որ միայն սրանով (ցույց է տալիս ջութակը) կարող եմ դառնալ: Ես ուրիշ գործի պիտանի չեմ:

ՆԱՐԳԻԶ՛ Գնա, կարելի է լավը հենց քո արածն է: Գնա, գոնե դու հեռու կլինես, մեր խայտառակությունը չես տեսնիլ:

ՍԱՄՎԵԼ. (Զարմացած): Խայտառակությո՞ւնը: Ի՞նչ ես ասում, մայրիկ:

ՆԱՐԳԻԶ. (Արտասվալի ձայնով): Հայրդ սնանկանում է, իսկ եղբորդ ուղեղը մթնում...

ՍԱՄՎԵԼ. (Ուժին, ցնցվել է): Հայրս սնանկանում է, եղբորս... (Մտածում է): (Լռություն):

ՆԱՐԳԻԶ. (Շատ հանդարտ հեկեկում է):

ՍԱՄՎԵԼ. (Մաքառել է իր հետ: Մի վճռական շարժումն է անում: Ջութակն ու գլխարկը դնում է դաշնամուրի վրա): Մայրիկ, ես չեմ գնում:

ԼԵՎՈՆ. (Բեմի ետևից: Ցավագարի ձայնով): Նունուֆար, ա՜ահ, որտեղ ե՞ք կորել:

ՆԱՐԳԻԶ. (Գլուխը բարձրացնում է սարսափով: Աչքերն արագ սրբում է): Լսեցի՞ր: Օրը տ՛ասն անգամ նա այդպես կատաղում է: Գնա, իմացիր ինչ է ուզում: Ես սիրտ չունիմ նրան տեսնելու: Եթե կարող ես, տար դուրս, թող մի քիչ զբոսնի: Օդը նրա վրա լավ է ազդում:

ՍԱՄՎԵԼ. (Արագ քայլերով գնում է խորքի դռներով):

ՏԵՍԻԼ 2

ՆԱՐԳԻԶ և ԱԹԱՆԵՍ

ԱԹԱՆԵՍ. (Գալիս է աջ կողմի առաջին դռներով): Ի՞նչ է գոռում էլի:

ՆԱՐԳԻԶ. Էհ, ո՛վ գիտե:

ԱԹԱՆԵՍ. Դժբախտությունը դժբախտության ետևից եկավ: Աստծու օրհնությունը հեռացավ իմ տնից:

ՆԱՐԳԻԶ. Չի հեռանալ, մի՛ վախենար, փորձանք է, եկել է, պետք է տանենք: Աշխարհում ո՛վ չի եղել նեղության մեջ:

ԱԹԱՆԵՍ. Չես իմանում, Նարգիզ, չես իմանում ինչ կրակ կա այստեղ: (Ցույց է տալիս սիրտը): Ես, Աթանես Ֆռանգուլյանս, այն օրն ընկնեմ, որ իմ ոտքով գնամ գործակատարիս տո՞ւնը: Նա իսկույն հասկացավ, թե ինչու համար եմ եկել: Օհ, նա սատանայի միտքն անգամ կարող է հասկանալ: Ամո՛թ, ամո՛թ: Այն էլ ե՛րբ: Երեք շաբաթ չանցած այն օրից, երբ հենց այստեղ, այ, այն դռների մոտ (ցույց է տալիս աջ կողմի առաջին դռները) պարծեցա, թե

Աթանես Ֆռանգուլյանը իր կյանքում ուրիշին ձեռք չի մեկնել և չի մեկնիր: Ա՛խ: (Թույլ նստում է բազկաթոռներից մեկի վրա և աչքերը հառում է հատակի մի կետին):

ՆԱՐԳԻԶ. Դու նրանից օգնություն չես խնդրել:

ԱԹԱՆԵՍ. Ինքս գնում եմ գործարանս առաջարկելու, օգնություն խնդրել չէ, բաս ի՞նչ է: ճշմարիտ է, նա ինձ նեղը չգցեց, մարդավարի վարվեց, գործարանիս կոպեկ տվող չկար, Բայց հենց այս է, որ ինձ կատաղեցրեց: Այդ տրեխավորի որդին, որի բերանում մոր կաթն ինձ. մոտ է չորացել, որ ամեն բան ինձնից է սովորել, հանկարծ ինձնից խելոք չինի և ինձ հետ ազնի՞վ վարվի:

ՆԱՐԳԻԶ. Ամեն բան քեզանից է սովորել, ուրեմն ազնվությունն էլ:

ԱԹԱՆԱԱ. Բայց նա ինձանից ավելի է ազնիվ, ավելի, այս է, որ չեմ կարող նրան ներել:

ՆԱՐԳԻԶ. Այդ զարմանալի է, այդ ես չեմ հասկանում:

ԱԹԱՆԵՍ. Պետք է իմ տեղը լինես, որ հասկանաս: Նախանձում եմ ես նրան, լսում ես, նախանձում: Թող նա հարստանա, ի՜նչքան ուզում է, այդ ոչինչ, միայն թե մարդիկ չասեն, որ նա ինձանից խելոք է և ինձանից ազնիվ... Նարգիզ, հիմա կարող եմ խոստովանել: Լսիր, եթե ես ժամանակին նրա խորհուրդները լսած լինեի, այս օրին չէի հասնիլ, Բայց հենց իմանալով, որ նա ինձ խելոք խորհուրդներ է տալիս, հակառակն էի անում, հակառակը, Ես մտածում էի, թոզ կորցնեմ ամեն բան, զրկվեմ վերջին կոպեկից, միայն թե իմ ասածն անեմ և ոչ թե նրանը: Ա՜հ, սնա՜նկ, այս հասակո՜ւմ, յոթանասունուհինգ տարվա պատվական ֆիրմայի գլխին կանգնած: Անպատվությո՜ւն, անպատվությո՜ւն, անպատվությո՜ւն: (Վեր է կենում և սկսում է անցուդարձ անել):

ՆԱՐԳԻԶ. Բայց, փառք աստծու, դու դեռ սնանկ չես, վաղը մուրհակներդ կազատես:

ԱԹԱՆԵՍ. (Դառը ծիծաղ): Վաղը: Իսկ մյո՞ւս օրը, իսկ հետո՞, մնացյալ մուրհակնե՞րը: Երկու հարյուր ութսունուհինգ հազար միայն շուն ու գելին եմ պարտական: Իսկ բանկե՞ր: Եվ ի՞նչ ունիմ դրա դեմ: Գրավ դրած քարվանսարա, երկու-երեք հին տներ, ցամաքող նավթահորեր և ծովի ափում թափած մի քանի հարյուր հակ շաքար, բուրդ, կաշի, Նարգիզ, Նարգիզ, տեսնո ւմ ես այս տունը: Երեք կաթողիկոս է ընդունել իր պատերի մեջ ե հյուրասիրել, այ նրանց պատկերներն իրանց կոնդակների հետ, (Ձայնը ցածրացնելով, խորհրդավոր): Եվ մեզ կարող են այս տնից դուրս քշել...

ՆԱՐԳԻԶ: (Սարսափելով): Մի՞թե բանն այդտեղ է հասել:

ԱԹԱՆԵՍ. Հապա՞, բաս ինչո՞ւ եմ այսքան տանջվում:

ՆԱՐԳԻԶ. Լավ, որ այդպես է, ինչո՞ւ համար էիր ինձանից թաքցնում մինչև այսօր:

ԱԹԱՆԵՍ. Այ, հարցրու: Ինքս էլ չգիտեմ ինչու: Սուտ հպարտություն, գոռոզություն, ուրիշ ոչինչ: (Նայելով իր գրպանի ժամացույցին): Ուղիղ յոթ ժամն է, Ի՞նչ կլինի իմ դրությունը, եթե այդ գյադան իր խոսքը չկատարի: Նախասենյակում զանգակի ձայն:

ՆԱՐԳԻԶ. Ահա, զանգակ, երևի նա է:

ԱԹԱՆԵՍ. Ավազակ, ավազակ, ճիշտ նշանակած րոպեին է գալիս: Այստեղ էլ երևում է, որ նոր մարդ է: Հրամայի, մեզ չայ տալ: (Նստում է գահավորակի վրա, տերողորմյան հանում է գրպանից և աշխատում է հանգիստ երևալ):

ՆԱՐԳԻԶ. (Գնում է խորքի դռներով և իսկույն ետ է գալիս): Նա է:

ՏԵՍԻԼ 3

ԱԹԱՆԵՍ, ԱՐԱՄԱԶԴ, ՆԱՐԳԻԶ և ՆՈՒՆՈՒՖԱՐ

ԱՐԱՄԱԶԴ. (Գալիս է աջ կողմի երկրորդ դռներով: Հագնված է այնպես, ինչպես առաջին, արարվածում): Բարև, տիկին: (Համեստ մոտենում է և համբուրում Նարգիզի ձեռը, հետո հարգանքով սեղմում է Աթանեսի թույլ մեկնած ձեռը): Կարծեմ չեմ ուշացել:

ԱԹԱՆԵՍ. Ոչինչ, շատ էլ վռազելու պետք չկար: (Ցույց է տալիս իր դիմացի բազկաթոռը): Նստի՛ր:

ՆԱՐԳԻԶ. (Վերցնում է դաշնամուրի վրայից Սամվելի ջութակն ու գլխարկը, տանում է խորքի դռներով, թողնում է մյուս սենյակում և ետ է գալիս):

ԱՐԱՄԱԶԴ. (Դուրս է բերում գրպանից մի թուղթ, բաց է անում և դնում Աթանեսի առջև): Ահավասիկ, պարոն Աթանես:

ԱԹԱՆԵՍ. Ի՞նչ թուղթ է այս: (Նայում է կեղծ արհամարհանքով):

ԱՐԱՄԱԶԴ. Այդ գործարանն ինձ ծախելու պայմանագիրն է:

ԱԹԱՆԵՍ. Իսկ փո՞ղը:

ԱՐԱՄԱԶԴ. Մոտս է:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Խորքի դռներով բերում է երկու բաժակ թեյ և, դնելով սեղանի վրա, նայում է Նարգիզին):

ՆԱՐԳԻԶ. Մի բաժակ էլ ինձ համար բեր: (Նստում է, Արամազդին) նստեցե՛ք:

ԱՐԱՄԱԶԴ. Շնորհակալ եմ: (Նստում է):

ԱԹԱՆԵՍ. (Թուղթն անփույթ հրում է իրանից): Լավ, շատ լավ... Հը...

ԱՐԱՄԱԶԴ. Ես կամենում էի ձեզ հետ մի ուրիշ գործ էլ անել:

ԱԹԱՆԵՍ. Ի՞նչ գործ, (Թեյ է խմում):

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Նարգիզի համար թեյ է բերում խորքի դռներով և իսկույն ետ է գնում):

ԱՐԱՄԱԶԴ. Չէի՞ք կամենալ, արդյոք, ձեր ցամաքած հորերի վիճաները մեքենաների հետ ծախել մեր ընկերությանը: Միևնույնն է, նրանք ձեզ հարկավոր չեն:

ԱԹԱՆԱՍ. Իսկ քո ինչին են հարկավոր, պարոն:

ԱՐԱՄԱԶԴ. Ես կտեղափոխեմ նրանց իմ հողի վրա, (Թեյ է խմում):

ԱԹԱՆԵՍ. Հը, Լավ, թեյդ խմիր, դու գիտես, որ ես այս սենյակում գործ չեմ կատարում:

ՆԱՐԳԻԶ. (Հեգնական, բայց հազիվ գսպված նախանձով); Ուրեմն, դուք հիմա հանքատեր եք, հա՛ա է:

ԱՐԱՄԱԶԴ. Այո, տիկին:

ԱԹԱՆԵՍ. (Նարգիզին): Բաս, բաս, աղա է, հը է:

ՆԱՐԳԻԶ. (Շրթունքները ծոմոելով): Ահա թե ինչ:

ԱՐԱՄԱԶԴ. (Աթանեսին): Թույլ տվեք մի բան ևս խնդրելու:

ԱԹԱՆԵՍ. Հրամայիր, պարոնս, հրամայիր:

ԱՐԱՄԱԶԴ. Բարի եղեք ինձ մի վկայական տալու, թե ես տասնուհինգ տարի ծառայել եմ ձեզ հավատարիմ, ազնիվ ու դուրս գալիս բոլոր հաշիվները հանձնել եմ ձեզ կանոնավոր:

ԱԹԱՆԵՍ. Ինչի՛դ է հարկավոր, դու հո այսուհետև չես ծառայելու:

ԱՐԱՄԱԶԴ. Ես ուզում եմ այդ վկայականը դնել մի գեղեցիկ շրջանակի մեջ և քարշ տալ մեր գրասենյակում:

ԱԹԱՆԵՍ. (Հավանել է): Հա՛: Այդ լավ է, լավ է, դիպլոմ է, հե:

ԱՐԱՄԱԶԴ. Այո՛, դիպլոմ մի դպրոցից, որ բոլոր դպրոցների մեջ դժվար գույնն է...

ՆԱՐԳԻԶ. (Հավանել է): Այդ խելոք խոսեցիք, ես հավանեցի. Իհարկե, երբեք չպիտի մոռանալ, թե ում հացն ես կերել և ով է քեզ մարդ դարձրել:

ԱԹԱՆԵՍ. (Հանկարծ վրդովվելով, չարախնդությամբ): Իսկ եթե չտա՛մ այդ դիպլոմը, հե՛: Եթե ամենքին ասեմ, որ դու ազնիվ չե՞ս ծառայել, գողացել ես, կողոպտել և այնպես մարդ դարձել: Այն ժամանակ ի՞նչ կասես, ...

ՆԱՐԳԻԶ. Այն ժամանակ, իհարկե, ամբողջ քաղաքը քեզ կհավատա... Բայց խեղճ է տղան, տուր այդ վկայականը:

ԱՐԱՄԱԶԴ. Տիկին, շնորհակալ եմ ձեր բարության համար: Բայց խեղճը ես չեմ, այլ... (Ասում է իրան, դառնում է Աթանեսին): Դուք չեք կարող իմ մասին ոչ մի վատ խոսք ասել, որովհետև ստախոս չեք...

ԱԹԱՆԵՍ. (Զղջացել է): Լավ լավ, կտամ, այդ էլ կտամ: Ձայներ եմ լսում: Գալիս են: Կխանգարեն մեզ: Գնանք: (Վեր է կենում և գնում է աջ կողմի առաջին դռներով):

ՏԵՍԻԼ 4

ԼԵՎՈՆ, ԺՈՐԺ, ՋԱՎԱԴ ԵՎ ՆՈՒՆՈՒՖԱՐ

ԺՈՐԺ. (Գալիս է աջ կողմի երկրորդ դռներով: Հագնված է ավելի բարդ, քան առաջին արարվածում: Ձեռնոցներ չունի): Ձուր չգնացիր Սամվելի հետ զբոսնելու: Մաքուր օդը քեզ համար նեկտար է:

ԼԵՎՈՆ. Չեմ ուզում Սամվելին: նա հսկում է ինձ մորս պատվերով: Օհ, ես գիտեմ, նրանք այժմ ինձ համարում են ցնորված: Բայց փույթ չէ ես վրեժս կառնեմ նրանցից, կառնեմ: (Գալիս է Ժորժի ետևից: Հասած է ամառային վերարկու, գլխարկ, միշտ սև ձեռնոցներով է: Կոկորդիս կապած է մի սև մետաքսյա թաշկինակ: Այժմ ավելի է գունատ, աչքերի տակերն ավելի կապտած են, հայացքդ շաղված: Թույլ է տալիս Ջավադին վերարկուն տանելու): Թեյ եմ ուզում, թե՛յ: (Նստում է):

ՋԱՎԱԴ. (Եկել է անմիջապես Լևոնի ետևից աջ կողմի երկրորդ դռներով: վերարկուն, ձեռնափայտն ու գլխարկը Լևոնի տանում է խորքի դռներով): Էս սհաթին...

ԼԵՎՈՆ. Չէ, Ժորժ, չէ, պետք է համաձայնվիս, եթե մի քիչ խղճում ես ինձ:

ԺՈՐԺ. Քիչ խոսիր, այդ անկարելի է:

ԼԵՎՈՆ. (Բեռները բարձրացնում է օդի մեջ, որ ձեռնոցները ցույց տա): Իսկ այսպես ապրել կարելի՞ է: Ինձ համար կյանքը ոչ միայն ձանձրալի է, այլև ամոթալի: Տեսա՛ր, ես մինչև անգամ իմ վերարկուն ու ձեռնափայտը չեմ համարձակվում թողնել ընդհանուր նախասենյակում:

ԺՈՐԺ. (Նստում է: Անտարբեր): Այդ արդեն ավելորդ նախագգուշություն է:

ԼԵՎՈՆ. Ով գիտե, հանկարծ պատահե՞ց, չէ որ հանցավոր կլի»նիմ: Ախ, ես անիծված մարդ եմ, զզվելի թե՛ ուրիշների և թե՛ իմ աչքում: Ինչո՞ւ, ուրեմն, չես ուզում իմ մերձավորներին ազատեք ինձ նման մի ախտավորից:

ԺՈՐԺ. Ես չեմ կարող մարդասպան դառնալ:

ԼԵՎՈՆ. Դե բժշկիր ինձ: Բժշկիր արմատապես, որ նորից դառնամ առաջվա առողջ, կայտառ Լևոնը: Հիշո՞ւմ ես, որքան ուրախ էի, զվարճասեր: Ախ, ես ձեր ընկերական շրջանների հոգին էի: Իսկ այժմ...

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (բերում է խորքի դռներով մատուցարանի վրա երկու բաժակ թեյ: Բաժակներից մեկը սովորականից տարբեր ձև ունի: Այդ տարաձև բաժակը դնում է. Լևոնի առջև, մյուսը Ժորժի առջև և իսկույն գնում է խորքի դռներով):

ԺՈՐԺ. Քեզ դարմանում են քաղաքի ընտիր բժիշկները, (Առհասարակ խոսում է անուշադիր, միշտ զբաղված իր մտքով և ստեպ-ստեպ նայելով խորքի դռներին: Սպասում է Օվսաննային):

ԼԵՎՈՆ. (Գրգռվելով): Ահ, անիծվին նրանք իրանց դեղերով, անիծվի ձեր ամբողջ գիտությունը, որ այնքան անզոր է: (Ցույց է տալիս իր բաժակը): Ահա, տես, զզվանքն իր կնիքը դրոշմել է մինչև անգամ իմ բաժակի վրա: Ազատիր ինձ:

ԺՈՐԺ. Թեյդ խմիր ու գնա սենյակդ: Ես ասում եմ, որ մարդասպան լինել չեմ կարող:

ԼԵՎՈՆ. Մարդասպա՞ն, մարդասպա՞ն: Սպանություն կա, որ մարդասպանությունից գերազանց է: Երբ մի զզվելի թունավոր սողուն ջախջախում ես կոշկիդ կրունկով, իմացիր, որ քո արածը բարերարություն է անմեղների համար: Ես մի սողուն, եմ վարակիչ: Հասկանո՞ւմ ես, մի թողնիր ինձ կենդանի: Ա՛հ, եթե իմանայի, որ ձեռս չի դողալ և գնդակը ուղիղ սրտիս կդիպչի... Բայց թույնը կներգործի իսկույն, և ես ամենքից վրեժս առած կլինեմ... Ժորժ, Ժորժ, համաձայնվիր, աղաչում եմ: Մի տող, միայն մի տող գրություն, ոչ ոք չի իմանալ, իմ նամակը կջնջի ամեն կասկած...

ԺՈՐԺ. (Ոտքի է կանգնում): Թոզ այդ, Լևոն, թող: Զուր ժամանակ չկորցնենք: Ինձ ուրիշ, ավելի կարևոր մի բան է զբաղեցնում այս րոպեիս: Ես կկամենայի քեզ հետ խոսել քո հոր գործերի մասին: Ասում են...

ԼԵՎՈՆ. (Ընդհատելով Ժորժի խոսքը): Ի՜նչ, ավելի կարևո՜ր բան: Իմ հոր գործերը քեզ ավելի են զբաղեցնում, քան իմ կյա՛նքը... (Ոտքի է ելնում):

ԺՈՐԺ. Ա՜ա, դու արդեն սկսում ես ձանձրալի դառնար Գնա, մտիր անկողին: (Սկսում է անցուդարձ անել, միշտ նայելով խորքի դռներին):

ԼԵՎՈՆ. Էգոիստ, զազրելի էգոիստ, դու գիմնազիստ ժամանակդ էլ անսիրտ էիր: Հասկացիր, ապուշ, հասկացիր, մինչև այժմ այս քայքայված, ախտավոր շինվածքի մեջ մի առողջ կետ կար: Այ (զարկում է իր ճակատին), այստեղ: Այժմ այս էլ է փտում, հասկանում ես թե չէ, այս էլ: Ես զգում եմ, զգում և տանջվում: (Հուզված անցուդարձ է անում):

ԺՈՐԺ. (Կանգ առնելով, ձեռները վարտիկի գրպանները դրած): Դե լավ, հանգստացիր: Ինչ էլ որ լինի դրությունդ, կյանքը պետք է քեզ համար ունենա հրապույր...

ԼԵՎՈՆ. Լռի՛ր, ատում եմ այդպես խոսողներին, ինչպես կամավոր ստրուկների: Ի՞նչ եք ձեր ողորմելի թաթերով կպել կյանքին, ինչպես եղկելի որդերը ծառի խոնավ բնին: (Կանգ է առնում, դողդղալով): Տո՛ւր, տո՛ւր ինձ այդ թույնը, ասում եմ, դա միակ բարիքն է, որ կարող է անել քեզ նման մի եսամոլ: Չե՛ս տալիս, ասա՛, չե՞ս տալիս:

ԺՈՐԺ. Ես քեզ համար իմ անունը վտանգի ենթարկել չեմ կարող:

ԼԵՎՈՆ. Ասա, ուրեմն, չե՛ս տալիս: Դե, կե՛ր... (Կատաղած հարձակվում է Ժորժի վրա նա ուզում է նրան խեղդել):

ԺՈՐԺ. (Աշխատելով օձիքն ազատել): Լևոն, Լևոն, ի՞նչ ես անում, խելքի եկ: Ա՛հ, նա խելագարվեց, (բարձր ձայնով), Ջավա՛դ, Նունուֆա՛ր… (Երկյուղից գունատվել է):

ՏԵՍԻԼ 5

ՆՈՒՅՆՔ, ՋԱՎԱԴ, ՆՈՒՆՈՒՖԱՐ, ՕՎՍԱՆՆԱ և մյուսները

ՋԱՎԱԴ (Վազում է ներս աջ կողմի երկրորդ դռներով): Վա՛յ,

(Ազատում է Ժորժին): Լևոն աղա...

ՆԱՐԳԻԶ. (Գալիս է խորքի դռներով): Ա՛հ:

ՕՎՍԱՆՆԱ. (Գալիս է խորքի դռներով): Ի՞նչ պատահեց:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Գալիս է խորքի դռներով):

ԱԹԱՆԵՍ. (Գալիս է աջ կողմի առաջին դռներով): Այդ ի՞նչ գոռոց է:

ԱՐԱՄԱԶԴ. (Գալիս է աջ կողմի առաջին դռներով):

ԼԵՎՈՆ. (բաց է թողել Ժորժի օձիքը: Դողում է ոտքից մինչև գլուխ: Շնչասպառ: Աշխատում է ուշքը ժողովել): Ա՛հ, ա՛հ, (ճակատին զարնելով): Այստեղը, այստեղն է մեղավորը.,, դատարկվում է... չորանում է: (Կատաղելով ամենքի դեմ): Հեռացե՛ք, մի՛ մոտենաք ինձ... դուք գարշելի եք:

ԱՐԱՄԱԶԴ. (Մոտենում է Լևոնին): Լևոն, մի՛ հուզվիր, խնդրում եմ,

ԼԵՎՈՆ. (Հենվելով Արամազդի ուսին): Ա՛հ, Արամազդ, դրանք անասուններ են... Դու ես իմ միակ բարեկամը... Թող սատկեն դրանք...

ԱԹԱՆԱՍ. Տարեք անբախտին իր սենյակը:

ԼԵՎՈՆ. (Աթանեսին): Անբախտը դու ես, ծերունի: (Արամազդին, որ գրկել է իրան): Թող, թող ինձ, (Դողդոջ՝ քայլերով, ընդհանուր լռության մեջ դնում է խորքի դռներով):

ՆԱՐԳԻԶ. (Հուսահատված): Ողորմած աստված, ի՞նչ մեղքերիս համար ես ինձ այսքան տանջում: (Ջավադին և Նունուֆարին): Եկեք ինձ հետ, տանենք նրան իր սենյակը: (Գնում է խորքի դռներով):

ՋԱՎԱԴ. (Գնում է խորքի դռներով):

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Գնում է խորքի դռներով):

ԱԹԱՆԵՍ. (Արամազդին): Արի գնանք, արի, գործներս վերջացնենք: Նրա բանը պրծած է, (Գնում է աջ կողմի առաջին դռներով):

ԱՐԱՄԱԶԴ. (Գնում է աջ կողմի առաջին դռներով, մի տխուր հայացք ձգելով Օվսաննայի և Ժորժի վրա):

ՏԵՍԻԼ 6

ՕՎՍԱՆՆԱ ՈՒ ԺՈՐԺ

ՕՎՍԱՆՆԱ. (Վախեցել է Ժորժի մասին): Ի՞նչ էր անում նա քեզ:

ԺՈՐԺ. Ուզում էր խեղդել, հազիվ ազատվեցի: (Տակավին գունատ է):

ՕՎՍԱՆՆԱ. Աստված իմ, աստված իմ, ի՞նչ է պատահում նրան: (Նստում է):

ԺՈՐԺ. Սովորական մի բան, որ հաճախ հետևանք է այդ տեսակ հիվանդության:

ՕՎՍԱՆՆԱ. Միթե դեղ չկա բժշկելու:

ԺՈՐԺ. Միակ դեղը ինքնասպանությունն է: Նա ինձանից թույն էր պահանջում, չհամաձայնվեցի գրել, կատաղեց և հարձակվեց վրես:

ՕՎՍԱՆՆԱ. (Զարմանալով ու վրդովվելով): Միակ դեղը ինքնասպանությո՞ւնն է: Եվ դու այդ ասում ես ինձ, նրա քրո՛ջը:

ԺՈՐԺ. Ինչ արած, նրա ճակատագիրն է:

ՕՎՍԱՆՆԱ. (Հանկարծակի վեր կենալով): Լռիր, քո խոսքերից զարհուրելի ցրտություն է փչում, լռի ր:

ԺՈՐԺ. Պետք է ողջամիտ լինել, Օվսաննա, պետք է մտածել նրանց մասին, որոնց վրա մահը դեռ չէ դրել իր դրոշմը: Լևոնը կմախք է, պետք է այդ նեխվածքից ազատեիր մերձավորներին:

ՕՎՍԱՆՆԱ. (Ականջները փակելով): Բավական է, բավական է, ես չեմ կարող քեզ լսել: Այդքան քարսրտություն քեզանից չէի կարող սպասել:

ԺՈՐԺ. Օվսաննա, եթե այդ շարժուն դիակի ձեռքին զենք լիներ, կսպաներ ինձ: Ինչո՞ւ: Բնության ո՞ր օրենքի հիման վրա: Նա մահ է, ես կյանք: Նա ատում է ինձ, ինչպե՞ս ես սիրեմ նրան կամ խղճամ: Ահ, թողնենք այդ, խոսենք մեր մասին: Ասա ինձ, վերջացան քո պատրաստությունները:

ՕՎՍԱՆՆԱ. (Նայել է նրան երկարատև, զննող հայացքով):

ԺՈՐԺ. Ինչու ես այդպես զննում: Նո՛ր ես տեսնում ինձ:

ՕՎՍԱՆՆԱ. Այո, կարծես թե նոր եմ տեսնում... Կարծես, դու այն չես, ինչ որ երևակայել եմ մինչև այսօր:

ԺՈՐԺ. (Մոտենում է, Օվսաննայի ձեռը բռնում քնքշաբար): Լավ, Օվսաննա, երեխա մի լինիր, նստիր այստեղ, խոսենք մեր մասին: Ժամանակն անցնում է, շոգերը մոտենում են, հարկավոր է...

ՕՎՍԱՆՆԱ. (Ձեռը խլելով Ժորժից, իրան զսպում է): Շատ լավ, խոսենք... Նախ և առաջ ասա, այն ի՛նչ գաղտնիք է, որ չես ուզում ինձ հաղորդել:

ԺՈՐԺ. Օհ, դարձյալ միևնույն երգը: Ի՞նչ համառն ես, Օվսաննա: Հարյուր անգամ ասել եմ, որ քեզանից ոչ մի գաղտնիք չունիմ:

ՕՎՍԱՆՆԱ. Իսկ ես համոզված եմ, որ ունիս և թաքցնում ես ամենայն զգուշությամբ: Այո, ունիս, և թվում է ինձ, որ եթե ես իմանամ այն, ինչ որ ցանկանում եմ իմանալ, պիտի դժբախտանամ: (Անցուդարձ է անում):

ԺՈՐԺ. (Ասում է վիրավորված); Ուրեմն, դու ինձ չե՞ս հավատում, Օվսաննա:

ՕՎՍԱՆՆԱ. Հավատում եմ և կամենում եմ հավատալ անպայման, ահա ինչու դու պարտավոր ես ասել բոլորը, ինչ որ վերաբերվում է քեզ:

ԺՈՐԺ. (Ձևանալով վրդովված): Այդ, վերջապես, անտանելի է, Օվսաննա, դու կարող ես ինձ հուսահատության հասցնել: Չեմ հասկանում, ի՞նչ կա իմ կյանքում, որ քեզ հայտնի չլինի: Ես մի անհայտ ընտանիքի զավակ չեմ: Ովքեր են իմ ծնողները, հայտնի է քեզ և քո ծնողներին: Եղբայրդ իմ գիմնազիական ընկերն է եղել: Վերջապես, ես պատմել եմ քեզ իմ ամբողջ կյանքը:

ՕՎՍԱՆՆԱ. Սո՛ւս, սո՛ւս, բոլորը չես պատմել: Կա մի բան, որ ես չգիտեմ, կա, կա ու կա:

ԺՈՐԺ. (Աշխատում է ծիծաղել): Երեխա, երեխա: (Մոտենում է և ձեռը բռնում): Նստիր, նստիր, իրականի մասին խոսենք: (Ինքը նստում է, Օվսաննայի ձեռը բռնած): Ասա ինձ, հայրդ ինչո՞ւ է այնքան տխուր:

ՕՎՍԱՆՆԱ. (Թույլ տալով, որ Ժորժն իր ձեռները բռնի, չի նստել): Ինչպես չլինի տխուր, այնպիսի որդի ունենալով:

ՕՎՍԱՆՆԱ. Ուրիշ ի՞նչ կարող է լիներ:

ԺՈՐԺ. Բայց այդ է միայն պատճառը, թե՞ կա և ուրիշ բան:

ՕՎՍԱՆՆԱ. Ուրիշ ի՞նչ կարող է լինել,

ԺՈՐԺ. Չգիտեմ, այսօր լսեցի, որ իբր թե նրա գործերը վատ են:

ՕՎՍԱՆՆԱ. (Ձեռներր Ժորժից խլելով): Ա՜հ, նրա գործերն ինձ չեն հետաքրքրում:

ԺՈՐԺ. (Մտազբաղ, ոտքի կանգնելով): Այդպես չէ, Օվսաննա, այդպես չէ: Ինձ հետաքրքրում են:

ՕՎՍԱՆՆԱ. Խոսիր իր հետ, ինչ վերաբերվում է ինձ, ես չեմ հանգստանա, մինչև որ իմ հարցի պատասխանը չստանամ:

ԺՈՐԺ. (Անհամբեր): Ա՜հ, դու արդեն չափն անցար: Ո՞վ է գցել քո սիրտն այդ կասկածն իմ մասին, ո՞վ, ասա:

ՕՎՍԱՆՆԱ. Ա՜ա, վերջապես, դու այդ հարցը տվեցիր: Ես վաղուց էի սպասում: ճանաչում ես Արամազդին:

ԺՈՐԺ. (Հեգնաբար): Ինչպես չճանաչեմ այդ պրիկազչիկ-ասպետին, որ քեզ առաջարկություն է արել: Նա է կասկածը գցել:

ՕՎՍԱՆՆԱ. Այո: Ահա նրա խոսքերը, որ շարունակ հնչում են իմ ականջին. «Ժորժ Ադիլբեկյանի մոտիկ անցյալում կա մի փոքրիկ պատմություն, որ ձեզ հայտնի չէ: Չամուսնանաք նրա հետ, մինչև որ նա չի հայտնիլ ձեզ այդ գաղտնիքը»:

ԺՈՐԺ. (Նախ շփոթվում է սաստիկ, ապա արագ զսպում է իրան և ցույց է տալիս բարկություն): Անպիտան, ահա թե ինչպես է ջուրը պղտորեր: Ես նրանից բացատրություն կպահանջեմ:

ՕՎՍԱՆՆԱ. Իմ ուզածն էլ հենց այդ է:

ԺՈՐԺ. Գարշելի՜: Նախանձից դրդված, այժմ ուզում է ինձ վրա արատ գցել, այո՞: Եվ դո՛ւ, Օվսաննա, թույլ ես տվել նրան իմ մասին խոսելու: Այդ չէի սպասում քեզնից:

ՕՎՍԱՆՆԱ. Երբ նա այդ խոսքերն ասաց, ինձնից թույլտվություն չխնդրեց: Ասաց և իսկույն հեռացավ: Ոչնչացրու նրան մի բառով, և ես քեզ կսիրեմ ավելի, քան այժմ...

ԺՈՐԺ. Շատ բարի, ես կաշխատեմ նրան հանդիպել մի որևէ տեղ:

ՕՎՍԱՆՆԱ, Դու կարող ես նրան հանդիպել հենց այժմ: Նա դեռ հայրիկի սենյակումն է:

ԺՈՐԺ. Ոչ, քո ներկայությամբ անհարմար է, մանավանդ այստեղ, ծնողներդ, եղբայրդ... շփոթություն... աղմուկ...

ՕՎՍԱՆՆԱ. Ընդհակառակը, ես ուզում եմ, որ հենց իմ ներկայությամբ դու նրա զրպարտությունը ցույց տաս, որպեսզի ծառաների միջոցով նրան դուրս վռնդեմ այստեղից:

Բայց ահա նա...

ՏԵՍԻԼ 7

ՆՈՒՅՆՔ ԵՎ ԱՐԱՄԱԶԴ

ԱՐԱՄԱԶԴ. (Գալիս է աջ կողմի առաջին դռներով: Դեռ դուրս չեկած՝ դեպի Աթանեսը): Շատ բարի, շատ բարի, ամենքին կասեմ, որ ձեզանով եմ մարդ դարձել: Ցտեսություն: (Մի քառածալ թերթ գրպանը գնելով, քայլերն ուղղում է դեպի աջ կողմի երկրորդ դռները, իբր թե չնկատելով Օվսաննային և Ժորժին):

ՕՎՍԱՆՆԱ. Մի րոպե:

ԱՐԱՄԱԶԴ. (Կանգ է առնում): Հրամայեցեք, օրիորդ: (Ժորժի կողմը չի նայում):

ՕՎՍԱՆՆԱ, (Ժորժին): Հարցրո՛ւ: (Ծածկում է խորքի դռները և ետ է գալիս):

ԺՈՐԺ. (Նեղն ընկած մի կերպ իշխել է իրան: Գոռոզ): Պարոն, դուք ուզեցել եք ինչ-որ մութ խոսքերով ինձ կասկածելի դարձնել իմ հարսնացուի աչքում: Ես ձեզանից բացատրություն եմ պահանջում:

ԱՐԱՄԱԶԴ. Պահանջում եք, շատ լավ:

ԺՈՐԺ. Ես ի՞նչ գաղտնիք ունիմ, որ վախենում եմ հայտնել Օվսաննային:

ԱՐԱՄԱԶԴ. Օրիորդը թույլ տալի՞ս է ասելու:

ՕՎՍԱՆՆԱ. Այո: (Կանգնում է երկուսի մեջ, բայց ավելի դեպի խորքը):

ԱՐԱՄԱԶԴ. (Ժորժին): Ես ուզեցել եմ ասել օրիորդին, որ դուք, պարոն Ադիլբեկյան, այն չեք, ինչ որ աշխատում եք երևալ նրան:

ԺՈՐԺ. Այսինքն ինչպե՞ս:

ԱՐԱՄԱԶԴ. Այսինքն ջենտլմեն չեք ձեր հարսնացվի վերաբերմամբ:

ԺՈՐԺ. Օհո, գործակատարի բերանում այդպիսի խոսքեր... Արդյոք, ինչպես ես ջենտլմեն... (բառը ձգձգում է հեգնաբար) չեմ: Բացատրեցեք:

ԱՐԱՄԱԶԴ. Եթե օրիորդը թույլ կտա...

ՕՎՍԱՆՆԱ. Ես խնդրում եմ:

ԱՐ\ԱՄԱԶԴ. (Տատանվելով): Բայց իմ ասելիքը շատ խիստ է մի ազնիվ օրիորդի լսելիքի համար: Վերջապես, այստեղ անհարմար է...

ՕՎՍԱՆՆԱ. Ես պահանջում եմ:

ԺՈՐԺ. (Ճիգն է անում իրան ծանր պահելու, բայց արդեն գունատվել է):

ԱՐԱՄԱԶԴ. (Մի քիչ ևս տատանվում է և հանկարծ վճռում): Օրիորդ, այս պարոնը, որ ուզում է ձեզ հետ ամուսնանալ, արդեն ունի և կին, և... երեխա...

ՕՎՍԱՆՆԱ. (Չհավատալով լսածին, այլայլված). Ի՜նչ...

ԺՈՐԺ. (Ուժգին ցնցմամբ): Լի՜րբ: (Ուզում է հարձակվել Արամազդի վրա):

ՕՎՍԱՆՆԱ. (Մեջ ընկնելով): Համբերի՜ր… Լռություն:

ԱՐԱՄԱԶԴ. (Առանց շարժվելու, ինքնապաշտպանության դիրքում կանգնած, արհամարհանքով նայել է Ժորժին):

ԺՈՐԺ. (բռունցքները բռնած դողում է ամբողջ մարմնով):

ՕՎՍԱՆՆԱ. (Զորեղ մաքառումից հետո, Արամազդին): Շարունակեցեք…

ԱՐԱՄԱԶԴ. (Լուրջ և տխուր տոնով): Ուսանող եղած ժամանակ պարոնը Մոսկվայում հրապուրում է իր տանտիրուհու չորս աղջիկներից մեկին և... մոլորեցնում: Մի տարի անցած, խաբված աղջիկը դառնում է... մայր...

ԺՈՐԺ. Լռի՜ր, անպատկառ:

ՕՎՍԱՆՆԱ. (Վրդովված Արամագդի սառնությունից): Դուք սուտ եք ասում, դուք զրպարտում եք նրան:

ԺՈՐԺ. Դո՜ւրս վռնդիր նրան:

ԱՐԱՄԱԶԴ. (Դառը ժպտալով, տակավին սառը): Սովորական հերոսությունը կատարելուց հետո, պարոնը զղջում է կամ, ճիշտն ասած, սառչում է դեպի օրիորդը: Ուսումն ավարտելով, գալիս է հայրենիք, արդեն խելքը գլուխը ժողված: Բայց օրիորդը չի ուզում այդպես հեշտ բաժանվել: Սկզբում հավատում է դեպի նրա խոստումները, թե շուտով կվերադառնա Մոսկվա, ապա կասկած, այնուհետև աղաչանք, պաղատանք, արցունքներով թրջված նամակներ: Ոչինչ չի օգնում: Այն ժամանակ օրիորդը, հուսահատված, վերցնում է երեխային, գալիս է այստեղ՝ իր մոր նախատինքից ազատվելու համար:

ԺՈՐԺ. (Շնչասպառ, բայց արդեն բավական ընկճված): Այս բոլորը մի անամոթ պրիկազչիկի հնարած հեքիաթ է:

ՕՎՍԱՆՆԱ. (Ամբողջ ժամանակ հետևել է Ժորժի դեմքի արտահայտությանը: Արամազդին): Շարունակե՞ցեք:

ԱՐԱՄԱԶԴ. (Միշտ անուշադիր դեպի Ժորժը): Պարոնը միջոցներ է փնտրում անախորժ հյուրից ազատվելու համար: Մեջ են ընկնում նրա համալսարանական ընկերները, գործը հանձնվում է ընկերական դատարանին: Որոշվում է այսպես, օրիորդը կմնա այստեղ, պարոնը երեխային կտա իր անունը, իսկ մորը կհամարի իր կինը: Օրինական, թե ապօրինի — այս միևնույնն է:

ՕՎՍԱՆՆԱ. (Շնչասպառ): Հետո՛, հետո՛...

ԱՐԱՄԱԶԴ. Օրիորդը դրականապես հրաժարվում է, ասելով, թե ոչ միայն չի կարող այդ մարդու կինը դառնալ, այլև չի համարձակվիլ իր երեխային տալ նրա անունը: Այդ ժամանակ ընկերները որոշում են, թե պարոնը պարտավոր է ապահովել գոնե իր զավակին մի որոշ ամսականով: Պարոնը, իհարկե, խոստանում է... Օրիորդը վերցնում է երեխային ե վերադառնում է Մոսկվա, ահա այդ մատանին ձեզ տալու նախընթաց օրը...

ՕՎՍԱՆՆԱ. Փաստեր տվեք, փաստեր, ես ձեզ չեմ հավատում:

ԺՈՐԺ (Մի քիչ խրախուսված): Այո, փաստեր, ես փաստեր եմ պահանջում: Ումի՞ց եք լսել այդ սոսկալի զրպարտությունը:

ԱՐԱՄԱԶԴ. (Կիսով չափ դառնալով Ժորժին): Ճանաչո՞ւմ եք բժիշկ Ազիզյանցին:

ԺՈՐԺ. Նա իմ թշնամին է:

ՕՎՍԱՆՆԱ. Ես նրա մասին շատ լավ կարծիք եմ լսել:

ԱՐԱՄԱԶԴ. (Դառնալով Օվսաննային): Բժիշկ Ազիզյանցը եղել է մեկն երկու դատավորներից օրիորդի կողմից: Թույլ տվեք կատարել նրա մի անախորժ հանձնարարությունը, օրիորդ: (Դուրս է բերում գրպանից մի նամակ): Դուք, անտարակույս, ճանաչում եք ձեր նշանածի ձեռագիրը: Առեք, (Տալիս է նամակը) :

ԺՈՐԺ. (Մեկուսի): Իմ նամակը: (Հարձակվում է Օվսաննայի վրա, որ նամակը խլե): Մի կարդա, Օվսաննա, դա մի ստոր զրպարտություն է...

ՕՎՍԱՆՆԱ. (Խիստ և սպառնողական տեսքով): Սպասի՛ր...

ԱՐԱՄԱԶԴ. Այդ նամակը օրիորդը թողել է բժիշկ Ազիզյանցի մոտ և պարտավորել նրան, որ ձեզ ցույց տա: Ահա նրա խոսքերը. «Թող այդ անմեղ աղջիկն իմանա, թե ում հետ է ուզում կապել իր ճակատագիրը»: Եվ բժիշկ Ազիզյանցն ինձ է հանձնարարել այդ նամակը ձեզ տալու:

ՕՎՍԱՆՆԱ. (Նայում է նամակի վերնագիրը): Սիրելի Օլգա: (Ապա ստորագրությունը): «Քո ժորժ»: Այո, այս քո ձեռագիրն է: (Շտապ-շտապ կարդում է մտքում, ավելի ու ավելի հուզվելով: Ապա, ձեռքերը թուլացած կողքերին թողնելով, դառը կշտամբանքով): Ողորմելի, որքան սեր ես շռայլել:

ԺՈՐԺ. Սուտ է այդ բոլորը, Օվսաննա, սուտ է, մի՛ հավատար: Ես այդ աղջկան չեմ մոլորեցրել, այլ ինքն է հափշտակվել: Դա երիտասարդական մի սխալ է: Դա մի սովորական բան է, նշանակություն մի տուր, քեզ ոչ ոք չի անհանգստացնիլ, ոչ ոք...

ՕՎՍԱՆՆԱ. Օ՛, եթե միայն այդ լիներ, (Հանում է մատանին, և շպրտում է Ժորժի վրա): Վերցրեք և հեռացեք այստեղից...

ԺՈՐԺ. Բայց...

ՕՎՍԱՆՆԱ, Հեռացե՛ք, հեռացե՛ք, հեռացե՛ք: (Երեսը դարձնում է Ժորժից): Լռություն:

ԺՈՐԺ. (Թեքվում է և մատանին վերցնում):

ՕՎՍԱՆՆԱ. (Նամակը տալիս է Արամազդին): Առեք և գնացեք...

ԺՈՐԺ. (Միանգամայն ջախջախված): Դու չունիս իրավունք, Օվսաննա, դու ինձ անպատվում ես մի զրպարտչի մոտ...

ՕՎՍԱՆՆԱ. Դո՛ւրս, դո՛ւրս, ապա թե ոչ՝ ծնողներս կտեսնեն իմ խայտառակությունը...

ԱՐԱՄԱԶԴ. (Նամակը գրպանը դռնելով): Օրիորդ, շատ էլ խիստ մի լինիք: Մեղմացրեք ձեր հարվածը: Ասացեք այդ պարոնին, որ հափշտակված է ոչ ձեզանով, այլ ձեր օժիտով, թե ձեր հայրը սնանկ է, և դուք այժմ ոչինչ չունիք…

ԺՈՐԺ. (Չարախնդությամբ Արամազդին): Եթե այդպես է, ամուսնացեք նրա հետ ինքներդ: (Գնում է աջ կողմի երկրորդ դռներով):

ՏԵՍԻԼ 8

ՕՎՍԱՆՆԱ, ԱՐԱՄԱԶԴ, ՆԱՐԳԻԶ և ՆՈՒՆՈՒՖԱՐ

ԱՐԱՄԱԶԴ. (Նայել է Ժորժի ետևից արհամարհանքով: Մոտենում է Օվսաննային): Լսեցի՛ք, օրիորդ...

ՕՎՍԱՆՆԱ. Մի՛ մոտենաք, ես ձեզ արհամարհում եմ: (Այլևս չկարողանալով իրան զսպել, մի բարձր ճիչ է արձակում և, ընկնելով բազկաթոռի վրա, հեկեկում է):

ԱՐԱՄԱԶԴ. (Օվսաննայի «արհամարհում եմ» բառից հարվածված, մնացել է միևնույն դիրքում անշարժ):

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Շտապով մոտենում են Օվսաննային):

ԱՐԱՄԱԶԴ. (Հուսահատ մեկուսի): Արհամարհո՛ւմ է...

Վարագույր

ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

Արամազդ Աղավելյանի նոր բնակարանը:

Միանգամայն ժամանակակից, բայց առանց որոշ ճաշակի կահավորված սենյակ: Աջ պատի մեջ մի զույգ դռներ, որոնցից առաջինը տանում է Լեյլիի, իսկ երկրորդը Նոյիմզարի սենյակը: Ձախ պատի մեջ նույնպես մի զույգ դռներ, որոնցից առաջինը դեպի Արամազդի առանձնասենյակը, երկրորդը նախասենյակ: Խորքի պատի մեջ երեք բարձր լուսամուտներ:

Պատերի վրա նկարներ չկան: Աջ պատի վրա մի խումբ ինչ-որ լուսանկարներ: Ձախ պատի վրա մի մեծ հայելի: Միջին լուսամուտի վրա դրած է մի վանդակ, մեջը թութակ: Աջ լուսամուտի առջև, անկյունում մի գրամաֆոն, որի փողը դարձած է դեպի փողոց: Ձախ պատի առջև գահավորակ, սեղան, կիսաբազկաթոռներ: Այս ու այնտեղ աչքի զարնող փայլուն, գույնզգույն էժանագին զարդեր:

Դաշնամուր չկա, վառարան նույնպես: Առաստաղից քաշ է արած էլեկտրական ջահ:

ՏԵՍԻԼ 1

ՆՈՅԻՄԶԱՐ, ՁԱՎԱԴ և թութակ

Գարնանային իրիկնադեմ է, օրը հետզհետե մթնում է: Վարագույրը բարձրանալիս գրամաֆոնը նվագում է մի արևելյան եղանակ քամանչի վրա, առանց երգի:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Գրամաֆոնից ոչ հեռու նստած: Հրճվանքով ականջ է դնում: Այժմ թասակրավը թողել է, գլխի մազերը հարդարած են մոդային հավակնությամբ: Հագուստը նոր է և բաց գույնի: Մի քիչ լսելով, վեր է կենում և լուսամուտով նայում է դեպի փողոց): Հավաքվեցին, թող ականջ դնեն է, խեղճ են:

ՁԱՎԱԴ. (Վարագույրը բարձրանալիս գալիս է ձախ կողմի երկրորդ դռներով, ձեռքում մի շիշ ջուր և մոտենում է թութակի վանդակին: Մեկուսի): Չսիրեցի այդ ֆոնոգրաֆը, կասես հարբուխ ընկած ոչխարի ձայն է: (Թութակին): Հըմ, աղաբաշի՞, քե՞ֆդ, հա՞լդ: Ծարավել ես, հա՞: (Վանդակի մեջ ջուր է ածում և կորեկ ավելացնում): Կեր, խմիր, քեֆ արա: Մի քիչ խոսիր տեսնենք, ի՞նչ ես լեզուդ փորդ գցել: Ասա.

«Զյուլումն եկավ, դովլաթս տարավ

«Հիմար աշխարհ, քոռ, բախտ...

Ասա, հիմար, քոռ, հիմար, քոռ...

ՆՈՅԻՄԶԱՐ. Այդ ի՞նչ ես սովորեցնում թութակին:

ՁԱՎԱԴ. Իմ նոր մուխամազը: Այսօր շարադրեցի Աթանես աղայի համար:

ՆՈՅԻՄԶԱՐ. Շատ ես սիրում քո Աթանես աղային, այ:

ՁԱՎԱԴ. Աթանես աղան աղա է:

ՆՈՅԻՄԶԱՐ. Հապա ինչո՞ւ դուրս եկար նրա մոտից:

ՁԱՎԱԴ. Չպահեցին: ինչ անեմ: Ես ասացի «մի փոր հացով էլ կծառայեմ, Նարգիզ խանում, ռոճիկ չեմ ուզում»: Ասաց, «չէ, ավելորդ ես, հիմա Նունուֆարն էլ մեզ համար շատ է»:

ՆՈՅԻՄԶԱՐ. Հե, չունին, պրծավ, չոր տափի վրա մնացին..

ՁԱՎԱԴ. (Թութակին): Ասա, ա հիմար, ասա, «հիմար աշխարհ, քոռ բախտ»: էհ, հենց մի գլուխ կողքդ ես քորում ծուռ քթովդ: Գրամաֆոնը դադարում է:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Ուզում է նորից լարել):

ՏԵՍԻԼ 2

ՆՈՒՅՆՔ և ԼԵՅԼԻ

(Գալիս է շտապով դրսի հագուստով, ձախ կողմի երկրորդ դռներով: Հագնված է ավելի լավ, բայց համեստ և ճաշակով): Ահ, մի՛ լարիր, Նոյիմզար, բավական է: Հավաքվել են փողոցում, մեզ ծաղրում են: Ասում են, «չտեսներ են»:

ՁԱՎԱԴ. (Մեկուսի): Սուտ չեն ասում:

ՆՈՅԻՄԶԱՐ. Շատ հարկավոր է, որ ասում են: Նախանձից են ասում:

ԼԵՅԼԻ. (Խանգարում է արել): Ոչ, ոչ, թող խնդրում եմ: (Ծածկում է լուսամուտի փեղկերը և գրամաֆոնի փողը դարձնում է դեպի սենյակ):

ՆՈՅԻՄԶԱՐ. Լավ, չուզեցի: Ո՞րտեղից ես գալիս:

ԼԵՅԼԻ. Օվսաննայի մոտից: (Գլխարկը վերցնում է, դնում է բազկաթոռի վրա է, կանգնելով հայելու առջև, մազերն ուղղում է):

ՆՈՅԻՄԶԱՐ. Էլի՛: Ես քեզ չասացի, որ Ֆրանգուլյանների տունը ոտ չդնես:

ԼԵՅԼԻ. Անկարելի է Օվսաննային մենակ թողնել:

ՆՈՅԻՄԶԱՐ. Շա՞տ ես ցավում հա՞:

ՁԱՎԱԴ. Դե, իհարկե, պետք է ցավել: նրանք այժմ համարյա թե աղքատ են:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Արագ դառնալով դեպի Ձավադը): Հը՛: դու դեռ այստե՞ղ ես: Գնա բանիդ:

ՁԱՎԱԴ. Ե՛ս, մեղա աստծու: (Հեռանում է: Մեկուսի): Բա, բա, բա, բա, աստված ազատի թազա թխած խանումներից: (Թութակին): Հիմար աշխարհ, քոռ բախտ: (Գնում է ձախ կողմի երկրորդ դռներով):

ՏԵՍԻԼ 3

ՆՈՅԻՄԶԱՐ և ԼԵՅԼԻ

ԼԵՅԼԻ. (Նստում է գահավորակի վրա մտազբաղ): Այո, Ֆռանգուլյանների դրությունը ցավալի է, շատ ցավալի:

ՆՈՅԻՄԶԱՐ. Ես իսկի էլ չեմ ցավում:

ԼԵՅԼԻ. (Խորին կշտամբանքով): Նոյիմզար, չար մի՛ լինիր:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Մոտեցել է հայելուն ու նայում է իր հագստին): Է՛հ, ասում ես էլի: Մենք էլ ենք վատ օրեր ունեցել, նրանք ցավել են: Քսան տարեկան եղբայր կորցրինք, մի անգամ նրանցից մեկը մեր տուն ոտ դրե՞ց: Ձահել ամուսին թաղեցի, ո՞վ նրանցից եկավ ինձ մխիթարելու: Թաղման օրը քո այդ Նարգիզ խանումը խնջույք ուներ: Աշխարհն այսպես է: Հիմա մենք պիտի խնջույքներ տանք:

ԼԵՅԼԻ. Բայց մի մոռանար, որ Արամազդն Օվսաննային սիրում է:

ՆՈՅԻՄԶԱՐ. Իսկի էլ չի սիրում:

ԼԵՅԼԻ. (Դառը հեգնությամբ): Այո, լավ ես հետևում եղբորդ: Այն օրից, երբ նա պատռել է այդ Ադիլբեկյանի դիմակը, դարձել է անճանաչելի: Նա տանջվում է, Նոյիմզար, գիտես, տանջվում է: Գիշերները նա քուն չունի, երբեմն մինչև լուսաբաց պտտում է իր սենյակում, մերթ կիսամերկ, մերթ հագնված: Քանի՛-քանի՛ անգամ, շունչս պահած, ուշադրությունս լարած, այ այն դռների արանքից հետևել եմ նրան: Ես տեսել եմ նրա շվաքը պատերի վրա սահելիս, լսել եմ նրա քայլերի ձայնը և ծանր, երկարատև հառաչանքները: Նա պաշտում է Օվսաննային, իսկ Օվսաննա՜ն... (Ձեռով մի հուսահատական շարժումն անելով, ոտքի է կանգնում և սկսում է անցուդարձ անել):

ՆՈՅԻՄԶԱՐ. Իսկ Օվսաննան ի՜նչ: Էլի փքվում է ու տրաքո՞ւմ:

ԼԵՅԼԻ. Նա բնավ չի խոսում Արամազդի մասին, բնավ: Մի քանի անգամ ես դիտմամբ խոսք բաց արի, նա կարծես, խուլ է և համր Արամազդի անվան համար...

ՆՈՅԻՄԶԱՐ. (Բարկանալով): Մի հարցնող լինի, այժմ ինչովդ ես պարծենում, ամբարտավան, էլ ի՞նչ ունիս գոռոզանալու: Չէ, Լեյլի, դու անձնասիրություն չունիս, դու քո եղբոր հպարտությունը ոտնատակ ես անում, այդ աղջկա մոտը գնալով:

ԼԵՅԼԻ. Բայց, հասկացի՛ր, ինքն Արամազդն է ինձ ստիպում այժմ ամեն ուր գնալ Օվսաննայի մոտ և տեղեկություններ բերել նրա մասին:

ՆՈՅԻՄԶԱՐ. Որ այդպես է, ես այսօր նրա հետ կխոսեմ: Բայց թողնենք այդ: Գիտես, Լեյլի, այսօր ինչ եմ մտածել: Ախար մենք դաշնամուր չունինք:

ԼԵՅԼԻ. (Ձեռով մի արհամարհական շարժումն անելով): Է՛հ:

ՆՈՅԻՄԶԱՐ. Այո, այո, դա մեծ պակասություն է:

ԼԵՅԼԻ. Ո՞ւմ համար, ոչ դու գիտես նվագել, ոչ ես:

ՆՈՅԻՄԶԱՐ. Այդ մասին էլ եմ մտածել: Ես ուզում եմ երաժշտություն սովորել:

ԼԵՅԼԻ. Այդ հասակո՞ւմ:

ՆՈՅԻՄԶԱՐ. Ի՞նչ կա որ... քսանուինը տարին մեծ բա՞ն է:

ԼԵՅԼԻ. (Ակամա ժպտալով): Այսինքն երեսունուերկու տարին:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Վիրավորված): Ի՞նչ ես ամեն անգամ ուղղում, ես իմ տարիքը քեզանից լավ գիտեմ: Հապա ինձ նայիր (ինքը նայում է հայելուն), ո՞վ կարող է ինձ քսանուհինգից ավելի տալ: Թասակրավս վերցնելուց հետո, շատերն ինձ օրիորդ են համարում: (Տոնը փոխելով): Չէ, անպատճառ պետք է սովորել: Դժվարը թասակրավն էր, մնացյալը հեշտ է: Ինչո՛ւ չէ, մեր մատները մսից ու ոսկորի՞ց չեն:

ՏԵՍԻԼ 4

ՆՈՒՅՆՔ, ԱՐԱՄԱԶԴ և ՇԱՄԻԼ-ԲԵԳ

ԱՐԱՄԱԶԴ.(Գալիս է ձախ կողմի երկրորդ դռներով, հագնված է այնպես, ինչպես երկրորդ արարվածում): Շատ չավ, շատ լավ, այս երեկո էլ ես կլուբ կերթամ: Բայց թուղթ երբեք չեմ խաղալու, այս լավ իմացիր:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. (Գալիս է Արամազդի հետ: Հագնված է այնպես, ինչպես երկրորդ արարվածում): Լավ, ես կխաղամ, դու մոտս կնստես: Փորձել եմ, որ ոտդ ինձ գալիս է: Բարրիկուն քույրերի՛ս: (Ընտանեբար ձեռ է տալիս Նոյիմզարիս և Լեյլիին):

ԱՐԱՄԱԶԴ. Ինձ հարցնող չի՞ եղել:

ԼԵՅԼԻ. Ոչ: (Դիմում է Արամազդին հետաքրքրությամբ, բայց աննկատելի, հետո աչքերով ուղեկցում է նրան մինչև դռները):

ԱՐԱՄԱԶԴ. (Շամիլ-բեգին): Սպասիր, հագուստս փոխեմ, գնանք: (Արագ քայլերով գնում է ձախ կողմի առաջին դռներով):

ՏԵՍԻԼ 5

ՆՈՒՅՆՔ առանց ԱՐԱՄԱԶԴԻ

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. (Նստում է գահավորակի վրա ծանր ու բարակ): Քույր Նոյիմզար, նոր խաբար:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Վախեցած): Վիշկան այրվե՞լ է,

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. (Աչքերը չռելով): Դմբո, ի՞նչ տամ, որ խեր խոսեք: Ուրախ խաբար եմ ասում, սրտի մահլամ, մարդու հոգին փառավորող խաբար: Նոմեր չորրորդն էլ սկսեցինք քաշել: Գալիս է նավթը, գալիս աղբյուրի պես: Օրական երեք հազար փութ, լավ է, չէ՞:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Ուրախ): Տեսնո՞ւմ ես, Լեյլի, հիմա դաշնամուր չառնելը անկարելի է:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Բայց քույր Լեյլին չի ուրախանում: (Լեյլիին): Այդ ինչո՞ւ, հա՞:

ԼԵՅԼԻ. (Գալով բեմի կենտրոնը մտազբաղ): Ես ուրախ եմ, որ Արամազդին կլուբ եք տանում: Նա երեկոները միշտ տանն է...

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Իհարկե պիտի տանել: Բաս էլ ո՞ր օրվա համար ենք փող աշխատում, որ կլուբ էլ չգնանք: Գիտե՛ք, քույր Նոյիմզար, հիմա մեր ընկերության անունը այնտեղ բերանից բերան է անցնում: Հայ գիտի, հայ, որտե՞ղ էինք, որտեղ հասանք, (ձեռը հանդիսավոր բարձրացնելով) Շամիլ-բեգ Մելիք-Աղաջանով: Նիփթա պռոմըշնիկ: Չէ, Արամազդը հարիֆ է: Մին այն գրամաֆոն է, ինչ է, սարքեցեք, մի քիչ քեֆս բացվի: Մին բայաթի ղաջար կամ բայաթի շիրադ (նայում է դեսուդեն):

ՆՈՅԻՄԶԱՐ. Իսկույն, (Ուզում է գրամաֆոնը լարել):

ԼԵՅԼԻ. (Շամիլ-բեգին): Արամազդը չի սիրում:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Հաա, դե հարկավոր չէ, քույր Նոյիմզար, մի սարքիր:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Հեռանում է գրամաֆոնից):

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Արամազդին վերջերս մի քիչ տխուր եմ տեսնում է: Չգիտեմ, ո՞վ է նրա Էշին կաղ ասել: Չլինի՝ թե դրուստ է, որ ասում են, թե դովլաթր դարդ է անում:

(Դարձյալ նայում է դեսուդեն):

ՆՈՅԻՄԶԱՐ. Այդ ի՞նչ եք փնտրում, Շամիլ-բեգ:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Մի բան ասեմ, չնեղանաք, քույր Նոյիմզար, ձեր առաջվա կարգ ու սարքը ինձ ավելի էր դուր գալիս: Այստեղ (վիզը քորելով) մի բան պակասում է:

ՆՈՅԻՄԶԱՐ. Գիտեմ, դաշնամուր:

ԼԵՅԼԻ. Ո՛չ, բուֆետ:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Ափարին, քույր Լեյլի, հարիֆ ես, լավ իմացա (Նոյիմզարին): Ասելս այն է, որ առաջ ամեն բան ձեռքի տակ էր: Մեկ-մեկ ես ինքս էլ էի մոտենում բոսիետինք, Մախլա՛ս:

ԼԵՅԼԻ. Եթե գինի եք աղում, կարող եմ բերել:

ՆՈՅԻՄԶԱՐ. Ո՛չ, ոչ, այս սենյակում ուտել-խմելն արգելված է: Ուզո՞ւմ եք, համեցեք սեղանատուն:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Դմբո՛, այդպես շուտ արիստոկրատ՛ դարձա ք: Լավ, այդ էլ չուզեցինք: Մի քույրը գրամափոնն է արգելում, մյուսը գինի, արի ու քեփ արա, Շամիլ-բեգ: (Վեր է կենում): Ձեր ղուշը խոսել սովորե՞ց:

ՆՈՅԻՄԶԱՐ. Մեկ-մեկ բառ ասում է, չեմ հասկանում:

ԼԵՅԼԻ. (վերցնում է յուր գլխարկը բազկաթոռի վրայից և դնում է աջ կողմի առաջին դռներով):

ՏԵՍԻԼ 6

ՇԱՄԻԼ-ԲԵԳ, ՆՈՅԻՄԶԱՐ և թութակ

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. (Մոտենում է թութակին): Տեսնենք, կարելի է ես հասկանում: (Թութակին): Ադա, ջուալլաղի, ի՞նչ ես քիթդ քաշ արեր: Հը, ասա, խոմ ժալոնկադ հորը չի ընկել, «Շամիլ-բեգ, Մելիք-Աղաջանով, Խամսայի մելիքներից»:

ՆՈՅԻՄԶԱՐ. Այդ շատ երկար է, չի կարող ասել:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Ասա: «Շամիլ-բեգ, Շամիլ-բեգ»:

ԹՈՒԹԱԿ. (Խուլ): Բեգ, հիմար, բեգ...

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Ինչպե՞ս, լավ չլռեցի, պարզ ասա:

ԹՈՒԹԱԿ. Հիմար, հիմար, հիմար:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Ծիծաղում է):

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Հիմա՛ր: Ե՞ս: Ադա, դու ինձ որտեղի՞ց ես ճանաչում:

ԹՈՒԹԱԿ. Քոռ, քոռ, քոռ…

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. (Բարկանալով): Քոռ էլ ես ու կտրիր ձայնդ, հարամզադա (Բարկացած վերադառնում է բեմի կենտրոն): Խոսք չունիմ, լավ բան եք սովորեցրել:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Տակավին ծիծաղելով): Այդ անպիտան Ջավադը սովորեցրեց մի քիչ առաջ:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Չէ՛, շատ ուսումնական ղուշ է, մարդու երեսին ասում է «քոռ, հիմար»: Լավ էր, որ մի պատվավոր մարդ չկար այստեղ, թե չէ: (Նայում է գրպանի ժամացույցին): Էհ, Արամազդն ուշացավ: Ես որ կլուբ ուշ եմ գնում, պարտնյորներ չեմ գտնում: (Նախասենյակում գանգակ):

ՆՈՅԻՄԶԱՐ. Ո՞վ պետք է լինի, (Մոտենում է ձախ կողմի երկրորդ դռներին):

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Հեչ, որ մարդ եկավ, Արամազդին կլուբ տանել դժվար է:

ՏԵՍԻԼ 7

ՆՈՒՅՆՔ, ՍԱՄՎԵԼ ՈՒ ԱՐԱՄԱԶԴ

ՍԱՄՎԵԼ. (Գալիս է ձախ կողմի երկրորդ դռներով: Տխուր է): Ներեցեք, տիկին, Արամազդը տանն է:

ՆՈՅԻՄԶԱՐ . (Հպարտ): Այո, իսկույն կգա, կարող եք սպասել:

ՍԱՄՎԵԼ. (Նայում է շուրջը թեթևակի):

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Դուք Աթանես աղայի որդին չեք: Բարով: (Մոտենալով, հեռվից արդեն ձեռքը մեկնել է):

ՍԱՄՎԵԼ. (Բռնելով Շամիլ-բեգի ձեռը թույլ, բայց քաղաքավարի): Ներեցեք, ես ձեզ չեմ ճանաչում:

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Մելիք Աղաջանով, Խամսայի մելիքներից, նեփ թա պռոմիշնիկ:

ՍԱՄՎԵԼ. Շատ ուրախ եմ:

ԱՐԱՄԱԶԴ. Ես պատրաստ եմ, Շամիլ: (Գալիս է ձախ կողմի առաջին դռներից, լվացված, հագուստը փոխած, այժմ երևում է գունատ և նկատելի նիհարած: Տեսնելով Սամվելին, չի զարմանում, այլ առանց որևէ ձևականության, բարեհամբույր): Սամվել, բարով: (Ձեռ է տալիս): Ինչ կհրամայես, նստիր:

ՍԱՄՎԵԼ. Եթե ժամանակ ունես, մի քանի րոպե նվիրել ինձ: (Նայում է Շամիլ-բեգին և Նոյիմզարին):

ԱՐԱՄԱԶԴ. Բոլորովին ազատ եմ: (Նոյիմզարին նշան է անում հեռանալու):

ՇԱՄԻԼ-ԲԵԳ. Դե, Արամազդ, ես գնացի, դու հետո կգաս: Բա չէ՝ պարտնյորներ չեմ գտիր (Գնում է ձախ կողմի երկրորդ դռներով):

ԱՐԱՄԱԶԴ. Լավ:

ՆՈՅԻՄԶԱՐ. (Մի քանի անգամ գոռոզաբար նայում է Սամվելին, գնում է աջ կողմի երկրորդ դռներով):

ՏԵՍԻԼ 8

ԱՐԱՄԱԶԴ և ՍԱՄՎԵԼ

ԱՐԱՄԱԶԴ. Ի՞նչ է պատահել, դու այլայլված ես: Նստի՛ր: (Նստում է բազկաթոռներից մեկի վրա, մի ուրիշը ցույց տալով Սամվելին):

ՍԱՄՎԵԼ. Արամազդ, Լևոնը խելագարվեց: (Նստում է):

ԱՐԱՄԱԶԴ. (Ազդված): Ի՞նչ ես ասում, ե՞րբ:

ՍԱՄՎԵԼ (Հառաչելով): Արդեն երկու շաբաթ է, որ պարզ նշաններ էր ցույց տալիս, իսկ այս վերջին օրերը դարձել էր վտանգավոր: Այսօր վճռեցինք տանել նրան Մոսկվա և հանձնել մի բուժարան: Ուշացնել անկարելի է, պետք է շուտով տանեի և ահա ես եկել եմ քո օգնությունը խնդրելու:

ԱՐԱՄԱԶԴ. Ի՞նչով կարող եմ, արդյոք, օգտակար լինել:

ՍԱՄՎԵԼ. Արամազդ, տասնուհինգ տարի դու եղել ես մեր ընտանիքին ավելի մոտիկ, քան մինչև անգամ ես: Դու գիտես մեր բոլոր հանգամանքները, ահա ինչու ես գերադասեցի քեզ բոլոր մեր ազգականներից: Բացի այս, Լևոնը ոչ ոքի այնքան չի հարգում, որքան քեզ:

ԱՐԱՄԱԶԴ. Դու ուզում ես, որ ես նրան ուղեկցեմ մինչև Մոսկվա:

ՍԱՄՎԵԼ. Ոչ, այդքանը խնդրելու իրավունք չունիմ: Ինձ հետ կլինի մի ֆելշեր, և մենք երկուսով կարող ենք Լևոնին տանել երկաթուղով, դժվարը մինչև կայարանն է: Ահա այս նեղությունն է, որ խնդրում եմ քեզ հանձն առնել:

ԱՐԱՄԱԶԴ. Շատ բարի: Ե՞րբ եք գնում:

ՍԱՄՎԵԼ. Վաղը, առավոտյան գնացքով:

ԱՐԱՄԱԶԴ. Առավոտյան գնացքը ճանապարհ է ընկնում ուղիղ ութ ժամին, ես կգամ ձեզ մոտ լուսաբացին: Ուրի՛շ: Ես կկամենայի ավելի դժվար մի հանձնարարություն ստանալ Լևոնի վերաբերմամբ: Ես նրան միշտ սիրել ու հարգել եմ: Նա շատ զարգացած երիտասարդ է, ես նրանից շատ բան եմ սովորել:

ՍԱՄՎԵԼ. Դժվար հանձնարարություն ես ունիմ կատարելու, Արամազդ: (Դուրս է բերում գրպանից մի ծրար ու տալիս Արամազդին): Վերցրո՛ւ:

ԱՐԱՄԱԶԴ. (Ծրարն, առնելով): Այս ի՞նչ է:

ՍԱՄՎԵԼ. Քույրս տվեց քեզ հանձնելու:

ԱՐԱՄԱԶԴ. (Շտապով բաց է անում ծրարը ու նրա միջից դուրս է բերում երկու ուրիշ փոքրիկ ծրարներ: Հիսաթափված): Իմ նամակները, օրիորդ Օվսաննայի գրած: (Նայում է մեծ ծրարի մեջ): Եվ ոչ մի տոմսակ, ոչ մի բացատրություն: (Ծրարները ձգում է սեղանի վրա և ոտքի է կանգնում): Ահ, Սամվել, այդքան վիրավորանք ես քո քրոջից չէի սպասում:

ՍԱՄՎԵԼ. (վեր կենալով): Ի՜նչ արած, ասում են համառոտությունը այդպիսի դեպքերում ամենավատ գործակիցն է: Ուժով սեր գրավել չի կարելի: Մոռացիր — ահա բոլորը, ինչ որ կարող եմ ասել:

ԱՐԱՄԱԶԴ. Բայց ես նրանից մեր չեմ աղերսում այս նամակներով: Այստեղ իմ զգացումների մասին ակնարկ անգամ չկա:

ՍԱՄՎԵԼ. Հապա ինչի մասին ես գրել:

ԱՐԱՄԱԶԴ. Վերցրու և կարդա: Ես Օվսաննայի միջոցով առաջարկում եմ իմ օգնությունը քո հորը:

ՍԱՄՎԵԼ. (Ուրախացած): Այո:

ԱՐԱՄԱԶԴ. Այո, Ես խոստանում եմ իմ բոլոր ուժերը, ճարպիկությունը, նոր ձեռք բերած վարկը գործ դնել ծերունուն դուրս բերելու անել վիճակից, նրա գործերը վերականգնելու, (բաց է անում ծրարները և նամակները տալիս է Սամվելին): Ահա կարդա ծայրե ի ծայր, այստեղ մի բան չկա որից ես կարողանամ ամաչել:

ՍԱՄՎԵԼ. Ես հավատում եմ քեզ առանց կարդալու էլ:

ԱՐԱՄԱԶԴ. Ոչ կարդա, կարդա, և բովանդակությունը հաղորդիր այդպես ոտնատակ է անում իմ անձնասիրությունը:

ՍԱՄՎԵԼ. (վերցնում է նամակներն ու աչքի է անցկացնում):

ԱՐԱՄԱԶԳ. (Խոսում է անցուդարձ անելով, Սամվելի կարդալու միջոցին): Այդչափ հպարտությո՛ւն: Ի՞նչպես են ուրիշները կարողանում գրավել կանանց սիրտ չգիտեմ: Մի թե ավելի դժվար է մի աղջկա համառությունը հաղթել, քան երեկվա գործակատարից այսօր դառնալ ամբողջ բորսայի նախանձի առարկա: , Մի թե ավելի է հարկավոր, քան անձնազոհությունը:

ՍԱՄՎԵԼ. (Նամակների բովանդակությունից հանկարծ հափշտակված): Արամազդ, դու ուղղակի հազվագյուտ մարդ ես: Այս նամակները կարող են պատիվ բերել մի ասպետի սրտին ու հոգուն: Գոնե ինձ թույլ տուր սեղմել քո ձեռը և հայտնել անկեղծ, անկեղծ շնորհակալություն: (Մոտենում է Արամազդին ու ոգևորված բռնում է նրա ձեռը):

ԱՐԱՄԱԶԴ. (Հուսահատ և անտարբեր): Էհ: թողնենք, չարժե:

ՍԱՄՎԵԼ. Այլևս ինչն արժե երախտագիտության, եթե ոչ մի այդպիսի վարմունք: Ֆռանգուլյանները կարող են կորցնել ամեն բան, բայց երախտագիտություն պետք է ունենան: Ես այս նամակները կվերադարձնեմ Օվսաննային, կստիպեմ նրան կարդալ, որպեսզի լավ ճանաչի քեզ: (Ուզում է նամակները դնել իր գրպանը):

ԱՐԱՄԱԶԴ. Ոչ, թող մնա: Այդ տեսակ վիրավորանքից հետո չարժե: Ես ճանաչեցի, վերջապես քո քրոջը: Նա իր հոր կատարելատիպն է համառության կողմից: Տուր ինձ այդ նամակները:

ՍԱՄՎԵԼ. (Դնում է նամակները սեղանի վրա): Այն ժամանակ իրավունք չունիմ քեզնից որևէ աջակցություն խնդրելու: Ներիր, որ նեղություն տվեցի: Մնաս բարև: (Ուզում է գնալ):

ԱՐԱՄԱԶԴ. Այդպես չէ, մի՛ շտապիր: Լևոնին մի՛ խառնիր այդ գործի մեջ, Ես շատ բան եմ պարտական նրան: Առավոտը կանուխ ես կգամ ձեր տուն և ինչ որ հարկավոր է, կանեմ: Այս մեկն իմ սուրբ պարտականությունն է: Ցտեսությո՛ւն: (Ձեռ է տալիս Սամվելին):

ՍԱՄՎԵԼ. Ինչպես կամենաս: (Գնում է ձախ կողմի երկրորդ դռներով):

ԱՐԱՄԱԶԴ. (Մի քանի վայրկյան մենակ է: Անցուդարձ է անում, հառաչելով, կատաղելով):

ՏԵՍԻԼ 9

ԱՐԱՄԱԶԴ և ԼԵՅԼԻ

ԼԵՅԼԻ. (Գալիս է աջ կողմի դռներով: Տեսնելով Արամազդին հուսահատված, մի քանի վայրկյան չի վստահանում խոսել) Կլուբ չե՞ս գնալու:

ԱՐԱՄԱԶԴ. (Սթափվելով): Ահ, Լեյլի, Քանի ժամն է, (Նայում է իր դալանի ժամացույցին): Տասն է. Արդեն ուշ է, չարժե:

ԼԵՅԼԻ. Բայց ահա մի ամսից ավելի է, որ դու երեկոները տնից դուրս չես գալիս: Այդ լավ չէ: Ցերեկվա այնչափ աշխատությունից հետո մի քիչ հանգստանալ հասարակության մեջ անհրաժեշտ է:

ԱՐԱՄԱԶԴ. Լսեցի՛ր ով էր այստեղ:

ԼԵՅԼԻ. Այո՛:

ԱՐԱՄԱԶԴ. Դու դռների ետևից ականջ էիր դնում, այնպես չէ:

ԼԵՅԼԻ. (Շփոթվելով): Այո՛:

ԱՐԱՄԱԶԴ. Ոչինչ, քեզ ներելի է, Ահա՛, (Ցույց է տալիս սեղանի վրա դրած նամակները): Երկու նամակ եմ ուղարկել նրան ծառայի ձեռքով, երկուսն էլ վերադարձնում է առանց կարդալու:

ԼԵՅԼԻ. Նա ինձ ոչինչ չի ասել այդ մասին:

ԱՐԱՄԱԶԴ. Այնքան դեպի ինձ անտարբեր է, որ անունս անգամ չի արտասանում: Ահ, երբեք չեմ մոռանալ այն վայրկյանը, երբ նա, դուրս վռնդելով այն թշվառին, դարձավ ինձ և ասաց, «մի մոտենաք, ես ձեզ արհամարհում եմ». Ես ուզում էի նրան խոսքերով մխիթարել, իսկ նա... Օհ, նրա դեմքի արտահայտությունն այդ վայրկյանին, նրա ձայնի հնչյունը, ձեռի

շարժում: Ես ինձ զգացի ստորացած, ոչնչացած: Եվ ինչու, ի՞նչ պատճառով: Որովհետև բաց արի նրա աչքերը և ցույց տվեցի այն անդունդը, ուր պատրաստվել էր գլորվելու: Բայց չէ որ այդ բարություն էր իմ կողմից և ոչ նախանձ, չարություն: Շնորհակալության փոխարեն վիրավորանք: Ասա, Լեյլի, դու նրան ճանաչում ես, ի՞նչ է նշանակում այդ առեղծվածը:

ԼԵՅԼԻ. Դժվար է հասկանալ Օվսաննային: նա շատ ծածկամիտ է:

ԱՐԱՄԱԶԴ. Եվ այդ բոլորից հետո դարձյալ չկարողացա ինձ զսպել, մի անգամ էլ փորձեցի հիշեցնել նրան իմ մասին: Լեյլի, Լեյլի: կարծես, մի աներևույթ չար ձեռք բռնել է թևիցս և, հակառակ իմ կամքի ու խելքի, տանում է ինձ անկումից անկում: Ես միանգամայն զրկվել եմ իմ անձնասիրությունից, Լեյլի, հպարտության կաթիլ անգամ չմնաց իմ մեջ: Սակայն նա կարող է արհամարհել ինձ, բայց ինչո ւ այդչափ քարսրտություն, ինչո՞ւ, ինչո՞ւ: (Անցուդարձ է անում):

ԼԵՅԼԻ. Չեմ կարծում, որ Օվսաննան վիրավորելու մտքով է վերադարձրել այդ նամակները:

ԱՐԱՄԱԶԴ. Ախ, Լեյլի, դու ինքդ բարի լինելով, կարծում ես ամենքն էլ քո սիրտն ունին: Չար է այդ աղջիկը, չար; անսիրտ: Մեկի փոխարեն պատժում է մյուսին: Մեղավո՞ր եմ ես, միթե որ այսպես հափշտակվել եմ և խելքս կորցրել: Այո, լինելով նրա հոր գործակատարը, ես պարտավոր էի ճանաչել իմ հասարակական դիրքը և համեստ պահել ինձ: Բայց մի՞թե գործակատարը սիրտ չունի, հոգի չունի, միթե նա չի կարող զգալ, տանջվիլ, ինչպես ուրիշները:

ԼԵՅԼԻ. Բավական է, քիչ մաշիր սիրտդ: Չարժե, այսուհետև քեզ համար բոլոր դռները բաց են, դու կարող ես Օվսաննայից ավելի սիրուն և ավելի խելոք հարսնացու գտնել:

ԱՐԱՄԱԶԴ. Ոչ: Լեյլի Ոչ, ոչ ոք չի կարող ինձ այնպես գրավել: Կամ Օվսաննան, կամ մինչև մահ մենակություն, տխուր և անտանելի կյանք:

ԼԵՅԼԻ. Այս րոպեիս ես կգնամ նրա մոտ և բացատրություն կպահանջեմ: Դեռ ուշ չէ, դեռ կարող է ինձ ընդունել: Չի՛ կարելի իմ եղբորն այդպես անպատվել: Թող իմանա այդ հպարտը, որ դու ես հպարտ ես, որ այդ նամակներով նրանից սեր չես խնդրում, որ դու մուրացկան չես, այլ, ընդհակառակը, ինքդ ես առաջարկում քո օգնությունը: Թող նա կարդա գոնե և ամաչի իր արածից: Տո՛ւր ինձ. այդ նամակները: (Ուզում է նամակները վերցնել):

ԱՐԱՄԱԶԴ. (վերցնում է ծրարները Լեյլիից առաջ ու պատռում): Այդ մասին այլևս ոչ մի խոս: Բավական է, որքան ինձ ստորացրի: Թող կորչի զգացումը, սերն ինձ նմանների համար չէ: Պետք է մոռանալ և ամեն զգացում խեղդել աշխատության մեջ, (Հանկարծ զգացվելով): Ա՜հ, այսքան սիրել և այսքան արհամարհվել ու տանջվել : (Այլևս չկարողանալով իրան զսպել, նստում է բազկաթոռերից մեկի վրա և, ձեռները սեղմելով գլխին, սկսում է ուժգին հեկեկալ):

ԼԵՅԼԻ. (Մոտենում է): Արամազդ, մի՛ հուսահատվիր...

Վարագույր

ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Դարձյալ Ֆռանգուլյանների բնակարանը: Նույն գրասենյակը: Այժմ չկան գորգերը և դաշնամուրը: Սենյակը զրկվել է և ուրիշ զարդերից, ուստի թվում է ամայի և մռայլ: Խորքի թախտը այժմ ծածկված է մի փոքրիկ հասարակ գորգով:

ՏԵՍԻԼ 1

ՆԱՐԳԻԶ, ՆՈՒՆՈՒՖԱՐ, հետո ԱԹԱՆԵՍ

Ուշ գիշեր է: Բեմի վրա տիրում է կատարյալ մթություն: Վարագույրները լուսամուտների վրա իջեցրած են:

ՆՈՒՆՈՒՖԱՐ: (Վարագույրը բարձրանալիս գալիս է աջ կողմի երկրորդ դռներով, մի ձեռում մի դատարկ չեմոդան, մյուսում մոմկալ վառած մոմով: Չեմոդանը դնում է բեմի խորքում, իսկ մոմկալը բերում դնում է աջ կողմի սեղանի վրա):

Բեմը լուսավորում է կիսով չափ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Աչքերն անքնությունից տրորելով, նայում է շուրջը: Նկատելով Նարգիզին թախտի վրա, բեմի խորքում, մոտենում է և կամացուկ զարթեցնում): Խանում, խանում:

ՆԱՐԳԻԶ. (Վարագույրը բարձրանալիս հագնված պառկած է խորքի թախտի վրա: Գլուխը բարձրացնում է վախեցած): Հը՛, ի՞նչ կա:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. Մի՛ վախենաք, բան չի պատահել: Հիմա ես ոտքի եմ, կիսկեմ, գնացեք ձեր սենյակը, մի քիչ քնեցեք:

ՆԱՐԳԻԶ. (Դանդաղ վերկենալով): Քանի՞ ժամն է:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. Դեռ մութն է:

ՆԱՐԳԻԶ. Ձայն լսե՞լ ես նրա սենյակից:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. Հանգիստ քնած է:

ՆԱՐԳԻԶ. Թող հանգստանա, տասնումեկ գիշեր չի քնել: Տանում են երեխայիս, Նունուֆար, խլում են նրան իմ ձեռքից:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. Աստված ողորմած է, կառողջանա, ետ կգա:

ՆԱՐԳԻԶ. (Ձեռը հուսահատաբար շարժելով): Չէ՛, չէ՛ (Հառաչում է): Գնա, ինչ որ հարկավոր է, բեր պատրաստենք:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. Սամվել սպան ասել է սպասենք իրան: Հրամայել է երեքուկես ժամին զարթեցնել:

ԱԹԱՆԵՍ. (Բեմի ետևում բարձրաձայն աղաղակում է): Աա, աա ...

ՆԱՐԳԻԶ. (Ցնցվելով): Նա է:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. Ոչ, այդ մեծ աղայի ձայնն էր: (Վազում է դեպի աջ կողմի առաջին դռները, բայց կանգ է առնում Նարգիզի հրամանով):

ՆԱՐԳԻԶ. Սպասի՛ր, թո՛ղ ես ինքս կտեսնեմ ինչ պատահեց: Լամպը վառիր: Ամեն գիշեր այդպես գոռում է երազում: (Մոտենում է աջ կողմի առաջին դռներին):

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Վառում է սեղանի վրա դրած լամպը, մոմկալը վերցնում է և գնում է խորքի դռներով): Մոմը լուսավորվում է ավելի:

ԱԹԱՆԵՍ. (Երևում է աջ կողմի առաջին դռների մեջ խալաթով, դեմքն այլայլված, մազերը գզգգված): Ա՜հ, զարհուրելի է, զարհուրելի :

ՆԱՐԳԻԶ. Էլի, ի՜նչ պատահեց մարդ:

ԱԹԱՆԵՍ. Երազ տեսա, երազ: Ինձ քաշել էին դատաստան, նախատում էին, ասում էին. «դու խաբեբա ես, դու կլանել ես ուրիշների վաղը»: Թքում էին երեսիս, նարգիզ, թքում էին: Աահ: (Դանդաղ քայլերով անցնում է բեմի ձախ կողմը, ձեռները դնելով խալաթի գրպանները):

ՆԱՐԳԻԶ. Լավ, գնա, պառկիր, դեռ գիշեր է:

ԱԹԱՆԱՍ. (Դեռ զառացանքից չի ազատվել): Ի՞նչ, ասում ես, մանեթին քառասուն կոպե՞կ տայի: Չի լինիլ: Այ, ձեռքդ կբռնեմ՝ փողոցները կընկնեմ, մուրացկանություն կանեմ, այդ չեմ անի: (Արտասվոր ձայնով): Ամենքը երես դարձրին, ամենքը, բարեկամներ, ազգականներ: Մենակ ենք, Նարգիզ, բոլորովին մենակ:

ՆԱՐԳԻԶ. Այո, քանի տունդ լիքն էր, գալիս էին, ուտում, խմում, հազար ու մի գովասանք շռայլում երեսիդ:

ԱԹԱՆԵԱ. Օ՜օ, եթե ես իմանայիր ամենքին շան պես դուրս կանեի իմ դռներից: Չիմացա, չիմացա... (Անցուդարձ է անում, ձեռքերը գրպանից Տանելով ու մտցնելով խալաթը թևերի մեջ):

ՆԱՐԳԻԶ. Ոչինչ, աստծու ողորմությունը մեծ է, էլի կգան այդ օրերը:

ԱԹԱՆԵԱ. (Կանգ առնելով); Այա, սո՜ւս, հերիք է, ինչքան խաբեցի ձեզ: Մի ասա գերեզմանի մեջն է, այն օրերն էլ չենք տեսնիր, նա կտեսնի հիմա երջանիկ օրեր, Նա: Չարը շուռ եկավ, նրան բարձրացրեց, ինձ տակովն արավ (Նստում է):

ՆԱՐԳԻԶ. Լավ, գնա քնիր, քիչ տանջիր քեզ և մեզ: Հերիք է իմ ցավն ինձ... այսօր որդիս ձեռքիցս գնում է...

ԱԹԱՆԵԱ. (Չի լսում Նարգիզին, միշտ իր մտքովն զբաղված): Ասում ես, որ մեր դռները նե՞ղ են նրա համար, շա՜տ է հաստացել: Չեմ ուզում, չեմ ուզում, որ գա այստեղ: Նա կտեսնի ինձ այս դրության մեջ, կուրախանա, երեսիս քահ-քահ կծիծաղի: Նա կասի, «տեսա՞ր, որ ես քեզանից խելոք եմ, որ վաճառականությունը դու չգիտես, ես գիտեմ: Դե գնա ու պարծեցիր այժմ քո յոթանասունուհինգ տարվա անունով»: Հեե՜, եթե ես մի խելքը գլխին ժառանգ կունենայի, ինչպես հայրս ունեցավ, ցույց կտայի այդ լակոտներին:

ՆԱՐԳԻԶ. (Դառնագին): Խնայիր ինձ, մարդ, խնայիր, մի՜ քրքրիր իմ սրտի խոցը:

ԱԹԱՆԵՍ. Ցամաքեց, չորացավ ինձ համար երկնքի ողորմությունը: (Լռություն: Տունը փոխելով): Ե՞րբ են տանում անբախտին: (Նստում է):

ՆԱՐԳԻԶ. Այսօր, մի երկու ժամից հետո:

ԱԹԱՆԱՍ. Փող պետք է տալ Սամվելին. առանց փողի չեն բժշկի նրան: Բայց փող չկա, չկա. բոլորը խլեցին ձեռքիցս:

ՆԱՐԳԻԶ Լավ, մի՜ մտածիր, ես փող գտա նրա համար:

ԱԹԱՆԵՍ. Գտա՞ր, այո՞, ինչպե՞ս, ո՞վ տվեց: (նայում է շուրջը): Նարգիզ, ո՜ւր է Օվսաննայի դաշնամուրը: (Վեր է կենում): Աա՞, ո՞ւր է:

ՆԱՐԳԻԶ, (Ընկճված): Ծախեցի քրոջդ աղջկան:

ԱԹԱՆԵՍ. Գորգե՞րը, պապիցս մնացած գորգե՞րը:

ՆԱՐԳԻԶ. Ուղարկեցի քրոջդ տուն պահելու: (Խորհրդավոր): Ո՞վ գիտես:

ԱԹԱՆԵՍ. (Կատաղելով): Ինչպես համարձակվեցիր: Ոչ մի բան չպիտի թաքցնել պարտատերերից, ոչ մի բան, մի ասեղ անգամ: Թող գան, վերգրեն, ծախեն աճուրդով, ավերակ դարձնեն տունս, միայն թե չասեն, որ ես գող եմ: Ե՛տ բերել տուր այդ գորգերը, լսում ես, ետ բերել տուր:

ՆԱՐԳԻԶ. Լավ, հանգստացիր:

ԱԹԱՆԵԱ. (Ընկնվելով): Ի՜նչ օրի հասանք: (Լուռ է):

ՆԱՐԳԻԶ. Հերիք է, հերիք է, հերիք է...

ԱԹԱՆԵԱ. (Ձսպելով արցունքը): Չէ, չէ, լաց լինելն ամոթ է, կնիկություն, թշնամիներս ավելի կուրախանան: (Տոնը փոխում է): Գիշերվա ո՞ր ժամանակն է: Բեմի ետևում եկեղեցական գանգի երեք ծանր հարված:

ՆԱՐԳԻԶ. Ահա երրորդությունը տվեցին: Գնա, պառկիր:

ԱԹԱՆԱՍ. (Երեսը խաչակնքում է): Աղոթք անելն էլ մոռացա: Ահ, գլուխս տրաքվում է:

ՆԱՐԳԻԶ. Գնա, ասում եմ, գնա, բայղուշ, հերիք է:

ՏԵՍԻԼ 2

ՆՈՒՅՆՔ, ՍԱՄՎԵԼ ու ՆՈՒՆՈՒՖԱՐ

ՍԱՄՎԵԼ (Գալիս է խորքի դռներով, պիջակը հագնելով, հետո փողկապը կապելով: Նունուֆարին, որ հետևում է նրան): Չեմոդանս մաքրե՞լ ես:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Գալիս է խորքի դռներով Սամվելի ետևից: Ցույց է տալիս պատի տակ դրած չեմոդանը): Այ: Օրիորդին զարթեցնե՞մ:

ՍԱՄՎԵԼ. Այո՛: Բեր այստեղ ճերմակեղենս:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Գնում է խորքի դռներով):

ՍԱՄՎԵԼ. (Ծնողներին): Դո՞ւք ինչու համար եք այսպես վաղ զարթնել: Հայրիկ, գնա պառկիր, ժամանակին ես քեզ կզարթնեցնեմ:

ԱԹԱՆԵՍ. Հա՛, կարգադրիր, որդի, ես բանի պետք չեմ: Ահ, գլո՛ւխս: (Գնում է աջ կողմի երկրորդ դռներով):

ՏԵՍԻԼ 3

ՆԱՐԳԻԶ, ՍԱՄՎԵԼ, մերթ ընդ մերթ ՆՈՒՆՈՒՖԱՐ

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Բերում է խորքի դռներով ճերմակեղենի մի կապոց):

ՍԱՄՎԵԼ. (Առաջ քաշելով մի աթոռ): Դի՛ր այստեղ: (Չեմոդանը բերում է բեմի կենտրոնը ու սկսում է ճերմակեղենը դարսել այնտեղ):

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Գնում է հետ, խորքի դռներով):

ՆԱՐԳԻԶ. (Մոտեցել է լուսամուտներից մեկին, վարագույր, բաց է անում): Լույսը բացվում է, մշակներն ուրախ-ուրախ գնում են իրենց աշխատանքին: Երանի նա էլ ձեր մեջ լիներ և ձեզ նման առողջ:

ՍԱՄՎԵԼ. Մայրիկ, շուտով այստեղ կգա Արամազդը: Ես նրան խնդրել եմ, որ ինձ օգնի՝ Լևոնին կայարան տանելու: Ի սեր աստծու, այնպես արա, որ հայրիկը նրան չվիրավորի: Առհասարակ չգիտեմ այդ մարդն ինչ է արել ձեզ, որ ամենքդ նրա դեմ մի տեսակ ատելություն ունիք:

ՆԱՐԳԻԶ. Նա հորդ թողեց նեղ դրության մեջ, հեռացավ, իսկ հիմա բոլորովին երես է դարձրել մեզանից: (Սկսում է Սամվելին օգնել՝ իրերը տեղավորելու):

ՍԱՄՎԵԼ. Դու գիտես, որ Արամազդը հարգելի պատճառ ունի մեր տունը ոտ չդնելու:

ՆԱՐԳԻԶ. Ո՞վ է մեղավոր: Թող իր չափն իմանար:

ՍԱՄՎԵԼ. Եթե Օվսաննան կարողանար մարդ ճանաչել, Արամազդի առաջարկությունը կընդուներ ուրախությամբ:

ՆԱՐԳԻԶ. Իհարկե, հիմա ամենքն էլ այդպես կասեն, Պրիկազչիկն հարստացել է ու մարդկանց շարքն ընկել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Խորքի դռներով բերում է ճերմակեղենի մի ուրիշ կապոց և գնում է նույն աթոռի վրա ու սպասում հրամանների):

ՍԱՄՎԵԼ. Զարմանալի գաղափար ունիք մարդու մասին: Մեր կարծիքով հարստանալ — կնշանակե մարդկանց շարքն ընկնել: Արամազդը միշտ մարդ է եղել և ազնիվ մարդ: (Նունուֆարին): Գնա այժմ հագուստ բեր:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Գնում է խորքի դռներով):

ՆԱՐԳԻԶ. Այդ ո՛ր ժամանակից դու նրան հավանեցիր:

ՍԱՄՎԵԼ. Հենց այն օրից, երբ նա եկել է մեզ մոտ ծառայելու: Երեկ քիչ էր մնում ամոթից գետինը մտնեի Օվսաննայի պատճառով:

ՆԱՐԳԻԶ. Ինչո՛ւ:

ՍԱՄՎԵԼ. Արամազդն երկու անգամ գրում է նրան, թե պատրաստ է հայրիկին օգնել և խնդրում է համոզել ծերունուն, որ իր օգնությունն ընդունի: Օվսաննան նրա նամակները ետ է ուղարկում առանց բաց անելու: Եվ ետ տանողն էլ հիմարաբար ես եմ լինում:

ՆԱՐԳԻԶ. (Դադարելով Սամվելին օգնելու, զարմացած նայում է նրան): Արամազդն ուզում է օգնե՞լ հորդ:

ՍԱՄՎԵԼ. Այո, մայրիկ, և կարող է օգնել: Այժմ նա ահագին վարկ ունի մեր քաղաքում: Ես կարծում էի, որ Օվսաննան չէր վերադարձնի այդ նամակները, եթե գիտենար նրանց բովանդակությունը: Բայց երեկ երեկո ես նրան հայտնեցի, որ նա այժմ էլ պնդում է, թե Արամազդի անունն անգամ լսել չի կամենում: Կարելի է միթե այդքան գոռոզ լինել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Բերում է խորքի դռներով Սամվելի սյուրտուկը, վարտիկը, ժիլետը, դնում է նույն աթոռի վրա և անմիջապես գնում է նույն դռներով):

ՆԱՐԳԻԶ. Ինչ արած, մենք ամենքս այդպես ենք, հպարտ: Ահա ինքը, ես կխոսեմ հետը:

ՏԵՍԻԼ 4

ՆՈՒՅՆՔ և ՕՎՍԱՆՆԱ.

ՕՎՍԱՆՆԱ. (Գալիս է շտապով խորքի դռներով): Ուշ եմ զարթնել, արդյոք: (Սամվելին): Ասա, ի՞նչ պիտի անել:

ՍԱՄՎԵԼ. Պետք է սպասել Լևոնի զարթնելուն: (Չեմոդանը կապում է, բանալին դնում է գրպանը և չեմոդանը ոտով հրելով, տանում է պատի տակ): Շտապել հարկավոր չէ, դեռ ժամանակ շատ կա:

ՆԱՐԳԻԶ. Օվսաննա, գոնե դու խնայիր մեզ այս նեղ օրերում:

ՕՎՍԱՆՆԱ. Ի՞նչ եմ արել, մայր:

ՆԱՐԳԻԶ. Էլ ի՞նչ պիտի անեիր, հորդ թողնում ես խայտառակության մեջ:

ՕՎՍԱՆՆԱ. Ե՞ս, չեմ հասկանում, մայր: (Նայում է զարմացած Սամվելին):

ՍԱՄՎԵԼ. Մայրիկն ամեն բան գիտե, ես ավելորդ համարեցի նրանից թաքցնել:

ՆԱՐԳԻԶ. (Օվսաննային): Երեխա չես, տեսնում ես, որ մեր բարեկամները մեզնից երես են դարձրել: Մենք ստիպված ենք հարգել մեզ օգնության ձեռք մեկնողին, ո՞վ էլ որ լինի նա...

ՕՎՍԱՆՆԱ. (Լուրջ): Մայրիկ, ես խնդրում եմ քեզ չխառնվել իմ գործերին:

ՆԱՐԳԻԶ. Բայց այդ միայն քո գործը չէ, այլև ամենքիս՝ մի ամբողջ ընտանիքի:

ՕՎՍԱՆՆԱ. Եթե այդպես լիներ, նա իր օգնությունը հայրիկին իմ միջոցով չէր առաջարկիր (Սկսում է անցուդարձ անել):

ՆԱՐԳԻԶ. Էհ, տղա է, ուզեց ամենից առաջ քո սիրտը շահել:

ՕՎՍԱՆՆԱ. Տեսնո՞ւմ ես, ուրեմն լավ եմ արել, որ նամակները վերադարձրել եմ: Վերջապես այդ ինձ համար մի անախորժ խոսակցություն է, թողնենք, միևնույնն է, ոչ ոք չի կարող ինձ վրա ներգործել:

ՍԱՄՎԵԼ. Արամազդն արժանավոր երիտասարդ է: Այսքանը միայն ես պարտք եմ համարում ասելու:

ՆԱՐԳԻԶ. Այո՛, ես էլ հիմա տեսնում եմ, որ շատ օրինավոր տղա է:

ՕՎՍԱՆՆԱ. (Դառը ծիծաղելով): Ահա թե ինչ, չլինի՞ թե մայր ու որդի դավադրություն եք կազմել իմ դեմ: Մայրիկ, դեռ երկու ամիս չի անցել այն ժամանակից, երբ դու արհամարհում էիր այդ մարդուն և նրա քույրերին, ի՞նչ պատահեց այժմ...

ՆԱՐԳԻԶ. Երկու ամիս առաջ այս տունն էլ լիքն էր, հիմա տեսնո՞ւմ ես:

ՕՎՍԱՆՆԱ. (Կանգ է առնում վրդովելով): Վերջապես, ի՞նչ ես ուզում ինձանից, ասա կարճ-կտրական:

ՆԱՐԳԻԶ. Ազատիր հորդ խայտառակությունից, օգնիր հիվանդ եղբորդ բժշկվելու, պահպանիր մեր տունը, որ ավերակ չդառնա:

ՕՎՍԱՆՆԱ. Այսինքն ծախեմ իմ զգացմունքները, իմ ապագան, իմ ամբողջ կյանքը, ա՞յս ես ուզում: Վաճառեմ ինձ ձեզ համար, այո՞:

ՆԱՐԳԻԶ. Էլ ինչո՞ւ համար ենք քեզ պահել, մեծացրել, որ այսօրվա օրը մեզ օգնության չհասնես:

ՍԱՄՎԵԼ. Մայրիկ, ես բողոքում եմ այդ խոսքերի դեմ:

ՕՎՍԱՆՆԱ. Թող ասի, Սամվել, թո՛ղ: Վերջապես մի օր հարկավոր էր պարզել մեր հարաբերությունները: Հետո , մայրիկ, հետո :

ՆԱՐԳԻԶ. Ես բռնություն գործ չեմ գնի քեզ վրա, ես միայն բացատրում եմ: Եթե դու կարողացար սիրել առաջին պատահածին, Արամազդն այն անառակ Ժորժից հազար անգամ բարձր է:

ՕՎՍԱՆՆԱ, (նայել է մորը խորը հանդիմանական հայացքով): Առաջին պատահածի՞ն: Լավ ասացիր, մայրիկ: Այդ խոսքերով դու դատապարտեցիր թե՛ քեզ և թե՛ հայրիկին:

ՆԱՐԳԻԶ. (Զայրացած): Օվսաննա:

ՕՎՍԱՆՆԱ. Այո, մայրիկ, եթե ես իմ սիրտը նվիրեցի առաջին պատահածին, մեղավորը դուք եք և միայն դուք: Ես այս չէի ուզում ասել, բայց որ երեսովս տվեցիր իմ ակամա սխալը, այժմ լսի՛ր դուք ինձ շրջապատեցիք ձեր շողոքորթ, հարց-կատակ ազգականներով և կազմեցիք իմ շուրջը՝ մի անմատչելի պատնեշ: Ի՞նչ է եղել իմ կյանքն այս տանը գնա ուսումնարան, եկ տուն, երբ դասերից ազատ ես, կպիր մորդ փեշերին և գնա այցելիր ծնողներիդ ազգականներին: Նստիր ժամերով տգետ ընտանիքների մեջ, լսիր նրանց հիմար զրույցները, գարշելի բամբասանքները, շատ անգամ կեղտոտ սրախոսությունները:

ՍԱՄՎԵԷ. (Մեկուսի): ճիշտ է , բոլորովին ճիշտ:

ՕՎՍԱՆՆԱ. Ես չունեի իրավունք մինչև անգամ իմ համակրած ընկերուհիների հետ ծանոթություն անելու: Հարուստի աղջիկ էի, ինչպե՞ս կարող էի աղքատներին ընկերանալ: Եվ այսպես, բռնության ճանկերում սնված, հանկարծ պատահեցի մի երիտասարդի, որ, չգիտեմ ինչպես, անցել էր ինձ շրջապատող պարիսպը: Ես չունեի ուրիշ ընտրություն անելու, չէի ճանաչել ոչ մի ուրիշ երիտասարդ, բացի ձեր ազգականներից: Այն ինչ, նեխված ճահճի մեջ ապրելով հանդերձ, ես ունեի սիրելու ընդունակ սիրտ և սիրելու ջերմ փափագ: Եվ ահա հափշտակվեցի առաջին պատահածով:

ՍԱՄՎԵԼ. Եվ այն միակ ծաղիկը քո ճանապարհի վրա դուրս եկավ ապականված ու թունավոր: Մայրիկ, Օվսաննան իրավացի է:

ՆԱՐԳԻԶ. Թող ասի, ինչ անեմ, թող նա էլ իմ գլխին թափի իր սրտի մաղձը, ինչպես քո անբախտ եղբայրը:

ՕՎՍԱՆՆԱ. Ահ, մայրիկ, ես չեմ ուզում կրկնել Լևոնի ասածները, բայց մի ցնորվածի բերանով ինքը ճշմարտությունն է խոսում: Ի նչ է եղել նրա պատանեկությունը: Մինչ քսան տարեկան հասակը դուք նրան պահեցիք խանձարուրի մեջ, հետո գրպանը լցրիք ոսկով և ուղարկեցիք մայրաքաղաք: Եվ ահա մի նավակ, որ սովոր չէր ափերի մոտ լողալու, հանկարծ ընկավ հորձանքի մեջ և... խորտակվեց: Իսկ սա՞: (Ցույց է տալիս Սամվելին): Սա ինչ է: Հայրիկը կամեցավ սրան անպատճառ վաճառական դարձնել: Ինչպես չէ, պետք է Ֆռանգուլյան առևտրական տան հռչակավոր անունը շարունակել: Գիմնազիան ավարտած չավարտած իր երկաթե ձեռը դրեց պատանու վրա ու ասաց, «դու իմն ես, դու չես հեռանալ ինձանից». Բայց Սամվելը նրանը չէր, մայրիկ և ոչ քոնը: (Շարունակում է անցուդարձ անել):

ՍԱՄՎԵԼ. (Հափշտակված): Ճիշտ է մայրիկ, ճիշտ է: Օվսաննան խոսում է իմ սրտի խորքից: Վաճառականությունը իմ հոգուն այնքան էր խորթ, որքան հայրիկի հոգուն Բեթհովենի սոնատը: Ես փախչում էի նրանից, ինչպես ժանտախտից: Ես փախչում էի և՛ քո ծայրահեղ սիրուց ու խնամքից, ինչպես շղթաներից: Ի՞նչ արած, ինձ թվում էր, որ ես օժտված եմ երաժշտական ձիրքով և իմ ամբողջ էությամբ փափագում էի նրանց ծառայել: Կարելի է, սխալվում էի, բայց գալը չհասկացաք իմ հոգին — այս է ցավալին: Այժմ ի՞նչ եմ ես: — Բարոյական մի անդամալույծ, որին շատ-շատ տեղ կտան մի գավառական օրկեստրում, և կդառնամ մինը հազարավոր պրոլետարներից: Շնորհակալ եմ, Օվսաննա, շնորհակալ եմ, դու ասացիր այն, ինչ որ վաղուց եռում էր իմ սրտում...

ՆԱՐԳԻԶ. (Մերթ ընկճվել է, մերթ գրգռվել և իրան զսպել: Այժմ գրգռված): Բավական է, բավական է, համբերությունն էլ չափ ու սահման ունի: (բաց է անում մյուս լուսամուտի վարագույրը և լամպը հանգցնում է):

(Բեմի լուսավորությունն ավելանում է):

ՕՎՍԱՆՆԱ. Այդ է, այդ է, մայրիկ, ձեր համբերությունը հատնում է ճիշտ այն պահին, երբ լսում եք ճշմարտության առաջին ձայնը:

ՆԱՐԳԻԶ. (Բարկացած): Լռի՛ր, լռի ր, ասում եմ... և եթե խելք ունիս, մեր դրության մասին մտածիր: Ահ, աստված իմ, ինչո՞ւ այսքան անբախտություն: (Գնում է խորքի դռներով):

Նախասենյակում զանգ

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Գալիս է խորքի դռներով և շտապով գնում է աջ կողմի երկրորդ դռներով):

ՍԱՄՎԵԷ. Այդ Արամազդն է:

ՕՎԱԱՆՆԱ. Թող ինձ մենակ, Սամվել: Ես ուզում եմ նրա հետ խոսել...

ՍԱՄՎԵԷ. Լսի՛ր ոչ մի զոհաբերություն, հասկանո՞ւմ ես, ավելի լավ է աղքատ լինենք, քան քո զգացմունքների գնով ապահով: (Գնում է խորքի դռներով):

ՏԵՍԻԼ 5

ՕՎՍԱՆՆԱ և ԱՐԱՄԱԶԴ

ԱՐԱՄԱԶԴ. (Գալիս է աջ կողմի երկրորդ դռներով: Տեսնելով Օվսաննային, մի փոքր շփոթվում է և իսկույն իշխում իրան: Սովորական եղանակով): Բարի լույս, օրիորդ:

ՕՎՍԱՆՆԱ. Բարի լույս: (Ձեռք չեն տալիս իրարու):

ԱՐԱՄԱԶԴ. Երևի, Սամվելն իր սենյակումն է: (Դիմում է դեպի խորքի դռները):

ՕՎՍԱՆՆԱ. Մի րոպե:

ԱՐԱՄԱԶԴ. (Կանգ է առնում):

ՕՎՍԱՆՆԱ. Ինչո՞ւ համար եք եկել:

ԱՐԱՄԱԶԴ. Լևոնի համար:

ՕՎՍԱՆՆԱ. Գիտեմ: Ես կամենում եմ իմանալ, ի՞նչն է ձեզ ստիպում այդպես հոգալ մեր մասին:

ԱՐԱՄԱԶԴ. Երախտագիտությունը դեպի ձեր ծնողները:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Գալիս է աջ կողմի երկրորդ դռներով ու շտապով գնում է խորքի դռներով):

ՕՎՍԱՆՆԱ. Եվ այն նամակները ուղարկել եք ինձ այդ զգացումներից դրդված:

ԱՐԱՄԱԶԴ. Ոչ լիովին:

ՕՎՍԱՆՆԱ. Ուրե՞մն:

ԱՐԱՄԱԶԴ. Օրիորդ, եթե կամենում եք մի անգամ ևս փորձել իմ հանդգնությունը, համեցեք: Ես ուզում էի իմ ուժերի չափ օգնել ձեր հորը գլխավորապես... ձեզ համար:

ՕՎՍԱՆՆԱ. Այսինքն, ուզում էիք ինձ կաշառել, այո՞:

ԱՐԱՄԱԶԴ. Այո՛:

ՕՎՍԱՆՆԱ. Եվ դուք այդ ասում եք առանց քաշվելո՞ւ:

ԱՐԱՄԱԶԴ. Ինչի՞ց պիտի ամաչեմ, օրիորդ: (Հեգնաբար): Ես վաճառական եմ, իսկ դուք գիտեք, որ վաճառականը առանց հաշվի բարություն չի անում: (Տոնը փոխելով): Թույլ տվեք ինձ տեսնել Սամվելին: (Ուզում է գնալ):

ՕՎՍԱՆՆԱ. Սպասեցե՛ք, այս վերջին անգամն է, որ դուք տեսնում եք ինձ: Ասացեք, խնդրեմ, ինչը ստիպեց ձեզ բաց անել Ժորժ Ադիլբեկյանի գաղտնիքը:

ԱՐԱՄԱԶԴ. Շահը, օրիորդ, շահը:

ՕՎՍԱՆՆԱ. Թողեք հեգնությունը, ես ձեզ հետ լուրջ եմ խոսում:

ԱՐԱՄԱԶԴ. Եվ ես պատասխանում եմ ամենայն լրջությամբ: Բարոյական շահն էր, որ ինձ ստիպեց պատռել այդ մարդու դիմակը: Վերջապես, չէ՞ որ դուք ինքներդ պահանջեցիք, միթե մոռացե՞լ եք:

ՕՎՍԱՆՆԱ. Իսկ ես կասեմ, որ այդ բարոյական շահ չէր, այլ փոքրոգի մարդու նախանձ, անզոր չարություն հակառակորդի դեմ:

ԱՐԱՄԱԶԴ: Թող ձեր ասածը լինի, բայց ճշմարտությունը գոնե այժմ պարզ է ձեզ համար:

ՕՎՍԱՆՆԱ. Ո՞վ ասաց ձեզ, որ այն ճշմարտությունը ցանկալի էր ինձ համար: Ո՞վ խնդրեց ձեզ անկոչ հյուրի պես մտնել մի օտար խնճույք և սուգ դարձնել ուրիշների ուրախությունը:

ԱՐԱՄԱԶԴ. Բարեկամի սուրբ պարտականությունը ստիպեց ինձ այդ անել: Օրիորդ, ձեր երևակայածը խնճույք չէր: Այլ նախերգանք մի դրամայի, ուր դուք պիտի կատարեմ իմ դժբախտ հերոսուհու դերը մինչև ձեր կյանքի վերջը:

ՕՎՍԱՆՆԱ. Բայց ես այդ չգիտեի ու երջանիկ էի. ինչու բաց արիք իմ աչքերը:

ԱՐԱՄԱԶԴ. Օրիորդ Օվսաննա, այդ խոսքերը, կարծես, լսում եմ ձեր հոր բերանից: Ինչպես նա, դուք ևս բարվոք եք համարում ապրել ստի և կեղծիքի մեջ, քան թե իմանալ գառը ճշմարտությունը: Այո, խաստովանում եմ, ծանր հարված եմ տվել ձեզ: Դուք գտել էիք մի փայլուն խաղալիք »և ուրախ էիք նրանով: Ես խլեցի ձեզնից այդ սիրուն առարկան, զարկեցի գետնին, չարդ ու փշուր արի, և դուք տեսաք ինչ աղբով էր լեցված նա: Այո, իհարկե, շատ խիստ էր իմ կողմից, շատ անողորմ, բայց մի հինգ տարեկան երեխայի և ոչ ձեր վերաբերմամբ: Չէ որ վաղ թե ուշ պետք է իմանայիք այդ գեղեցիկ պաճուճապատանքի զզվելի պարունակությունը:

ՕՎՍԱՆՆԱ. Թող իմանայի, ո՞ւմ ինչ, վերջապես, ո՞րն է ձեր մեջ մաքուր, որը չունի յուր անցյալում այս կամ այն արկածը:

ԱՐԱՄԱԶԴ. Ամենքը: ամենքն ունեն, օրիորդ, սակայն այն տարբերությամբ, որ Ժորժ Ադիլբեկյանինը արկած չէ, այլ հանցանք է:

ՕՎՍԱՆՆԱ. Թեկուզ հանցանք: Սիրելով նրան, ես կարող էի ներել այդ հանցանքն այն ժամանակ, երբ չէի կարող չներել:

ԱՐԱՄԱԶԴ. (Հեգնաբար ժպտալով): Այո, ամուսնանալուց հետո, այնպես, ինչպես ներում են շատ ողորմելի կանայք իրենց ամուսինների աններելի անցյալը: Բայց այդ ի՞նչ վիճակ կլինր ձեզ համար, ի՞նչ ամուսնական կյանք մի մարդու հետ, որ իր հարազատ երեխային շպրտել է փողոց, ինչպես լուցկիների մի դատարկ տուփ:

ՕՎՍԱՆՆԱ. (Ազդվել է Արամազդի վերջին խոսքերից: Մեկուսի): Նա իրավացի է:

ԱՐԱՄԱԶԴ. Եվ ո՞վ կարող էր երաշխավորել, եթե այն մարդը, որ մի անգամ շպրտել է մեկ զավակին, նույն դրությամբ չի շպրտիլ և մյուսներին: Վերջապես դուք, օրիորդ, դուք, կարող էիք կրել մի դժբախտ մոր և դժբախտ զավակ: Հավիտենական անեծքի լուծը, բարոյական կլիներ ձեր ամուսնական կյանքը, կարոտ կլինեիք ձեր խիղճը համարել մաքուր...

ՕՎՍԱՆՆԱ. (Ընկճված): Ոչ...

ԱՐԱՄԱԶԴ. Ահա, տեսնում եք. այժմ դիտեցեք ինքներդ, ունեի, արդյոք իրավունք ձեզ ազատելու այդ սոսկալի ապագայից, (Տոնը փոխելով): Բայց, ներեցեք, Սամվելն ինձ սպասում է: (Ուզում է գնալ):

ՕՎՍԱՆՆԱ. Մի վայրկյան: Դուք ձեր նամակներում, ի միջի այլոց, խոստանում եմ օգնել և՛ Սամվելին, այո:

ԱՐԱՄԱԶԴ: Այո: Ես խոստանում եմ օգնել նրան իր երաժշտական կրթությունը շարունակելու այնքան ժամանակ, որքան կամենում է:

ՕՎՍԱՆՆԱ. Եվ այժմ, իհարկե, իմ վարմունքի պատճառով, Սամվելը պիտի զրկվի ձեր օգնությունից, այո՞:

ԱՐԱՄԱԶԴ. (Դրական): Ամենևին:

ՕՎՍԱՆՆԱ (Զարմացած): Ինչպե՞ս, դուք դեռ:

ԱՐԱՄԱԶԴ. Ես պիտի կատարեմ իմ բոլոր խոստումները, որ արել եմ այդ նամակներում:

ՕՎՍԱՆՆԱ. (Ավելի ազդված): Բոլո՞ր:

ԱՐԱՄԱԶԴ. Բոլորը:

ՕՎՍԱՆՆԱ. Առանց որևէ ակնկալության:

ԱՐԱՄԱԶԴ. Առանց որևէ ակնկալության և նույնիսկ հակառակ ձեր կամքի:

ՕՎՍԱՆՆԱ. (Խորը զգացված, ձեռք սեղմում է սրտին): Ա՛հ: (Մի ձեռը հենում է բազկաթոռի մեջքին):

ԱՐԱՄԱԶԴ. (Վախեցած, մի քայլ մոտենում է Օվսաննային): Ի՞նչ պատահեց:

ՕՎՍԱՆՆԱ. Ոչինչ, ոչինչ, սրտի բաբախում (Լռություն: Ներքին մաքառում): Ներեցեք... Ես ձեզ վիրավորել եմ անտեղի: Տվեք ինձ ձեր ձեռը... Ես սխալված եմ եղել... (Ձեռը մեկնելով):

ԱՐԱՄԱԶԴ. (Ուրախ, ազդված, արագ մոտենում և սեղմում է Օվսաննայի թույլ մեկնած ձեռը): Ուրեմն, դուք ինձ չեք արհամարհում, այո , ուրեմն, ես...

ՕՎՍԱՆՆԱ. Գնացեք, Սամվելը ձեզ սպասում է, կարող եք ուշանալ...

ԱՐԱՄԱԶԴ. (Ուրախությունից շփոթված, կարմրած, գնում է խորքի դռներով):

ՕՎՍԱՆՆԱ. (Նստում է առաջին պատահած աթոռի վրա և մտածում):

ՏԵՍԻԼ 6

ՆՈՒՅՆՔ, ՍԱՄՎԵԼ, ՆԱՐԳԻԶ և մերթ ընդ մերթ ՆՈՒՆՈՒՖԱՐ

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Գալիս է խորքի դռներով, մի ուրիշ լիք չեմոդան ձեռքին, որ դնում է առաջինի քով):

ՕՎՍԱՆՆԱ. Լևոնը զարթնե՞ց:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. Գնում եմ զարթեցնելու, (Գնում է ետ խորքի դռներով):

ՆԱՐԳԻԶ. (Եկել է խորքի դռներով նուևուֆարից անմիջապես հետո): Կամացուկ խփիր դռներին, ինքը կզարթնի: (Դառնում է Արամազդին և. շարունակում է հետը խոսել տխուր, բայց սիրալիր):

ԱՐԱՄԱԶԴ. (Գալիս է խորքի դռներով Նարգիզի հետ: Դեմքի արտահայտությունը թեև. լուրջ է, բայց զվարթ: Նայում է հաճախ Օվսաննային, բայց չի համարձակվում մոտենալ):

ՍԱՄՎԵԼ. (Գալիս է խորքի դռներով և անմիջապես մոտենում է Օվսաննային):

ՕՎՍԱՆՆԱ. (Դժկամությամբ): Թող ինձ, ի սեր աստծու (Վեր է կենում, մոտենում է լուսամուտին և նայում է դեպի դուրս):

ՆԱՐԳԻԶ. Գնամ, այն մարդուն զարթեցնեմ, որ վերջին անգամ տեսնի անբախտին: (Գնում է աջ կողմի առաջին դռներով):

ՍԱՄՎԵԼ. (Մոտեցել է Արամազդին): Ուշադրություն չդարձնես հայրիկի խոսքերի վրա, վերջին օրերը նա հոգսից շատ ներվային է դարձել:

ԱՐԱՄԱԶԴ. Հանգիստ կաց:

ՏԵՍԻԼ 7

ՆՈՒՅՆՔ ԵՎ ԱԹԱՆԵՍ

ԱԹԱՆԵՍ. (Գալիս է աջ կողմի առաջին դռներով դարձյալ խալաթով: Նարգիզին հանդիպելով դռների մեջ): Ո՞ւր է, թողեք տեսնեմ, հետո տարեք:

ՆԱՐԳԻԶ. Համբերիր:

ԱԹԱՆԵՍ. (Արամազադին տեսնելով, զայրանում է): Ո՞վ խնդրեց նրան, որ այստեղ գա:

ՆԱՐԳԻԶ. (Առանձին Աթանեսին): Բարևիր, լավ չէ:

ԱԹԱՆԵՍ. Բայղուշի պես գլխիս վայ էր կանչում, հիմա բերել եք, որ տեսնի իմ անբախտությունը և ուրախանա, չէ՞: (Դառնալով Արամազդին): Դո՛ւրս, դուրս իմ տնից:

ՍԱՄՎԵԼ. (Մոտեցել է հորը, բռնում է նրա թևը): Հայրիկ, հանգստացիր, այսօր նա մեր միակ բարեկամն է:

ԱԹԱՆԵՍ. Թող գնա, չեմ ուզում այդպիսի բարեկամներ: Նա իր մտքում ինձ հիմար է համարում, ծաղրում է: Այնպես չէ Նարգիզ:

ՆԱՐԳԻԶ. Ոչ սխալվում ես:

ԱԹԱՆԵՍ. (Զարմանալու է): Հե՞:

ՆԱՐԳԻԶ. Արամազդը մեր մասին շատ է հոգում: Նա մեզ անկեղծ սիրում է:

ԱԹԱՆԵՍ. Ի՞նչ, մայր ու որդի ուզում եք ինձ խելքից հանե՞լ, հե՞, Օվսաննա, լսեցի՞ր ինչ ասացին դրանք:

ՕՎՍԱՆՆԱ. Հայրիկ, ես Արամազդին այսօր միայն ճանաչեցի:

ԱՐԱՄԱԶԴ. (Այս խոսակցության միջոցին կանգնած է հեռու և տեսարանը դիտում է լուրջ ու համեստ: Օվսաննայի խոսքերը նրան ուրախ ցնցումներ են պատճառում):

ԱԹԱՆԵՍ. (Ավելի զայրանալով): Ուրեմն, դուք խոսքը մի եք արել ինձ խայտառակելու նրա մոտ, հե՛: Որ այդպես է, ամենքդ կորեք, ամենքդ, ես ձեզ անիծում եմ, (Ուզում է գնալ աջ կողմի առաջին դռներով, բայց Նունուֆարի աղաղակը լսելով, կանգ է առնում):

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Բեմի ետևից բարձրաձայն): Այստեղ եկեք, շուտ, տեսեք ինչ է անում,

ՆԱՐԳԻԶ. (Շտապով գնում է խորքի դռներով):

ԱՐԱՄԱԶԴ. (Հետևում է Նարգիզին):

ՍԱՄՎԵԼ (Հետևում է Արամազդին):

ԱԹԱՆԵՍ. Տեսեք ինչ պատահեց, (Գալիս է բեմի կենտրոնը):

ՕՎՍԱՆՆԱ. (Նախազգացել է մի վատ բան): Հայրիկ, դու գնա քո սենյակը: (Վազում է դեպի խորքի դռները և սարսափած հետ է կանգնում):

ՏԵՍԻԼ 8

ՆՈՒՅՆՔ ԵՎ ԼԵՎՈՆ

ԼԵՎՈՆ. (Գալիս է խորքի դռներով ժիլետով, գիշերվա շապիկով, հողաթափերով: Նոսր մազերը գզգզված են, դեմքն այլանդակված: Արամազդն ու Սամվելը բռնած են, նրա աջ ու ձախ թևերը): Սուտ է... սուտ է... կարմիր օձն էր:

ԱՐԱՄԱԶԴ. Ամոթ է, Լևոն, ամոթ է... Նստիր այստեղ, (Նստեցնում է բեմի խորքում մի աթոռի վրա, երեսը դեպի հասարակությունը):

ՍԱՄՎԵԼ. (Մոտեցել է Օվսաննային, կիսաձայն): Ուզում էր կախվել, հազիվ ազատեցինք:

ՆԱՐԳԻԶ. (Սարսափահար): Շուտ տարեք, հեռացրեք, չի կարելի նրան այստեղ պահել:

ԱՐԱՄԱԶԴ. (Նունուֆարին ներերժիկ տոնով, կիսաձայն): Գնա շո՛ւտ, երկու կառք կանչիր:

ՆՈՒՆՈՒՖԱՐ. (Շտապով գնում է աջ կողմի երկրորդ դռներով):

ԱՐԱՄԱԶԴ. (Սամվելին): Իրերը տանենք դուրս, հետո ես նրան կբերեմ: (Նարգիզին): Մայրիկ, եթե կարող եք, հագցրեք նրան: (Վերցնում է չեմոդաններից մեկն ու գնում է աջ կողմի երկրորդ դռներով):

ՍԱՄՎԵԼ. (Վերցնում է երկրորդ չեմոդանը և գնում Արամազդի ետևից):

ՆԱՐԳԻԶ. (Օվսաննային.): Գնա պիջակն ու կոշիկները բեր:

ՕՎՍԱՆՆԱ. (Շտապով գնում է խորքի դռդերով):

ԼԵՎՈՆ. (Մինչ ամենքն իրարանցման մեջ են, նայել է աջ ու ձախ խորամանկությամբ):

ԱԹԱՆԵՍ. (Ապշած նայում է մերթ մեկին, մերթ մյուսին): Ա՛ա :

ԼԵՎՈՆ. (Հարմար վայրկյան որսալով, գաղտագողի մոտենում է պատշգամբի դռներին): Կարմիր օձը, կարմիր օձը... Ազատություն: (Կատաղի ծիծաղ), հա, հա, հա, ազատվեցեք... (Վազում է պատշգամբ և իրան ձգում է փողոց):

ԱԹԱՆԵՍ. Բռնեցե՛ք, բռնեցե՛ք: (Մնում է անշարժ, ապշած, քարացած):

ԱՐԱՄԱԶԴ. (Շտապ վերադառնում է աջ կողմի երկրորդ դռներով ճիշտ այն վայրկյանին., երբ Լևոնն արդեն պատշգամբի վրա է): Լևո՜ն, Լևո՜ն: (Վազում է բռնելու, չի հասնում): Ա՛հ, նա իրան գցեց փողոց: (Վազում է դուրս աջ կողմի երկրորդ դռներով):

ՆԱՐԳԻԶ. (Ճչալով, նախ վազում է դեպի պատշգամբ, իսկույն հետ է գալիս): Որդիս, որդի՛ս: (Վազում է աջ կողմի դռներով):

ԱԹԱՆԵՍ. (Մի քանի վայրկյան բեմի վրա մենակ է):

ՕՎՍԱՆՆԱ. (Գալիս է խորքի դռներով, Լևոնի պիջակը, գլխարկն ու կոշիկները բերելով): Ի՜նչ պատահեց: (Հասկանում է բանի էությունը: Ճչում է): Ա՛հ: (Բեռներից բաց է թողնում իրերը հատակի վրա: Ուզում է նույնպես վազել աջ կողմի երկրորդ դռներով, հանդիպում է Արամազդին բեմի վրա):

ԲԵՄԻ ՀԵՏԵՎՈՒՄ, (Աղմուկ, իրարանցում, Նարգիզի ճիչն ու աղաղակը):

ԱՐԱՄԱԶԳ. (Գալիս է աջ կողմի երկրորդ դռներով: Գունատ է, դողում է): Սպանվեց:

ԱԲԱՆԵՍ. ՕՕ, բայղուշ, ինչու դո՞ւ բերիր այդ չար լուրը: Ա՛հ: Ձեռը տանում է կրծքին, տատանվում է և. թուլանում, ընկնում է բազկաթոռի վրա: Գլուխն անզոր թեքվում է կրծքին:

ՕՎՍԱՆՆԱ. Պապա, պապա: (Վազում է դեպի հայրը) Ուշքի եկ:

ԱՐԱՄԱԶԴ. (Մոտենում է Աթանեսին, նայում տխուր): Նա կաթվածահար եղավ:

ՕՎՍԱՆՆԱ. Քանդվեց մեր տունը, ավերակ դարձավ:

ԱՐԱՄԱԶԴ. Մենք այդ ավերակների վրա կշինենք նոր տուն:

Վարագույր